

100

70

ԱՐՈՒԵՍ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏՍ

ԱՐԿԱՅԵՆ ԱՄԲԱՐԱՆԵՅ

ԳՐԵԱՑ

Մ. Ս. ԳՈՐԲԻԷԼԵԱՆ

ՆԻՒՆՈՐԻ

ՏՊԱՐԱՆ Մ. Ս. ԳՈՐԲԻԷԼԵԱՆ

1891

808.5 | 5645

4-13 | *Supp. July, 18*

Exhibit sept. 18
и не пунди б. утиску....

808.05

9-13

✓

ՀԱՅԿԱՅԻՆ Է. 1881 Ձ.

ԱՐՈՒԵՍ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏՍ

ԱՐԳԱՅԻՆ ԳԱՐԵԱՐԵՆԵՑ

ԳՐԵԱՑ

Մ. Ս. ԳԱՐԻԲԵԼԵԱՆ

5645

21036

ՆԻՒ ԵՈՐԻ

ՏՊԱՐԱՆ Մ. Ս. ԳԱՐԻԲԵԼԵԱՆ

1881.





ԿԸ ՆՈՒՐԵՄ

ՉՄԱՏԵՆԻԿՍ

ԷՍ ԱՋՆԵՐ ԵՒ ՎԵՐՄԵՐՈՍ

ԲԵՐԵՎԵՄԵՆՆ

ՊԸՏ. ՄԸՆԸՄԻ Կ. ՓԸՓԸԶԵԸՆԻ

Մ. Ս. Գարրիէլեան


ՅԱՌԱՅԱԿԱՆ

Պարզէ ոմանց նոր ինչ թուի եթէ ըսեմք թէ բարձրաձայն ընթերցումն է արուեստ յոյժ դժուար և յոյժ կարեւոր: Այս արուեստի գործնական կարեւորութիւնն խորապէս զգացուած է յեւրոպա և յԱմերիկա, ուր ի կրթութեան հաստատութիւնս կը նկատուի այն իբրև մին էական տարեւաց դաստիարակութեան և մեծ իմամօզ կ'ուսուցուի:

Հարկ չեմք համարիր երկարօրէն ցուցնել սառ զբազմազ իմի օգտակարութիւն բարձրաձայն ընթերցելու և տաննախօսելու կրթութեան. այնու կը մարդուին և կը զօրանան ձայնն, թոքք և յիշողութիւնն միանգամայն, բնաիր գրուածներ ընթերցելու և իրերան ուսանելու փափաքն կ'արժարժի, գրական ճաշակն կը զարգանայ, լու գրելու և լու խօսելու կրթութիւն կը ստացուի շնորհիւ որոյ կրնայ սք ընկերական շրջանակաց մէջ զընահատելի առաւելութեամբք փայլիլ:

Որովհետև Հայ վարժարանաց մէջ, մանաւանդ յամաց ինչ հետէ, առօգանութեան արուեստին իւր արժանաւոր սեղին ընծայելու միտումն կը նշմարուի, տաննախօսութեան արուեստին վերայ դասագիրք մի կրնայ միանգամայն զայն միտումն զօրացունելու և զգացեալ պակաս մի ընլու ծառայել: Այս համոզմամբ պատրաստեցինք զներկայս, դասագիրք սեղմ և հոմ, որ, յուսամք, ազգային ուսուցչաց բարեմիտ և ներողամիտ ուշին պիտի արժանանայ:

Մ. Ս. Գարբիէլեան



Մ Ո Ւ Տ Ք

ՀԱՅԵՐԷՆՆ

ԻՐԻՆԻ ԱՏՆԵԱԽՕՍԵԱԸՆ ԼԵԶՈՒ

Ա

ՄԻՆՁ շեւ էր լեզուստանս թիւնն, ի գովեստ մեր ազգային լեզուն կը սնդէին ոմանք թէ Հայերէնն Ազամայ լեզուն է, և բոլոր լեզուաց նախամայրն: Այժմ աւելի դրական ազացոյցներով կարելի է նշանակել աւելի գործնական գերազանցութիւններ Հայ լեզուն: Արդարեւ Հայերէնն, ըստ ձեռնհաս վկայութեան Փրոֆ. Գառիէտի նման լեզուագիտի, է մին յերկու ճոխազոյն լեզուաց աշխարհի, և իւր արմատական առատութեամբ՝ թերեւս գեր ի վերոյ քան գյունարէնն անդամ:

Հայերէնն գերազանց է նաեւ իւր մեծ յարմարութեամբ առեւտրաստութեան: Ի գէտ կը թուի մեզ բուսական երկարօրէն բացատրել զայնս ի մուսս մեր գործոյ վասն զի մեր ազգային լեզուն գեւ քննուած և դատուած չէ այս սեռակէտէն, և անհմուտք ոմանք զայն անընդունակ կը կարծեն առեւտրաստութեան:

Բ

Պերճարան և Հզոր առեւտրաս լինելու Համար մարդ մտքի, սրտի և բնասորութեան ինչ ինչ յատկութիւններ պարտի ունենալ: Արդարութեան և Հշմարտութեան սէրն, բարոյն և գեղեցկին աւելնն, խորին Համոզում:

ներն և բարձր տեսութիւններն եթէ կը պահպին մէկուն, անկարելի է նմա պերճախօսել. անկարելի է նմա ձայնի և եղանակի այն թափանցող և շարժող սլոն ունենալ որ երբեմն ցած և տկար ձայնի մէջ անգամ կը յայտնուի : Բայց սարա է ընդունիլ նաև թէ ընթեանլու և խօսելու կրթութիւնն հզօրացայն կը դործէ հզօր ստենախօսն, և ոչադրութեան արժանի կ'ընէ նայն ինքն հասարակ կամ ստորին հրապարակախօսն :

Թէ Հայ ցեղին մէջ կա՞ն շատեր օժտեալ այն ներքին պայմանօք որ հարկուոր է պերճախօսին, դայն շունիմք տակ : Ընկերական պայմանք և կրթական վիճակ թոյլ տուած չեն դեռ որ Հայ ցեղն իւր խօսելու կարողութիւններն լիովին ի հանդէս բերէ : Մեր ապաւորութիւն այն է թէ Հայն նշանաւոր կերպիւ ընդունակ է պերճախօսելու :

Գալով քաջ ստենախօսութեա արտաքին հանգամանաց, որ մեր գործոց մասնաւոր նիւթն է, համարձակ կ'ըսեմք թէ հայերէնն, ձայնի և արտասանութեան տեսակէտով, նախանձելի յատկութիւններ ունի :



Աստենախօսին սարա է ոչ միայն յատկօրէն արտասանել բառերն և դայնս լսելի ընել ունկնդրաց հետաւորագունին անգամ, այլ և իւր ձայնի և եղանակի մէջ գնել այն զօրութիւն կամ տկարութիւն, այն երկարութիւն կամ կարճութիւն, այն մեծութիւն կամ փոքրութիւն զօր իւրաքանչիւր բառի մշտափոփոխ նշանակութիւնն կը պահանջէ : Բառարանն երբէք չէ կրցած և չպիտի կրնայ նրջանակել այս ինչ տուեալ բառի բոլոր նշանակութիւններն կամ նշանակութեանց անհուն եղանակաւորութիւններն. ստենախօսին ձայնն, առողանելու եղանակն է որ պիտի տայ դայնս : Սրինակի համար մեծ բառն մեծու-

թեան որոշ շափեր շցուցներ, բայց ատենախօսան ամէն անգամ որ այդ բառ կ'արտասանէ, իւր առողանութեան շնորհիւ կրնայ ցուցնել՝ մերձաւորապէս բայց բառ բառաւականին՝ անոր շափերն որք բառ տեղւոյն կը տարբերին:

Ճարտար առողանողն կարող է բառին հազարդել այն երանգ և ատարձան զոր իմաստն և տեղն կը պահանջեն, և սակայն զայս աւելի լաւ և աւելի ազդեցիկ կերպիւ կրնայ ընել եթէ բառին ձայնական հանգամանքն ևս յարմար լինին: Օրինակի համար առնունք խ ի ս ա բառն փոփոխելի է հնչել զայն այնքան տարբեր եղանակօք որ նշանակէ «փոքր մի խխա» — «բաւական խխա» — «կարի խխա» — «յանչափա խխա» և այս շարս զլխաոր ատարձաններուն մէկէն ի միւսն փոխանցական եղող անհուն ատարձաններ: Զայս ընելու մէջ, եթէ փորձեմք, պիտի գտնեմք թէ մեր զլխաոր օգնականն է Խ տառն, որում կրնամք առ խտտութեան անհուն զանազանութիւն: Բայց եթէ հայերէնի մէջ խ ի ս ա բառին նշանակութիւնն առող բառն գործողարար Լ ի ս ա եզրով լինէր կամ, աւելի գործողարար Լ ի մ ն, յայնժամ պիտի տեսնէինք թէ բառն որքան կորուսած պիտի լինէր իւր ատենախօսական յարմարութենէ: Ընդհակառակն առնունք մ ե ղ մ բառն հնչենք զայն, և պիտի զգանք թէ հնչմանն մէջ կայ իմաստին պատասխանող բան մի՝ կրրնամք այդ մ ե ղ մ բառին առ մ ե ղ մ ա շ թ է ա ն անհուն ատարձաններ առողանութեան շնորհիւ:

Արդ կը մնայ քննել թէ հայերէնի մէջ այսպիսի բառեր բացառութիւնն են թէ, ընդհակառակն, ձայնական հանգամանք բառից բաւական յաճախ կը պատասխանեն բառից նշանակութեան:



Հայերէն լեզուն իրեն յատուկ ծննդարանութիւն մի չունի անշուշտ, այլ կը հարատակի այն օրինաց որոց հա-

մածայն բառք և լեզուք ի գոյ եկած են : « Ի գոյ եկած են » կ'ըսեմք, որովհետև լեզուք գործարանաւորութիւնք են աճող, ծերացող ու մեռնող՝ ոչ թէ արուեստական յօրինուածներ :

Ոչ միայն լեզուն այլ և բացաարութեան ուրիշ ամենայն միջոցք օրէնք ունին : Օրինաց ինչ զօրութեամբ է որ ծիծաղն այս ինչ ոգեկան մասնաւոր վիճակի բացատրութիւնն կը լինի ամէն ազգի և ամէն դարու մէջ : Հընար չէ որ լացն զուարթութիւն, և հառաչանքն խնդալից զգացում բացատրէ :

Արդ ճիշտ այն օրէնք որ դէմքի մկանանց կուտայ այս ինչ կամ այն ինչ կձկումներն ընել որովք արտայայտուին երկիւզ զամ սէր, բարկութիւն կամ զուարթութիւն, զարշաք կամ ախորժանք, և այլն, կուտայ նաև լեզուի, շրթանց, հագաղի, քմաց, սնդաց և խոշակի, այսինքն յօշուոր բարբառի գործարանաց, այս ինչ կամ այն նիչ կձկումներն ընել ճիշդ այն պահուն արտոյ զգացմանց հաւատարիմ թարգմանութիւնն բարբառել տալու համար : Ըստ այսմ՝ բառք — արմատականք և նախնականք — հետի են պարզապէս կամայական նշաններ կամ ձայներ լինելէ : Երբ մարդկային էակք սկսան բառեր արտասանել՝ առարկաներ կամ վիճակներ նշանակելու համար, օրինաց ինչ համածայն բարբառեցան : Բառն իւր ձայնական հանգամանօք եզու իրր ցոլացումն այն տպաւորութեան զոր դիտեալ կամ ունկնդրեալ առարկայն գործեց բարբառողին հոգւոյն վերայ :

Մարդկային լեզուաց նախնական բառերն անուշա մաշած և աղաւաղած են յընթացս դարուց, ուստի և դիւրին չէ ի նոսա նշմարել սկզբնական տիպն, բնական դիմագծութիւնն, և ցուցնել այն ներքին համածայնութիւն որ կայր բառերուն ձայնական հանգամանաց և նոքօք նշանակեալ վիճակաց մէջ : Նախնական և այս մաօք

բնական բառերու ոչ սակաւուց տեղ յետոյ դրուած են առաւել կամ նուազ զարգացեալ և արուեստական կազմութիւն ունեցող բառեր: Նաեւ, նախնական բառից ոմանց սկզբնական նշանակութիւն փոխուելով ուրիշ ամամբ դորձածուած են: Ի վերայ այսր ամենայնի ամէն լեզուի մէջ ալ կան բազում բառեր որք տակաւին կը պահեն սկզբնական զիճակն, և զողջես ձայնական պատկերներ են զազգափարայ:

Այս տեսակէտէն Հայերէն լեզուն մասնաւոր ուսման առարկայ ըրած եմք ի բազում ամաց հետէ և կը համարձակիմք յուսալ թէ բազղաաական քննութիւնք պիտի ցուցնեն թէ Հայերէնն, բնական կազմութեան և հետեւողէս ասեւնախօսական տեսակէտով առաջին լեզուն է կամ մին յառաջնոց:

Հայերէն լեզուն կարի հին և մաշած լեզու է, սակայն և այնպէս նախնական բառերու մեծ դանձ մ'ունի առաւել կամ նուազ անվթար մնացած: Հարիւրներով կրնամք համբել Հայերէն բառեր որոց ձայնական կազմութենէն զուշակելի է թէ որպիսի նշանակութիւն պարտին ունենալ այդ բառեր: Կ'ըսեմք «որպիսի» վասն զի բանն, որքան և բնական լինի, շեմք կրնար բսել թէ ճիշտ պատկեր է իրին և թէ շէր կրնար ուրիշ ձայն մի նայնքան յարմարութեամբ արտայայտել նոյն նշանակութիւն: Միայն սա կ'ուզեմք հաստատել թէ խիտ և զօրաւոր տառերն մտած են մեծ, խոշոր, զօրաւոր տառեր կաներու նշանակիչ բառերու մէջ, իսկ ձայնի փափուկ և մեղմ տարրերն՝ փոքրիկ, փափուկ, տկար տառեր կաներու բացատրիչ անուանց մէջ:

Յայտ է թէ փ, ո, խ, շ, հ, շ, ջ, փ, տառերն տեւելի զօրաւոր են քան լ, մ, բ, ծ, ն, վ: Արդ անուամբ արմատական և նախնական բառեր և քննեմք այս տեսակէտով: Արդէն զխակեցինք խիստ և մեղմ բառերուն ըր

նական կաղճու թիւնն : Առնունք ի ս շ ս ր և մ ա ն ր բա-
 սերն . ի և շ տասերն որքան որ բնական կը գործեն ա-
 սաջինն , մ , ն և ր ալ՝ երկրորդն : Նոյն բանն կը տես-
 նուի թ ա ն ձ ր և ն ս շ ր ր բասերուն մէջ . թ ա ր ձ ր ին
 չնչումն ալ թանձրութիւն մ'ունի , ինչպէս ն ս շ ր թ' ին
 նուրբ բան մի : Այսպէս են նաեւ ի ս ս ր և ձ ա ն ձ ա ղ ,
 դ ժ ա ր և ղ ի ս ր , ժ ի ր և ձ ս յ լ : Հնչմունք այնքան
 բնական հակադրութիւններ կը ներկայացունեն որքան ի-
 մասաք այս բառից : Հնչենք հետեւեալ բառերն— ս շ , շ ա ր ,
 ժ ա ն ա , ք ա ր , ք ա ջ , կ ս շ , կ ս ի շ , ի ս ս ժ ս ,
 դ ա ժ ա ն , ժ ա յ ս , լ և ա ս ն , ժ ի ս ր , ի ս ս ս վ , հ և-
 ս ի , ի ս ս ս ն , ր ս ս ն , հ ր և լ , ի ս ղ և լ , ի ս ր և լ ,
 ճ ղ ն և լ , ի ս ս ժ և լ , պ ն ղ և լ , ս ս ս տ և լ , հ ա ս-
 տ և լ , մ ի ս և լ :

Յայտնի է թէ ձայներն կը ներդաշնակին իմաստից
 հետ : Այժմ արտասանենք սերիչ ձայնական հանդամանք
 ունեցող բառեր — մ և ղ կ , մ և ղ ր , ա ն ս յ շ , ձ ի լ ,
 ձ ա ղ ի կ , կ ա ի կ , վ ա ի ա , կ ձ ձ ի , յ ս շ ի կ , վ ճ ի տ ,
 ր ի ձ , ս ի ն , ձ ս յ լ ,

Նոյնպէս ինքնայայտ ներդաշնակութիւն մի չե՞նք ըզ-
 գար այս ձայնից և նշանակութեանց միջեւ :

Բասերու բնականութիւնն դատելու համար բաւա-
 կան շէ փնտուել միայն իրտա և մեղմ, զորաւոր կամ տը-
 կար աստերու ներկայութիւնն , այլ գիտել բառին ամ-
 բողջ կազմն ձայնաւորօք հանդերձ , բազմայնից յաջոր-
 դելու եղանակին մէջ , տասերուն և վանկից իրարու և-
 տեւէ զլրբելու կամ բնդ քարչ երթալու , և այլ անբա-
 ցատրելի բայց զգալի եղանակաց մէջ : Օրինակի համար
 գ լ ս ր ի լ , ս ր ա ն ա լ , ս լ ա ն ա լ , լ ա ղ ր ձ ս ն , բա-
 սերն զօրութեան հետ արագութեան եւ ս զարգափարն կը
 պատկերացունեն զ լ ս , ս ր ա , ս լ ա ղ ա ղ ր , մէկ վանկ լի-
 նելով և արագապէս տառ առաի յաջորդելով . և եթէ ոք

անդիտութեամբ հնչէ դ ք լ օ ր ի լ, ս ք ր ա ն ա լ, ս ք լ ա ն ա լ, լ ք ս ք ր ծ ա լ ն, կք ջլատէ և խեղ կք դործէ այդ սքանչելի բառերն:

Անտարակոյս կարելի է բազում բառեր ցուցնել որք լաւ շեն համաձայնիր վերի օրինաց: Սակայն մեք բացառութիւններն, ոչ սակաւաթիւ, շենք ժխտեր: Մեծ զարմանք պիտի լինէր եթէ յընթացս այնքան հազարաւոր տարիներու, բառերու ամէնն սրահած լինէին իրենց բնական ընտանիքի մէջ: Տակաւին զարմանալի է որ այնքան բազմաթիւ են բնականաբար բառեր մեր լեզուի մէջ, ինչպէս պիտի տեսնեմք:



Հայերէնի մէջ մասնիկք եւս վերոյիշեալ օրինաց առ հասարակ համաձայն կերպիւ բացատրիչ են: Մն ձայներն մեր լեզուի մէկ սքանչելիքն է: Մն հնչումն յոյժ բնական կերպիւ կք սրտակերացունէ մտնութեան, փափկութեան, անորոշութեան գաղափարներն: Կք կցուի ս, ի, ե ք ք արմատներուն և կք կերտէ ս մ ն, ի մ ն, ե ք բ մ ն, բառերն որք մէկուն, բանի մի և ժամանակի մի անորոշ միտքերն կուտան: Նայն մն հնչման շնորհիւ է որ ի մ ն կ'ընկերանայ այլ և այլ մասանց բանի և նոցա կընծայէ անորոշութեան, կիսկատարութեան փափուկ բայց զգալի եզանակաւորութիւն մի — օրինակի համար կ'ըսուի «կամէր իմն», «Հաւանեցաւ իմն», «Այսպէս իմն երեւի» «Աւելորդ իմն էր», բացատրութիւններ որք կատարեալ «կամք», «հաւանութիւն», «այսպէս» կամ «աւելորդ» լինիլ շեն արտայայտեր: «Իմն»ի իմաստն այդ բառերուն կցելու համար երկար բառեր կամ խօսքեր պէտք կը լինին: «Կարծեմ թէ կը կամէր» «Գրեթէ հաւանեցաւ» «Կրնամ ըսել թէ աւելորդ էր» բացատրութիւններն ոչ նոյն ճշգրտութիւնն կամ երանգն ոչ նոյն շնորհն ունին:

Նոյն մ'ն է որ սւմն մասնկան ձեւով դործածուած է երբ մ'ն պարզապէս դրուելով բառն դժուար պիտի հնչուէր: Հնչ սւմն, փսփսխ սւմն, կոչ սւմն, ըսուած է վասն զի կոչ մ'ն, հնչ մ'ն, փսփսխ մ'ն պիտի լինէին ոչ հեշտ ձայներ: Սակայն ըսուած է կոչ մ'ն, սեր մ'ն ևն, ըստ որում կոչ և սեր արմատներն մ'ն յաւելուածն առնելով կայտառ և ոչ դժուարին կերպիւ կրնան արտասանուիլ:

Դժմասնիկն հայերէնի մէջ ունի իմաստին պատշաճ ձայն. դժկամակ, դժբաղդ, դժընգակ ևն: Բաղձալի է որ դժմասնիկն պարզապէս կցուի կարգ մի նոր բառերու, որոց «դժուար» բառն կցած ևն նոր բառ յօրինողներն. օրինակի համար լուսագոյն է ըսել «դժմարութիւն» (dyspepsie), «դժմիզութիւն» (dysurie), «դժկլութիւն» (dysphagie) ևն:

Պատուական մասնիկ մ'ալ հասան է: Ահաւոր և վեհ առարկայից տպաւորութեան ներքեւ մարդ շ ձայնըն կը հանէ շունչ տալով հաղագէն, և այդ շ է որ իմաստացն յարմար հոգի և շունչ կուտայ հիտնալ և ահանալ բառերուն: Հ կցուելով երբեմն ի սկիզբն և երբեմն ի վերջ բառերու, կը շնորհէ անոնց մ'ն մասնկան հակառակ իմաստ, անոնց կ'ընծայէ մեծութեան, զօրութեան, սաստկութեան կամ շափաղանցութեան դաղափարներն. ինչպէս վեհ որ վերհ է, այսինքն հիանալի կերպիւ վեր կամ բարձր. վիհ որ վիրհ է, այսինքն սուկալի սաստիճան վար կամ խոր. խահ որ խորհ է, այսինքն յոյժ խոր: Հ ուր, որ շատ զօրաւոր է, հլուս, որ լուս անասող կամ խրատ լսող է, հմուտ, որ խորն մը տած է, հիմն որ, մեծ իմն է, և հպարտ, որ շափաղանց պարծ կամ բարձր է: Հ բայից ինչ ևս նոյն մասնաւոր և զանախաւորութիւն տուած է, ինչպէս հայեղ (ակն բառէն) և հարկանել:

Նուազ փայլուն կերպիւ և նուազ յաճախ կատարած են չի դերն շշտկան տառեր եւս, ինչպէս չ և ս, որոց յաւելմամբ շինուած են շ ա կ ա ն ջ ե լ , ս ք ս զ ե լ և այլն :

Չ մասնիկն հայերէն լեզուին մասնաւոր շնորհաց մին է : Որոշ հայցական շինելու համար բառին կցուելով, իբրբր նախդիր, որոշութեան միտք կուտայ, և ցուալի է որ նորագ հայերէնի մէջ այդ նախդրի մեծ յարգն լիովին գնահատուած չէ դեռ : Նոյն Չ ձայնն է որ իբր մասնիկ բայերու կը կցի և կ'աւելցունէ զօրութեան, ստատկութեան շարձանցութեան գաղափար . ինչպէս զեղծանիլ, գեռալ, գրղջալ (բառ մեզ միշտ այս բառին ը գիրն յայտնի գրել պարտ է), զեզուլ, գայրանալ, գարհուրիլ, զանցանել, գգեանել, գեռեղել :

Անհաւանական ենթադրութիւն մի շլինիր եթէ համարիմք թէ սաստկացուցիչ և զօրացուցիչ Չ ձայնն է որ զ օ գ , զ ա ր գ , զ ա ա բառերն շինած է յօդ , յարդ , և յաա կամ հաա բառերէն , յ ի կորստեամբ . զեղիս բառըն ալ կը թուի հ ե գ ս մ բառին սաստկացեալն չ ի կորստեամբ :

Չ

Կենդանեաց անուններ օւնիմք որք յայտնապէս նրմանոցութիւն են կենդանեաց ձայներուն . օրինակի համար ճ ն ճ ս շ զ , ա զ ս ա շ և բ զ է զ անուններն : Բաւական պիտի լինի խմացունել հայերէն շգիացողի մի թէ տասնք կենդանեաց անուններ են, գուշակել տալու համար մերձաւորապէս թէ որ անասկաց վերարեբեալ են : Օրինակի համար շախտի կրնայ օտարականն կարծել թէ հայերէն ա գ ս ա շ ն մտղուկ կամ բու բուել լինի : Ու զ ա , ձ ի , կ ս վ , ժ ի ժ ի ձայներու նմանոցութիւն են : Նոյն ինքն թ ս շ ս շ և կամ թ ս շ ի լ այս կարգին կը վերարեբի, թ ս շ ունք իրենց թեւոց սաւառական

չարժմամբ ձայն մի կը հանեն, որու մ բառ կտարելոյն մեր-
ձաւօր նմանութիւնն է թիւ ձայնն :

Կենդանեաց անուններուն այս ձայնական հանդաման
քրն ոչ թէ արտաքին միայն այլ և ներքին բնականու-
թիւն մ'ունի : Բացարեւմբ զայս : Ինչոյէս է կենդանե-
աց տեսակարար բնաւորութիւնն, այսպէս ևն նոցա մար-
մին և ձայն . և վերայիշեալ հայերէն բառերն առաւել
քան նիւթական լատութիւն մ'ունին : Գառնուկն չկրնար
մոնշել, և ոչ առիւծն կը բզզէ : Ճնճուկն որ փոքր է ,
չկրնար ձայնական այն դորժիներ ունենալ որով ազաւ-
ւն «կառ կառ» կ'ընէ : Մժղուկն, շնչին միջատ, չկրնար
այն թեւերն ունենալ որով թռչունք թռչ ձայնն դորա-
ւոր կը հանեն իրենց թռչունքու սաւառնական շարժ-
մամբ : Արդ երբ մարդ իղնին կայ կենդանուց մի, նորա
մեծութենէն, երևութէն, շարժումներէն և ձայնէն կ'ըն-
դունի սպասարութիւն մի որոյ համեմատ իւր ձայնական
դորժիներ անուն մ'արտասանելու կը շարժին . և որով-
հետեւ ձայնն դոր կենդանին կը հանէ թէ ձայնական
դորժարանօք թէ մարմնոյն և անդամոց շարժմամբն՝ կը
համապատասխանէ իւր մարմնական կազմութեան և ներ-
քին բնութեան, մարդն ալ բնազգմամբ կը միտի կենդան
ւոյն ձայնին զնա անուանել, ձայնիւ, որոյ նմանն, սկզ-
բամբ, ինքն արդէն յօրինելու կամ արտադրելու վերայ
էր : Ասկէ կը հետեցանեմք թէ «ուղտ», «ձի», «ազաւ»,
«ձնձուղ», «մժկղ», «խժ», «կալ», «բու», «կաունկ», «ձի-
ձեան», «խող» և նման հայերէն բառեր կրկին իմաս-
տի բնական ևն, նախ՝ իրրեւ նմանութիւն կենդանեաց
ձայնին, երկրորդ և մանաւանդ՝ իրրեւ ձայնական պատ-
կերներ նոցա բարոյական և մարմնական հանդամանոց .



Ոչ միայն կենդանիք այլ և անկենդան իրեր սպա-


ւորութիւն կը դործեն մեր խորհրդոց և զգացմանց վերայ, և այդ սպաւորութեան ներքեւ և այդ սպաւորութեան համաձայն ձայնիս՝ իրերն անուանեալ և որակեալ են: Երբ մարդ ունին գնէ կաթիլ կաթիլ կաթոյ ջրոյ, կը լսէ ձայն մի որ համեմատական է զայն յառաջ բերող կաթիլ մի ջրոյ քանակին. ուստի և լսուած ձայնին հետեւելով կամ նմանելով կը բացատրէ իւր սպաւորութիւն շիթ, պ ու ա, կ ա թ ի լ, բսելով: Բայց եթէ մեծ մարմին մ'ինայ ծրոյ մեծ քանակութեան մէջ, ի նարկէ շատ աւելի մեծ ձայն յառաջ կուգայ քան զկաթիլին, այն է ձ զ փ իււն: Օղոյ հոսանքն ալ տեղի կուտայ ձայնի, որ հ ո ղ մ է, և եթէ շատ արագ է հոսանքն, մրրիկ է: Արդ բաւական է հ ո ղ մ և մ ր ր ի կ բաւերն ազդուապէս և երկարորէն առողանել զգալու. համար այն համաձայնութիւն որ կայ այդ հոսանաց ձայնին, անուաներուն և անոնցմէ յառաջ եկած սպաւորութեան միջև:



Բառերուն կազմին և նայա նշանակութեան միջև, գոնէ Հայերինի մէջ, ուրիշ և աւելի սերտ ասնչութիւն մի դիտած եմք, որ կարի հետաքրքրական է և հզորապէս կը հաստատէ մեր տեսութիւն: Կամիմք խօսիլ հոգեբանական և բնախօսական բառերու դարմանալի բնականութեան վերայ: Գիտեմք թէ ախտը, սեւամազմտ զգացման ներքեւ մարդ կը հ ա ո ա շ է, այսինքն շունչ կ'առնու՝ հաղազէն ձայն հանելով, և այդ ձայն այն իսկ է զոր կը գանեմք եթէ հառաչել բառին շ արմատն հնչեմք շունչ ա ո ն լ ո ղ հանդերձ: Աւրեմն հ ա ո ա շ է և բառն կազմուած է ընդ ազդեցութեամբ այն հոգեբանական զիճակին զոր բացատրելու պաշտօն ունի այդ բառ:

Ա շ բառն եւս, որ սլաօսիկ և յանկարծական երկիւղ կը նշանակէ, նոյնպէս կուտայ այն ձայն զոր մարդ ահա-

5665
A 21036



ւոր կամ ահագին առարկայի մի ներքեւ կ'արտաբերէ, դարձեալ հագագէն, և շատան է արեւոյ ձայնն, միայն թէ հագագն և բերանն աւելի բաց են և շ ձայնն շատ աւելի արագ, կարճ և զորուոր է քան զշ հասաչելոյ: Խնդ ալ բառն եւս բնախօսական և հոգեբանական է. զգացման այն տեսակն որ խնդում կը պատճառէ ոչ միայն երեսին վերայ այլ և միանգամայն բերնին և քիմքին մէջ յատուկ փոփոխութիւն մի յառաջ կը բերէ, և եթէ խնդ ալ բառին ձայնական հանգամանքն դիտեմք, պիտի որոշակի տեսնեմք թէ բառն ճիշդ խնդարու հոգեբանական ձայնն իսկ է: Մի թ ա զ բառն ալ նայեալս է, սա տարբերութեամբ որ՝ մինչ խնդարն աւելի լեցուն ձայնիւ և բերնին խորէն է, թ թ ա զ ն տկաներուն մէջ տեղէն է և նուազ բարձրաձայն, հետեւապէս և իւր նրջանակութիւն ալ շկրնար բարբաժին նայնն լինիլ խնդար բառին հետ:

Ահաւանիկ բառեր որք հոգեբանական վիճակներ բրնախօսօրէն կը պատկերացունեն սքանչելապէս: Եւ ահաւանիկ կարգ մի բառեր որք բնախօսական գործողութիւններ կը նշանակեն, կը պատկերացունեն. լեզու է, լափեւ է, լապեւ է, փշեւ է, փքնեւ է, թքնեւ է, պապա նեւ է, ծծեւ է, փոք, ծամեւ է, կլանեւ է, խեղդեւ է, հեղձնու է, խոզխոզեւ է, հեւալ, հագալ հեծեծեւ է, հեկեկալ, խորագալ, փռնշեւ է, փռնդալ, շնշեւ է, հնշեւ է: Այս բառերն լաւ արաստանելով ոչ թէ միայն կը նշանակեմք այլ կը կատարեմք գործողութիւններն:



Հայերէն լեզուն ճարտար առողանութեան գերազանց յարմարութիւն մ'ունի իւր այն բառերու շնորհիւ եւս որք վիճակի մի ծայրայեղ սասակութիւնն կամ գոր-

ծարս թեան մի կրկին և կրկին կամ շարունակ կատարու-
մբն կը նշանակեն: Առաջին կարգին օրինակ են բառքս-
մ է ծ ա մ է ծ թ ր ա ր ձ ր ա ր ե ր ձ , խ ո ր խ ո ր ի ն ,
խ ո ր խ ո ր ա ա , խ ո ր ա ու ր ո ր ա , պ ա ա ի պ ա ա ,
ա ա ր ա ա մ , խ ա ո ն ի խ ու ո ն , չ ա ո ա ա մ ե ո ա ,
ու ա ր ո ու ո , յ ա ր մ ա ր ; կ ա ո կ ա ո , կ ո կ ի ծ (կծ-
կիծ) խ ա ր խ ո ու ւ : Երկրորդ կարգին օրինակ են այն բա-
յեր , որք , փոխանակ երկիցս կամ աւելի անդամներ կրկ-
նուելու որպէս զի զօրծողութիւնն ճշդիւ նկարագրեալ
լինի , արմատին միայն կրկնութեամբ յերիւրեալ են . զոր
օրինակ , փոխանակ ըսելու քակել , քակել մինչև որ սղ-
ջոյն շէնքն քակուի , կ'ըսէ ք ա յ ք ա յ ե ւ : փոխանակ ը-
սելու թաղել կրկին և կրկին , կ'ըսէ թ ա թ ա զ ե ւ : փո-
խանակ ըսելու տանիլ , տանիլ յայսկոյս և յայնկոյս , կը
ըսէ ա ա ա ա ն ի ւ : կ ց ե ւ կ'ըսուի երկու կտորի կամ
երկու առարկայի մասին , բայց եթէ առաւել քան երկու ,
բազում կտորներու մասին է խօսքն , կ'ըսուի կ ց կ ց ե ւ :
Մէկ կաթիլն կը կ ա թ է , բայց եթէ բազում կաթիլներ
իրարու կը յաջորդեն կը կ ա թ կ ր թ է : Այսպիսի կրկ-
նական կամ շարունակական միտք տուող բառեր շատ են
մեր լեզուի մէջ , ինչպէս ջ ա ջ ա ջ ա ե ւ , ր ա ր ա ջ ա ե ւ ,
կ ա յ կ ա յ ե ւ , ո ո ա ո ո ա ե ւ , դ ո զ դ ո զ ա ւ , թ ա-
թ ա ա ւ , վ ա զ վ ա զ ե ւ , դ ա ն դ ա շ ե ւ , կ ա կ ա զ ե ւ ,
թ ո թ ո վ ե ւ , յ ե զ յ ե զ ե ւ , մ ո մ ո ա ւ , կ ե ր կ ե ր ի ւ ,
շ ո զ շ ո զ ա ւ , փ ո զ փ ո զ ե ւ , ծ ա ծ ա ն ի ւ , խ ո ր խ ո-
ւ ի ւ , պ ա պ ա ա ւ , փ ա յ փ ա յ ե ւ շ օ շ ա փ ե ւ (շաւշա-
փեւ) , թ օ թ ա փ ե ւ , (թ ա թ ա փ ե ւ , թ ա փ թ ա փ ե ւ) ք ձ ք-
ձ ե ւ , ք ր ք ր ե ւ , գ ր գ ո ե ւ , թ ա թ ա ո ե ւ : Այս բա-
ռերու արտասանութեան մէջ արմատն սղջոյն կամ սա-
կաւ ինչեղանակաւ որեալ կրկնուած է , որով նշանակեալ
զօրծողութեան մէջ եղած կրկնութեան կամ շարունակու-
թեան դաղափարն պատկերացած է :



Թէ եւ ի վերոյ բնականութեան գանաղան տեսակներ
և այլ և այլ օրինակներ ցուցինք, կ'արժէ որ դիտել
տանք մի քանի կարեւոր կէտեր և ստուարեւազոյն պար
զութիւն :

«Որել» «Հրել» «Լպրժուն» օրինակ են այն բառերու
որոց բնականութիւն կը կայանայ ոչ այնքան ձայնին որ-
քան արտասանելու եղանակին մէջ : Նոյնպէս են մ․ ւ․ ջ
և պ ա պ ա ն ձ ի լ բառերն . մ ու ջ ն խ ւ ւ լ ւ ւ չ ս մ ար
համբին շրթնային Մ Ը, Մ ն, շարժումն կը ներկայացու-
նէ, ինչպէս պ ա պ ա ն ձ ի լ ն շ փ ւ ւ ա լ և ամօթահար և
զոզլն Պ Ը, Պ Ը բնելքի խ ւ ւ լ ւ ւ շ ի թ լ ւ լ զ ո յ -
ձրն էր ցուցնէ : Պ ա պ ա կ ի լ լ ւ ս ո ն ծ ա բ աւ ծ և բելա-
նրն շորցած մարդուն շրթանց ի լ ա լ ւ ւ փ ա լ շ լ ւ ւ ն բ ն -
խօսական պատկերն է : Հ ա մ բ ս ո ն բ ն ա խ օ ս ա կ ո ն ս յ ա ս -
կերն է այն գործողութեան որով ճաշակելի բանն լեզ-
ուի և շրթանց մէջ կը գննեմք Հ Մ Հ Մ բնելով : «Համ-
բոյր» և «պագ» և «պաշիկ» բառերն շրթնային արտա-
սանութիւն և շրթնային գործողութիւն միանգամայն
սքանչելապէս կը պատկերացունեն, կը թուի սակայն թէ
«Համբոյրն» աւելի փափուկ և անձայն տեսակն է, մինչ
«պագ» և «պաշիկ» աւելի ուժգին են : «Պապաջել» «մե-
ջել» և «ուլել» ձայնի և գործողութեան սլաակեր մի-
անգամայն են, իսկ «պոպջակ» և «փրփուր» գործողու-
թեան մանաւանդ :

Մ ա մ ա կ ա մ մ ա մ, պ ա պ ա կ ա մ պ ա պ, տ ա տ ա
կ ա մ տ ա տ գրեթէ համազոյցին բառեր են և յոյժ բո-
կզրնական : Մանուկ մարդկութեան բառեր են, և այժմ
ալ ամէն մանկան բնական և առաջին բառերն : Յուսամք
լեզուարանք շարժի համարին դմեզ շարժազանցութեան
տանիլ սկզբունքն զոր ցոյսովայր բացատրեցինք, եթէ

մ ա մ ա բառին ծննդաբանութիւնն աալ փորձեմք: Յոն շնչելէ յետոյ մանկան զլխաւոր գործողութիւնն է մօր կաթն ծծել: Ծծելու գործողութեան մէջ շրթունքն մեծ դեր ունին: Տղան իւր քաղց բացատրելու համար բընազգամամբ շրթնային պարզ բառ մի արտասանել կ'ըսկսի երբ ու կ'իցէ յօգաւոր բառ արտասանելու վիճակին կը հասնի. այդ բառ «մ ա մ ա» բառն է, զոր կ'ուզէ մօբըն, և սակայն ոչ թէ «մայր» բառը կ'ուզէ այլ «մամա» այսինքն կաթ ուտել, շրթային գործողութիւնն: Այս կերպիւ է որ, «մամա» բառն «մայր» նշանակութիւն առած է յաշո մօբն: Իսկ «պապա» յայտնի լծորդն է «մամա»ին, մին և միւսն շրթային դիւրագոյն յօգաւորութիւններ, ազուն համար գրեթէ անտարբեր հոմանիշներ:

ՅԱ

Այս ուսումնասիրութիւն կը բերէ զմեզ այն եզրակացութեան թէ հայերէնն զերազանց լեզու մ'է: Ինչ ալ որ լինի նորա ծննդաբանական յարաբերութիւն հնաեւրոպեան և դուրանեան լեզուաց հետ, ի բնէ հնաեւրոպեան եզրած լինի կամ դուրանեան, գրացի ազգաց լեզուներէն փոխառութիւններ բրած լինի կամ հաւաքութեամբն անոնցմէ. սնունդ ծնած, հայերէնն կազմակերպեալ և ինքնատիպ հանգամանօք լեզու մ'է, անհուն զարգացման ընդունակ, գիտական և գրական մատենագրութեան յարմար, և ատենախօսութեան եւս ամենայն փափկութեանց զարմանալի ճապկութեամբ պատկանաւոր:

Ատենախօսական տեսակէտով մեր այն ուսումնասիրութիւն կը թելադրէ ուղղագրական սկզբունք մի եւս, յոր կ'արժէ հրաւիրել մասնաւոր ուշադրութիւն: Ծայրայեղ աշխարհարարեաններ կան որք աշխարհարարի Իբրաւունքն կը համարին ինչ ինչ աղաւաղումներ անդամ:

սովորաբար կը դրեն ու կը հնչեն թ ո թ վ ե լ, թ ա թ-
դ ե լ, փ ա թ թ ե լ, կ ա ր կ ա ե լ, ևն, ինչ որ բուն հա-
յերէնի սգւոյն բոլորովին հակառակ է և այդ բառերն ան-
կենդան դիակներու կը դարձունէ. պարա է միշտ դրել
և հնչել թ ո թ ո վ ե լ, թ ա թ ա դ ե լ, փ ա թ ա թ ե լ,
կ ա ր կ ա ա ե լ (կ ա ր կ ա ե լ կարկուտ տեղալ կը նշա-
նակէ ː)

Կը հասնի՞մք նաև ստուգարանական սկզբունքի մի ː
Սրանք ալ որ եղած լինին հայերէնի բնակից լեզուք, և
սրքան բազմաթիւ ալ լինին այն հայերէն բառեր որոց
ճիշդ կամ մերձաւոր նմաններն գտնուին օտար լեզու այ
մէջ, սա աներկրայելի է թէ մեր բառերու նախնական
պաշարին մեծ մասն բնիկ հայկական կրնայ նկատուիլ,
կամ որոց մասին մեք այնքան կրնամք մերն է ըսել որ-
քան ուրիշ ցեղակից լեզուներ ː Դիւթին է տեսնել թէ
ա դէ՛, կ ր կ է ս, կ ա յ ս ր և այլ ոչ սակաւք օտարամուտ
են. բայց երբ կուգանք հ ա մ, պ ա պ ա կ ի լ, ք ա յ ք ա-
յ ե լ, թ ո շ ու ն, մ ո լ ո թ ի լ, կ լ ա ն ե լ, թ ք ա ն ե լ,
հ եւ ա լ, հ ա ա ա շ ե լ ևն ևն բառերու, որոց թիւն
մեծ է, անոնց վերայ այնպիսի բնական դրոշմ կը տես-
նեմք և այնպիսի հայկազանութիւն գի կրնամք անոնց
վերայ մեր ձեռք ամբաստէս դնել և մերն է ըսել. փոյթ
չէ թէ ցեղակից լեզուաց մէջ անոնց համանիչ և համա-
հունչ արմատական ձայներ գտնուին ː

Բառերու բնական կազմութեան այս ուսումնասիրու-
թիւնն թոյլ կուտայ մեզ սկզբունք մ'ալ հաստատել հո
մանիչ բառերու որոշ նշանակութիւնն ճշդելու օգնող ː
Դիտելի է թէ ա ա ա մ ն բառին արտասանութեան մէջ
ատամունք գործ ունին, լեզու բառին համար լեզուն
կ'աշխատի, «պրկունք» բառին համար՝ շրթունքն. ունչ
և ո ու ն դ ն բառերուն համար ունչ և սունդ. այսին-
քն յօդաւորութեան գործարանաց որ մասն որ նշանա-

կեւ ուզուած է, այն մասն աշխատակցած է ինքզինք նը-
չանակելու : Արդ, գիտնալու համար թէ ի՞նչ որոշ մա-
սեր մեր բերնի խորութեանց մէջ կը ցուցնեն քիմք
հազազ և կսկսող բառերն, վերի սկզբունքն մեզ
լուսազոյն առաջնորդ եղած է քան ամենայն մեծ կամ
փոքր բառգիրք : Հնչեցինք այդ բառեր կրկին և կրկին
և ուշ գրինք թէ իւրաքանչիւրի արտասանութեան մէջ
բերանի ո՛ր մասերն աւելի դարձօն դեր կը կատարեն , և
այդպէսով խնդիրն պարզուեցաւ : «Քիմք» «Հազազ» և
«կսկսող» հեա դհեաէ աւելի խորագոյն մասեր կը նշա-
նակեն մեր բերանի մէջ :

«Միծաղիլ» և «խնդալ» «համբոյր» և «պազ» համա-
նիչներուն իրարմէ ասորբերութիւնն նոյն սկզբան յենլով
նշանակեցինք ի վեր անդր : Աւրիչ բազում համանիչներու
երանդներն կարելի է ճշդեւ այս կերպիւ . օրինակի հա-
մար խոխոջ և կարկաջ անասորբեր համանիչներ
չեն կրնար լինիլ : «խոխոջ» ձայնն է աւելի մեծ քանա-
կութեամբ և աւելի խորաուրորտ յատակի վերայ ընթա-
ցող վտակի կամ գետոյ, մինչ «կարկաջ» աւելի համեա
ձայնն է նուազ անհարթ յատակի վերայ ընթացող և
նուազ ահագին վտակի : Բայց այս մասին երկարել չէ
տեղոյս :

Վերջապէս ըսենք թէ աշխարհարարի կամ գաւա-
ռարարառաց մէջ մեծ գանձ կայ ընտիր բառերու և ա-
ռացուածոց որք հայկազանութեան խորին գրոշմն կը կը-
րեն , թէեւ մեր գրարար մատենագրութեան մէջ չեն
գանուիր . այսպիսի բառեր պարտին մուտ գանել նորոզ
մատենագրութեան մէջ , ըստ որում այնքան լաւ հայե-
րէն են զի կրնար ոք գրարար մատենագրութեան մէջ իսկ
գործածած լինիլ զայնս ամենայ պատշաճութեամբ :
Պարտ է խոստովանիլ թէ գրարարի մէջ ի հնումն գոր-
ծածուած լինելով այժմ յարգուող բառեր կան որք նը-

ուսող հայերէն և նուսող շնորհալի ևն քան այն կարգի բաներն որոց մասին կը խօսիմք: Օրինակի համար պ ա ռ տ և ս ւ տ ս ւ տ ա լ, փ ք ն և լ (փշեղով թեփն կամ անոր նման թեթեւ մասերն զատել, իրաց մաքրել), թ ա փ թ ք փ և լ, տ ն տ ն ա լ, կ ա ս կ ս և լ, մ տ մ ք տ ա լ, շ բ ե բ (ամուլ), մէջկապ (գօտի), ջրջրուկ (մանր պալար), գոռգոռաալ, հերնեկ (հերունեկ, մէկ տարեկան) նննիկ (փոքրիկ բան, աւելորդ պիտոյք)․ «մէկ նննիկէն վար շմնար» միզծ (կարի մանր փոշի) «ապակիին վերայ միզծ է նստեր,» և այլ անհամար:



Ա Ր Տ Ա Ս Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ատենախօսութեան արուեստին հիմնական պէտքն է յստակ և ճիշդ արտասանութիւն :

Պէտք է որ բառին ամէն մէկ ձայնաւորն և բաղաձայնըն սրոշապէս հնչուին և սրոշապէս լսելի լինին : Պէտք է որ արտասանութեան գործարանք, այսինքն շրթունք, ատամունք, լեզու, քիւմք և կոկորդ՝ պահանջուած հարմաներն ազդուապէս ընեն սրպէս զի բառերն քաջ յողարին և արտարերին : Այդ գործարանք գործիներ են, որովք պարտիմք որպէս թէ նկարել բառերն այնպիսի սրոշ գծերով զի հեռուէն ալ զգալի լինին նկարին ամէն մասերն : Չայնի բարձրութիւնն կամ առատութիւնն չէ որ յստակ կը գործէ զարտասանութիւն, ինչպէս ներկերու թանձրութիւնն չէ որ պատկերին ճշդութիւն և կենդանութիւն կուտայ : Կրնայ ոք խօսիլ մեղմ, տկար ձայնիւ բայց այնպիսի յստակ արտասանութեամբ զի աւելի հեռուէն հասկանալի լինի քան զայն որ ձայնիւ կը լնու զվայրն առանց յստակ արտասանելու :

Հայերէն տառերն կը բաժնուին հինգ դասուց, որք են :

Շրթնայինք — բ, մ, պ, փ, վ .

Ատամնայինք — զ, ս, շ, ժ, ճ, ծ, ձ, շ, ց .

Լեզուայինք — լ, ա, դ, թ, ն, բ, ո .

Քուայինք և կոկորդայինք — ք, կ, խ, զ .

Յոտակ արնասանութեան կրթուելու համար կըր-
նաս հետադայ եղանակն գործածել : Աս գիրք մի և սե-
նեկին մէկ անկիւնն նստած՝ ընթերցիր ցած ձայնիւ . սե-
նեկին միւս հետուոր անկիւնն թող նստի այլ ոմն ևւ ա-
կանջէ ձայնիդ : Ջանք այն պիտի լինի որ քս ընթերց-
ուած լսելի և հասկանալի ընես նմա միայն , ոչ թէ ա-
ւելի հետուն և սենեկէն դուրս գանուղներուն : Այս
պայմանաց մէջ ձայնի դորութեան փոխան կը ջանաս դը-
նել յստակութիւն յօդաւորութեան : Այս կերպիւ ար-
տասանութեան գործարանք կը գործանան և դու կարի
յոտակ արտասանելու անգին վարժութիւնն կը ստանաս :

Ահաւասիկ սողեր, սրովք կրնաս պատշաճօրէն սկսիլ
այս անհրաժեշտ կրթութիւն :

Ննջեա մանուկս աշօք վճիտ

Ննջեա անոյշ յորորցիդ :

Այդ հրաշագեղ գոհար բրունք ,

Որ յարթնութեանդ միշտ երերունք ,

Ո՛հ , գի՛ խաղաղ եւ անշարժիկ

Փակեալ ի նինջ են աւասիկ .

Շրթունքդ շուշանք լցեալ շաղով

Եւ գիրդ մարմինդ երկնից գեղով :

Ընգէ՛ր երեսքդ ժպտեցան ,

Հրեշտակք եղեն քեզ յանդիման ,

Որ յերազիդ քում սսկեթեւ

Մօտին գայտերըդ համբուրել ,

Ոմն զձիւնափայլ պարանոցիկդ

Այլք զթաթիկս քս փափկիկ .

Կամ յանուանէդ զքեզ ձայնն

Կամ շուրջ զքեւ պար բուրնն .

Այլք խաղալով ընդ քոյդ օրոց ,

Յունկնդ մնչեն ձայնիւ երգոց

«Ի քո քաղցրիկ մօրէդ ծածուկ
Մանկիկ յերկինս եկ փախիցուք»

Յստակ արտասանութիւնն, աւելորդ չէ յիշել աստ, շորհանջեր յամբուսութիւն: Յստակութիւն և կոյտասութիւն կրնան և պարտին միանալ: Մեք Հայքս, ծերացեալ ազգ, այնքան արագ շենք խորհիր և խօսիր որքան այլ բազում ազգք: Եւ այս ներքին նկարագրի արտայայտութիւնն կ'երևի մեր արտասանութեան այն դանդաղ կերպին մէջ, որով մէկ վանկն երկուք կ'ընենք — չբրաշք, դաշըն, գրթալ, կրտոր, կր հնշեմք, փոխանակ բակու հրաշք, դաշն, գրթալ, կտոր, ծանր, մանր, գլուխն, զնա — իւրաքանչիւրն մէկ վանկ

Օ և Ո ատուերուն հնչումն ևս ուշադրութեան արժանի է: Հօր և հօր, հօա և հօա բառերն պարտին ուղղահնչութեան շնորհիւ այնքան անշփոթելի կերպիւ որոշուիլ իրարմէ որքան ուղղադրութեամբ: Չմտնանք թէ Օ գիրն աւերկրարբան է նախնեաց և լեցուն ու կլօր է հիշդ Թոանսերէն և երկրարբանին նման, մինչ Ո գոց է, Թոանսերէն օին նման: Ըստ այսմ հօր պարտի հնչուիլ hour, իսկ հօր՝ hor:

Անցողակի յիշեմք նաև թէ օտար բառեր հայերէն գրելու մէջ շատեր սխալ կը գործածեն Ո և Օ ատուերն: Պէտք է գրել Նիւ Եորք (New York) ոչ թէ Նիւ Եօրք-Ոբէա (Oppert), Կօթիէ (Gautier) Պուլիս: Իսկ Ուօշինկթըն (Washington), Ռօլինսըն (Rawlinson) բառերուն առաջին վանկին ձայնաւորն իւր ճշգամերձ համապատասխանն կը գանձ մեր օ ատուին մէջ մանաւանդ քան Աին մէջ:

ՉԱՅՆ

ՉԱՅՆ

Ամէն մարդ յոսի արտասանութիւն ինչպէս նաև յոսի ձայն ունի բնականապէս. բացասութիւն են նորա ու

բոց ձայն, անմշակ վիճակին մէջ, լինի այնպէս զօրաւոր և յստակ որպիսի պիտոյ է տակենախօսին: Սակայն կրթութեան կրնայ խօսեցեալ ձայնին կամ բարբառոյն տալ բաղձացեալ բարեմասնութիւններն ինչպէս զեղզեղելու արուեստն կուտայ երգեալ ձայնին:

Այնմ, որոյ ձայն անմշակ է, անհնար է բաւական երկայն ճառ մի խօսիլ առանց՝ գոնէ վերջին մասին մէջ՝ կերկերելու կամ ճշելու: Վարժեալ ոք կրնայ յստակ արտասանութեամբ և կրթեալ ձայնի խօսիլ մեծ և կեղեցւոյ կամ որահի մէջ և հազարաւոր ու կնդրաց հեռաւորագունիցն անգամ հասկանալի լինիլ:

Կրթութեամբ տկար ձայնն զօրաւոր կը լինի, խաւտարն մեղմ և ողորկ, բարակ և ճշունն՝ որոտուն: Կրթութեամբ կարելի է աստի և անտի ընդարձակել անգամ ձայնի սովորական սահմաններն, իջնել ահաւոր բամբի և ելնել վսեմ բարձրութեան:

Ինչպէս որ յստակ արտասանութեան համար աստմունք և միւս յօդաւորիչ գործարանք անվթար պէտք է լինին, նոյնպէս զօրաւոր ձայնի համար խռչակ, կո: կորդ և թոքք պարտին առողջ վիճակի մէջ գանուիլ: Ծխախոտն մեծ թշնամի է այս գործարանաց: Կան ինչ ինչ մարզանք որովք պարտի ուսանողն զօրացունել իւր ձայնական գործարաններ: Այդ մարզանաց երկուքն նշանակեմք աստ:

1. Ուղիղ կանգնէ, ուսերդ դէպ յետս, լանջքդ (ոչ թէ որովայնդ) դէպ յառաջ, գլուխդ բարձր, սրունքդ հաստատուն բռնէ: Այս ընդհանուր դիրք ամենայն հրահանգաց նախապատշաճտական է: Այժմ երկու բազուկներդ դէպ յառաջ տարածէ հորիզոնական ուղղութեամբ այնպէս որ արեւրդ միմեանց հպին. դէպ յետս շարժէ բազուկներդ մինչև ծայրից մասանցդ հպիլ իրերաց ի

թիկանց . ապա վերստին շարժէ զայնս զէս յառաջ և զէս յետս բազում անգամ : Բազկացոց զէս յետս շարժելու պահուն շունչ առ և լից թոքերդ . զէս յառաջ շարժելու պահուն շունչ առ և թոքերդ պարզէ :

2. Բազուկք ի կախ երկուստեք . ճօճէ բազուկներդ ի վեր և ի վայր քան զգլուխդ բազում անգամ : Այս չք բահանդ ի մէջ բազկաց զէս ի վեր շարժման պահուն պէտք է շունչ առնուլ և զէս ի վայր շարժման պահուն շունչ առլ :

Ահաւանիկ մարզանք որք քաջ կը ծառայեն ձայնի գործարաններն զօրացնելու : Ուրիշ են մարզանք բուն ձայնի գօրութիւն առլու : Այս մարզանք են ձայնի ընթերցմունք :

Ըղնչանուր խօսքով կարելի է բնել թէ կայ ցած , միջին և բարձր ձայն , երեքն ալ հարկուոր քաջ առողանողին : Լու կ'ընէ ուսանողն եթէ նախ , մի քանի շարաթ միջին ձայնի ընթերցմամբ կրթէ ձայնն , և յետոյ , աստիճանաբար ևւս քան զււս բարձր ձայնի ընթեանու : Բարձրացոյն աստիճաններով ընթեանուլ և պոտտել կարի նպաստուոր են ձայնն զօրացնելու , սակայն այդ կրթութիւնք բազդաստարար կարճատեւ պարտին լինիլ , ինչպէս նաև ստուար ձայնի ընթերձմունք :

Եթէ ոք երկար ամիսներ յարատեւէ այս հանապազօրեայ կանոնուոր կրթութեանց մէջ , կրնայ մեծապէս բարեփոխել իւր ձայն :



ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ

Շունչ առնուլ և առլ յատենախօսելն է այնքան գժուար և կարեւոր որքան յատակ արաստանութիւնն .

և սակայն կարի սակաւք գիտեն շնչել պատշաճօրէն : Հասարակ խօսակցութեան մէջ կրնայ շնչողութիւնն թողուիլ բնագոյման , բայց ատենախօսին հարկաւոր է կրթեալ եղանակ մի շնչոյ սուր և առի, եթէ ոչ շնչողական գործարանք կը խոնջին, ձայնն կը տկարանայ և առողանութիւնն կը խանգարի :

Մեր թոքք շեն սովորաբար շնչեր իրենց ողջոյն բնգունակութեամբն յորժամ կը ննջեմք կամ թեթեւ գործով կը զբաղեմք , նոքա անկատար կերպիւ կը բացուին ու կը գոցուին : Բայց եթէ քալեմք , մանաւանդ զառ ի վեր , և երբ վազվազեմք , յայնժամ թոքոց պահեաթմասերն ևս կը սկսին պաշտօնավարել : Իսկ երբ բարձր ձայնիւ և բաւական երկար ատեն խօսիլ կ'ուզեմք, պարտ է մեզ ոչ միայն աւելի թոք ընուլ և պարպել քան սովորաբար , այլ գիտնալ ևս լիովին օգտիլ այն իշխանութենէ գոր ունիմք բնական շնչողութիւնն կառավարելու և եղանակաւորելու մասին :

Պարտի խօսուցն ուղիղ կանգնիլ (կամ ուղիղ նստիլ), կուրծք գէպ յառաջ - շնչել ոչ վերին կամ միջին մասերովն թոքոց այլ ի խորէ , ստոծանիէն : Այսպէս շունչ առնով թոքք քաջ կը լեցուին և առատ շունչ կ'ունենամք ծախակու : Կոյ ուրիշ կանոն մ'եւս , որում նոյնքան պատկառ կալ պարտիմք . ոչ երբ էք սպասել շնչոյ պաշարն : Աոր շնչառութենէ յետոյ շխօսիլ մինչեւ որ թոքք պարպուին , այլ շունջ առնուլ միջակէաներուն , ստորակէաներուն և երբեմն թութերուն անգամ սաջեւ : Այս բնէ չէ թէ ամէն ստորակէտի կամ բութի սաջեւ պարտ է շունչ առնուլ որքան խիտ առ խիտ ալ յաջորդեն , այլ գիտնալ յաճախ օգտիլ այդ նշաններէն , որք ոչ լսկ ձայնի բնդ հասման այլ և շնչողութեան սկտքրն ցուցնելու նշաններ են : Նաեւ մի լիցի հասկնալ թէ ամէն շնչառութիւն մի և նոյն շափն ու գօրութիւնն

պարտի ունենալ, այլ ըստ անզւոյն և ըստ պիտոյից շնչոգութիւնն պիտի լինի ամբողջ, կէս, քառորդ կամ աւելի փոքր:

Հետագայ օրինակն, զոր ժեք Լըկուվէէ կառնումք և զոր Լըկուվէ ինքն սուած է Տիկին Տալմաէ, քաջ կը ծառայէ ցուցնելու շնչոգութեան կանոններն և խորին ուսումնասիրութեան արժանի է:

Չես հաւատար Աստուծոյն յորմէ եմ ես ներշնչեալ:

Յոյժ ճշմարիտ պատգամին ընդ իմ բերան խօսեցեալ,
Ինքն յարեց սարակոյս և թերահաւատութիւն:

Ազոդոնի սիրահար, անմահական իւր բոցոյ,

Յորմէ հեռէ ցրտութիւնս ցուցաւ այնքան ազատամբ,

Յինէն զլացաւ այդ աստուած նպաստաւորն իւր նեցուկ.

Ձիւ ընկրճեց այն շարեօք զոր դատնապէս այժմ կ'ող-
բամ-

Աչք իմ տեսան զկորուստ իմ խողխողեալ ընտանեաց:

Ինչ եմ ես, ո՛հ: Ստուեր մի թափառայած դժօխակոչ:

Ժամն կը մօտի՛. սրբազա՛ն գեաք մնացէք դուք բար-
կա՛ւ,

Եւ դուք, ալ ի՛ք Սիմօսի: Ի ձեր արունս վեհական,

Ոչ եւս տեսնէք պիտի դիտ, որպէս յաւուրս բարօրիկ,

Պճնել ծագկանց փնջերով սուրբ զբազին զահերուն-

Եւ իմ ձայնիկ, առ մեռեալս, առ որս ընդ հուպ ես
կ'իջնեմ,

Ախերոնի ժխորին պիտի խառնէ իւր շեշտեր:

ՉԵՍ ՀԱՒԱՏԱՐ ԱՍՏՈՒԾՈՅՆ ՅՈՐՄԷ ԵՄ ԵՍ ՆԵՐ-
ՇՆՉԵԱԼ:

(Հոս, իմաստն լրացած է, կարելի էր ոչ ինչ յաւե-
լուլ ի վերայ. սէտք է ուրեմն ամբողջ շնչառութիւն մի:)

ՅՈՅԺ ՃՇՄԱՐԻՏ ՊԱՏԳԱՄԻՆ ԸՆԴ ԻՄ ԲԵՐԱՆ ԽՑ-
ՍԵՑԵԱԼ:

(Աստ, մէկ շորթորդ շնչառութիւն, իմաստն առ կախ մնացած է ։)

ԻՆՔԸՆ ՅԱՐԵՑ ՏԱՐԱԿՈՅՍ ԵՒ ԹԵՐԱՀԱՒԱՏՈՒԹԻՒՆ ։

(Իմաստն աւարտեալ է, ամբողջ շնչառութիւն ։)

ԱՊՈՂՈՆԻ ՍԻՐԱՀԱՐ,

(Աստ մէկ շորթորդ շնչառութիւն, այս կը պատրաստէ միայն զհետագայն ։)

ԱՆՄԱՀԱԿԱՆ ԻՒՐ ԲՈՑՈՅ,

(Անզգալի շնչառութիւն, գիրացնելու համար խօսքին մնացեալ մասին առողանութիւնն ։)

ՅՈՐՄԷ ՀԵՏԷ ՅՐՏՈՒԹԻՒՆՆՍ ՅՈՒՑՄԻ ԱՅՆՔԱՆ ԱՊՍ-
ՏԱՄԲ,

(Մէկ շորթորդ շնչառութիւն, զհետեւեալն բաժնելու առանց ցրտութեան ։)

ՅԻՆԷՆ ԶԼՍՅՍԻ

(Անզգալի շնչառութիւն)

ԱՅԴ ԱՍՏՈՒԱԾ ՆՊԱՍՏԱՒՈՐՆ ԻՒՐ
ՆԵՑՈՒԿ,

(Մէկ շորթորդ շնչառութիւն ։)

ԶԻՍ ԸՆԿՃԵՑ ԱՅՆ ՉՐԵՅԹ ԶՈՐ ԴՍՈՆԱՊԷՍ ԱՅԺՄ
ԿՈՂԲԱՄ ։

(Կէս շնչառութիւն, իմաստն գրեթէ լրացեալ է ։)

ԱԶԲ ԻՄ , . .

(Անզգալի շնչառութիւն, որպէս զի աւելի երկար առան բաւես տանիլ զպարբերութիւնն ։)

ՏԵՄԱՆ ԶԿՈՐՈՒՍՏ ԻՄ ԽՈՂԽՈՂԵԱԼ ԸՆՏԱՆ-
ԵԱՅ ։

(Կէս շնչառութիւն, աւելի ազգու ընկու համար հետագայ խորհրդածութիւնն ։)

ԻՆՉ ԵՄ ԵՄ , Ո՛Ղ ։

(Կէս շնչառութիւն ։)

ՍՏՈՒԵՐ ՄԻ ԹԱՓԱՌԱՅԱՆ, ԴԺՈՅԱ-
ԿՈՉ,

(Կէս շնչառութիւն, որպէս զի շափաղանց անա-
պարանք չլինի պատկերաց յաջորդութեան մէջ ։)

ԺԱՄՆ ԿԸ ՄՕՏԻՐ . . .

(Աստ, ամբողջ շնչառութիւն մի, վասն զի փո-
խանցում կայ ։)

ՍՐԲԱԶԱՆ ԳԵՏՔ, ՄՆԱՅԷՔ ԴՈՒՔ
ԲԱՐԵԱ՛Ի,

(մէկ շորորդ շնչառութիւն, որպէս զի անդդալի
կերպիւ բաժնած լինիս զհետեւեալն ։)

ԵՒ ԴՈՒՔ, ԱՂԻՔ ՍԻՄՈՍԻ ։

(Մէկ շորորդ շնչառութիւն ։)

Ի ՁԵՐ ԱՓՈՒՆՍ ՎԵՀԱԿԱՆ .

(Կէս շորորդ շնչառութիւն, նշանակելու համար
զմիջանկութիւնն ։)

ՈՉ ԵՒՍ ՏԵՄԵԷՔ ՊԻՏԻ ՉԻՍ,

(Անդդալի շնչառութիւն ։)

ՈՐՊԷՍ ՅԱՆՈՒՐՍ ԲԱՐՐԻԿ,

(Շնչառութիւն անդդալի, որպէս զի ինայես զորու-
թիւնն որում պէտք ունիս աւարտելու համար խօսքն ։)

ՊՃՆԵԼ ԾԱՂԿԱՆՑ ՓՆՋԵՐՈՎ

(Շնչառութիւն անդդալի ։)

ՍՈՒՐՔ ՉԲԱԴԻՆ ՉՈՀԵՐՈՒՆ .

(Ամբողջ շնչառութիւն, իմաստն լրացած է . նոր
գաղափարի մի անցնելու ժամանակ կ'ուզէ ։)

ԵՒ ԻՄ ՉԱՅՆԻԿ,

(Անդդալի շնչառութիւն ։)

ԱՌ ՄԵՌԵԱԼՅ ԱՌ ՈՐՍ ԸՆԴ ՀՈՒՊ ԵՂ

ԿԻՋՆԵՄ,

(Կէս շորորդ շնչառութիւն ։)

ԱԽԵՐՈՆԻ ԺԽՈՐԻՆ

(Կէս շորրորդ շնչառութիւն, որոյ արդիւնքն է կազդուբել ձայնդ որպէս զի մեծ զօրութեամբ հասնին վախճանին ։)

ՊԻՏԻ ԽԱՌՆԷ ԻԻՐ ՇԵՇՏԵՐ ։

ԳՒԵՍ Գ

ՊՆ Պ Ո Ւ Մ Ն

Առաջին երեք դասերն նախընթացինք առողանութեան մարմնոյն, նորա ֆիզիքական առուզութեան և զօրութեան պայմանաց . այժմ կը սկսինք խօսիլ նորա սգուսոյն վերայ ։ Ատենախօսին բաւական չէ յատակ և ուղիղ արաստանել, մաքուր և զօրաւոր ձայն ունենալ, և գիտնալ թէ ո՛ւր և ո՛րքան պարտ է զկայ և շունչ առնուլ ։ Շատ աւելին կայ ։ Պարտ է ձայնի միջոցաւ տալ բառին իւր նշանակութիւն, զօրութիւն և արժէք այսինչ տուեալ նախադասութեան մէջ . պարտ է ներշնչել բառն նմա յատակ եզող շնչով, և կենդանի էակ մի ընել զնա իւրուրոյն կերպարանաւ ։

Բառն այսպէս կենդանացունելէ զատ կը մնայ գեւամբողջ նախադասութեան, պարբերութեան կամ ճառին տալ իւր մասնաւոր ոգին ։ Ամեն հեղինակ և ամէն նիւթի վերայ գրուած չէ կարելի մի և նոյն սգուով կարդալ ։ Պարտ է գիտնալ թէ տուեալ հասուածի մի ընդհանուր ընթացքն ի՛նչ պիտի լինի յընթերցման — արա՞ց, արշաւասո՞յր թէ ծանր — օրոտո՞ւն, բա՞րձր, ցա՞ծ, ուժգի՞ն թէ մեղմ — զուա՞րթ, խո՞ւր, բողոքո՞ղ թէ հեզնական ։ Ստարական մ՛անդամ, որում գլխովին անձանօթ է լեզուն որով կ'ընթեանուս, պարտի կարենալ ընթերցումէ գազափար առնուլ ընթերցումոյդ վերայ ։

Աստղանութեան այս կարգի հանդամանքն ուրեմն կը սկսինք նկատել, սկսելով Պ ն դ ու մ է :

ՊՆԴՈՒՄՆ, շէշտու մն կամ հզօրացումն է մասնաւոր զօրութիւն տալ նախադասութեան մէկ կամ աւելի բառերուն : Զբառն սրում մասնաւոր զօրութիւն ընծայել կ'ուզեմք, կ'արտասանեմք աւելի ուժգին ձայնիւ, երբեմբն աւելի բարձր ձայնիւ, կամ աւելի ցած ձայնիւ, կամ բառին ձայնաորնեքն երկարելով, կամ դիմամբ մ'այն բառէն անմիջապէս առաջ :

Կը պնդեմք

1, Այն բառեր և նախադասութիւններ որք մասնաւորապէս նշանակիչ են, ինչպէս,

Ո՞վ պատակց Արմէնին գիրքն :

Թագաւորն ըստ . «Այս է ի մ կ ամ ք ու» չ'պիտի հնադանդիս :

2, Հակադրութիւններն, զոր օրինակ,

Թե՛ր խօսեցաւ թէ՛ դէ՛մ :

Հրոյ բնդ խոսոյ ոչ ամ ու ս ն ու թ իւ ն լինի այլ ծ ա խ ու մն :

Ոնդրեցէք զայն սք սրոյ ոչ բ ա ն ք՝ այլ գ ո թ ծ ք շարժ են գձեղ յընտրութիւն :

Հետեւեալ օրինակաց մէջ հակադրութիւնք բարդ են .

Զի եթէ առ Աստուած իւր սուտ գտաւ, առ ո՞ սք ի մահկանացուաց աստի դա արդար գացի :

Որ ինքն իւր շար է, այլում բարի ոչ կարէ լինիլ :

3, Այն բառեր որք ազդուութեան համար կը կրկնուին, ինչպէս,

Ողորմիմ, ո դ ո թ ի մ սիրելեաց ձերոց, և բազում անգամ Ո՞ղՈՐՄԻՄ անձանց ձերոց :

Ի՛նչ, մե՞ր վերայ կուգան . թ ո դ գ ա ն, ԹՈ՞ղ ԳԱՆ :

4, Կարեւոր բառերու յաջորդութիւնն կը պահան-

ջէ աստիճանաւ անումն զօրութեան, ինչպէս :
 Կը գնէ, կը վաճառէ, ԿԸ ԳՈՂՆԱՅ, ԿԸ
 ՍՊԱՆՆԷ սակոյ համար :

Ոչ այժմ, ոչ վաղիւ, ոչ ՅԱԻԻՏԵԱՆՍ և ոչ
 ՅԱԻԻՏԵԱՆՍ ՅԱԻԻՏԵՆԻՑ :

Հայերէնի մէջ բառից վերջին վանկն բնագանրապէս
 կը կրէ շեշտն. կ'ըսենք ասանութիւն, անշնորհ, արծա-
 թագործ : Բայց հետեւեալ բառերն երբ պնդուին, ասա-
 ջին վանկին վերայ շեշտն և պնդում աւելի զդալի կը
 լինի — ա'յսպէս, ա'յնպէս, յա'յնժամ, ի'նչպէս, ս'րբան,
 ս'րպէս, ի'նտոր (ինչի՞տոր) :

Նաև, պնդման պէտքն կրնայ շեշտի սեղափոխու-
 թիւն հարկ բնել, ինչպէս հետեւեալ օրինակին մէջ :

Ոչ թէ հանութիւն այլ ա'հանութիւն պատճա-
 րեց նմա :

Ինչպէս ի սկզբան ըսինք, պնդումն միշտ ձայնի բարձ-
 րացմամբ շլինիր, այլ ուրիշ եղանակօք ևւո, օրինակի հա-
 մար ձայնաօրներն երկարելով : «ողորմիմ, ողորմի... մ»
 Կարելի է նաև բաղաձայն մի բաղմաստաբան սասակու-
 թեամբ հնչել պնդման համար : Պնդելու այս վերջին ե-
 ղանակին զեղծում կրնայ նկատուիլ ամէն և փաթիլ
 բառերուն ամմէն, փաթիլ հնչումներն սրպիսի ա-
 զուաղումներէ պէտք է սակայն զգուշանալ : Փաթիլ
 բառն կրնայ ահագին պնդում առնուլ իւր Փատաին շը-
 նորհիւ, և բնաւ պէտք չկայ Տ ին վերայ յենլով զայն կրկ-
 նելու* :

*Չ մակրայն շունի շեշտուելու այն յարմարութիւ-
 նըն զոր ՈՉ նունի : ՈՉ ն կրնայ բաժնուիլ բայէն և այս
 կամ այն բառին քով դրուիլ ըստ պիտոյից պնդման : Այս-
 պէս անհուն դիւրութիւններ ունի մեր գրաբարն որ ճա-
 պուկ և սարգ է գերազանցապէս : Դիտեցէ՛ք հետեւեալ

ԳՅՍ Ե
ՈՂՈՐՈՒՄՆ

Ուրբումն է ձայնին սահումն կամ դարձն ի վեր կամ ի վայր, ի խօսելն կամ յընթեանուլն, կամ այլազգ ըսեալ, ձայնին պէտպէս ելեւէջք և եղանակաւորութիւնքն են: Չայնի այն եղանակաւորութիւն զոր հարցման մէջ կը գործածեմք ևւ զոր պարոյկ (°) նշանաւ կը ցուցնեմք, է ուրբմանց մին:

Ուրբումնք կամ ուրբակք երեք են. շեշտ կամ ԵԼՈՒՆ ՈՂՈՐԱԿ, բութ կան ԻՋՈՒՆ ՈՂՈՐԱԿ, և ՊԱՐՈՅԿ: Ելուն ուրբումն պիտի նշանակեմք սա նշանաւ (°), զիջունն՝ սա (°): «Կ'ուխակէ՞ք առ այս նպատակ ցանգ աշխատի՛լ,» հարցում մ'է զոր կը վերջացունեմք «տիլ» վանկն ելուն ուրբմամբ արտասանելով: «Ի՞նչ կը կարդա՞ք,» հարցման մէջ բային վերջին վանկն իջուն ուրբակաւ կ'առաջանուի: Հետագայ խօսքին մէջ երկուքին ուրբումնք կան. —

Եթէ մին կը ջեռուցանէ՞ միւսն ալ կը լուսաւորէ՞:

1. Այն հարցումնք որովք տեղեկութիւն կը խնդրեմք և որոց կրնայ «այո՛» կամ «ո՛չ» պատասխան արուիլ, սովորաբար կ'առնուն ելուն ուրբումն, իսկ նոցա պատասխանիք՝ իջուն:

Երէկ զՊորէն տեսա՞ր: — Այո՛

Կը յուսա՞ս յաջողի՛լ: — Կը՛:

օրինակներն. — Տ՛արանայ ինչ ոչ քեզ: — Եւ զպատիւ փառաւորութեանն մի՛ անձին ասնել խորհիցէ: — Այլ ևւ փրկէր իսկ ընդէ՞ր զայլոյ արարածս: — Բնաւ և էր իսկ ոչ Չբուանն: — Բանձն ա՛ն կորնչել քան յողոտող զարութիւնդ քո ցուցանել: — Ուր և վրիպակք. թեթեալոյնք պատճառս ծանուց տան շարեաց: — Ի բաց գնա յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես:

Լաւ շխօսեցա՞ւ : — Շատ լաւ խօսեցաւ :

2. Այն հարցմունք որք յայտարարական հանգամանք ունին, և որոց պատասխանն արդէն հարցման մէջ պարունակեալ իմն է, կ'առնուն իջուն ոլորումն :

Լաւ շխօսեցա՞ւ :

Միթէ փշերէն խաղող կը քաղե՞ն կամ տաասակէն թու՞ղ :

Ընդէ՞ր այս ուրախութիւն ընդ յաղթական դաւուստ կեսարի՞ : Ի՞նչ փառաւոր յաղթութիւն կը բերէ նա մե՞զ : Ի՞նչ հարկատուներ կուգան զկնի իւր ի Հոսով իրենց գերութեան շղթայիւք շնորհաւոր գործելու նորա կառաց անխնե՛րն : Դուք կոճղներ, քարեր, յոսեգոյն քան զանգղոյ առարկայս, ա՛հ, քարասիրաներ, անագորոյն Հոսովմայեցիք, դուք չճանաչեցի՞ք զՊոմպէ՛ս : Շատ անգամ պատերն ի վեր ելաք, աշտարակաց և ծրխնելու զից փաթթուեցաք մանուկ ի գիրկ, և մնացիք անդ ողջոյն ցերեկ՝ համբերատար սպասելով որպէս զի տեսնէիք զանցան Պոմպէի ընդ փողոցս Հոսովմայ, և ինչմարել միայն իւր կառաց չէ՛իք բառնար ցնծութեան ազազակ տիեզերական միշեւ զՏիրեր սարսեցունել իւր ամփանց մէջ : Եւ այժմ կը զարդարուի՞ք, և այժմ տօնի օր մի կը հռչակէ՞ք, և այժմ ծաղիկներ կը սփռէք ի ճանապարհի ա՛յնորի՞ որ կուգայ յաղթանակօք Պոմպէի արեան վերա՛յ : Այէ՛, վաղեցէք ի տուն, ծունր դրէք, ազօթեցէք որ ձերդ ապերախտութիւն չընդունի իւր պատուհաս արժանաւոր :

3. Այն հարցմունք եւս որոց պատասխան կը ըստ պատուի բայց չէ կարելի «այս՛» կամ «ո՛չ» պատասխանել, յաճախ կը պահանջեն իջուն ոլորումն, ինչպէս նաեւ պատասխաններն :

Ի՞նչ ժխոր է այ՛ս :

Ե՛րբ կ'երթաք ի Հոսովմ :

4, Իջուն ուրբումն սովորարար կը գործածուի այն ամենայն գաղափարաց համար որք ծանօթ, կատարեալ կամ առաջնորդող են. նաեւ ուր կը հրամայուի ինչ կամ կը հաստատուի դրականօրէն:

Սօսէ՛, կ'ամբաստանեմ զքեզ:

Պիտի արտասուէ՛ երբ վերագտանայ:

5, Ելուն ուրբակն սովորարար կը գործածուի այն ամենայն գաղափարաց համար որք թէ՛ական, պայմանական, դիպուածական, անկատար են, կամ տարակուսական, անստոյգ, բացասական են. կամ զիջում, քաղաքավարութիւն, սքանչացում, գորով կը յայտնեն:

Թէ՛եւ զիս սպաննէ՛, եւ պիտի սիրե՛մ զինքն:

Երբ վերագտանայ պիտի արտասուեն, ոչ տազնասլի եւ ճղնաժամո՛ւ այլ երախտագիտութեա՛ն եւ ուրախութեա՛ն արտասուք:

Որք յառուելն նկրտի՛ն, առ ի նուազն տկարանա՛ն:

Ուրբման նշանն ամեն տեղ մի եւ նոյն աստիճանի գորութիւնն շնչանակեր: Ուրբման յարմար աստիճանն պարտի որոշուիլ խօսքին իմաստին համեմատ եւ բացատրութեան հանգամանաց համաձայն: Օրինակի աղաղաւ, եթէ ի տես այս ինչ անձին հարցնէ՝ ոք ու մեք պարզ հետաքրքրութեամբ «իշխա՞նն», կարի նուազ զօրութիւն կը դնէ ելուն ուրբակին մէջ քան եթէ հարցումն լինէր այն անձի կողմանէ, որ իւր հարուածոյ ներքեւ դիակնացեալ անհատին նկատմամբ կը հարցնէ սաստիկ յուզմամբ, ստուգիւ չդիտնալով թէ՛ ո՛վ է իւր զոհ. «իշխա՞նն»: Առաջին օրինակին մէջ ուրբակն է հասարակ, երկրորդին մէջ ուժ գիւն՛:



Ե Լ Ո Ի Ն Ե Ի Ի Զ Ո Ի Ն Ո Լ Ո Ր Մ Ո Ի Ն Զ Ի Մ Ի Ը Ս Ի Ն

Յորժամ բառք կամ պարբերութիւնք իրարու հետ բազդատեալ են կամ միմեանց հակադրեալ, սովորաբար առաջին մասն կ'առնու ելուն ոլորակ, երկրորդն՝ իջուն:

Ամբա՞ւ ըսել պարտ է թէ անբա՞ւ:

Տեսած եմ ես արդիւնքն սիրո՞յ և ստեղծութեա՞ն, ուրախութեա՞ն և արամութեա՞ն, յուսո՞յ և յուսահատութեա՞ն:

Ընկզմի՛լ թէ լողա՛լ, ասլրի՛լ թէ մեռնի՛լ, կեա՛լ կամ կորնչի՛լ:

Երա՛զ մանաւանդ կը թուի քան իրական կեա՞նք, վէ՛պ մանաւանդ քան ահաւոր իրողոթի՛ւն:

Հոմէր մեծագոյն հանձա՛րն էր, Վիրգիլ լուսագոյն արուեստագէ՛տն. ի միումն պարտիմք սքանչանալ ընդ մա՛րդն, ի միւսումն սիրանալ ընդ գո՛րծն: Հոմէր կը վարէ զմեզ հրամայական իմն ուժգնութեա՛մբ, Վիրգիլ կ'առաջնորդէ գիւթիչ իմն վեհափառութեա՛մբ: Հոմէր կը ցրուէ անշափ առատաձեռնութեա՛մբ, Վիրգիլ կը շնորհէ զգուշաւոր մեծափայլելութեա՛մբ: Հոմէր, նրման Նեղոսի, արտաքս կը զեզու իւր ճոխութիւն յանկարծածան յորդմա՛մբք, Վիրգիլ, հանգոյն գետոյ որ կը մնայ սահմանափակ իւր փանց մէջ, հաստատուն հոսանսօ՛ք:

—Ըստ որում կեսար կը սիրէր զի՛ս, կ'արտասուե՛մ իրեն համար, ըստ որում բարեբաղդ է՛ր կուրախանա՛մ ընդ այն, ըստ որում քաջ է՛ր կը պատուե՛մ զինքն: Աքսաստաք կան իւր սիրոյ համա՛ր, խնդութիւն

Իւր բաղդատորութեան համա՛ր, պատիւ իւր արութեան համա՛ր, և մահ իւր փառասիրութեան համա՛ր:

— Օգոստեայ պարծանքն էր այն զի գտաւ զՀնովմ կղմինարէ՛, և թողուց զայն մարմարեա՛յ — գովեսա ոչ անարժան մեծի իշխանի —: Սակայն ս՛րբան աւելի ազնիւ պիտի լինի մեր վեհապետի պարծանքն, որ գտաւ զօրէնքս մեծածա՛ւի, և թողուց զայն աժանագի՛ն. գտաւ զայն կնքեալ իմն մատեա՛ն, թողուց զայն բացեալ գի՛ր. գըտաւ զայն հարստին ժառանգութի՛ւնն, թողուց զայն բաժին աղքատի՛ն. գտաւ զայն երկասյրի սուրն նենդութեան և հարստահարութեա՛ն, թողուց զայն իրր ցուպ պարկեշտութեան և վահան անմեղութեա՛ն:

Երբ բաղդատեայ կամ հակադրեալ գաղափարաց մին բացասական, միւսն հաստատական է, ընդհանրապէս բացասականն կ'առնու ելուն ոլորակ, հաստատականն իջուն, ինչ կարգաւ ալ որ շարագասեալ լինին. զոր օրինակ,

Մարդոց՝ ոչ թէ կենդանեաց պիտի լինի որսորդ:
Այս գիրք էմս չէ՛, քոյդ է՛:

Երբ խորհուրդք շեն լուրջ, այլ հեղնական, երկդիմի, ծաղրական, իջուն և ելուն ոլորմունք գիտմամբ իրարու փոխանակ կը դրուին. իջուն ոլորակն կը գործածուի այնպիսի տեղեր ուր այլասպէս պիտի լիկր արկանէինք զայն, նոյնպէս և ելունն, զոր օրինակ.

Կը խորհի հեծնե՛լ ոչ թէ քալե՛լ:

Երբէք չկարծեցի թէ դո՛ւք կրնայիք լինիլ:

Եթէ ելուն և իջուն ոլորմունք միեւնոյն բառին վերայ միանան, հեղնական կամ երկդիմի իմաստն աւելի ուժգնապէս կը յայտնուի. —

Եթէ Հրա՛նան է որ ասիկա կ'ըսէ, ուրեմն ա՛մէ՛ն սք պարտի հաւատալ, անշու՛շտ:

Ներսն առաքինի՝ իշխան մ՝ էր :

Կ'երգէի՝ք , շատ լաւ , և այժմ պարեցէ՝ք :

Գ Ե Ս Է

Ս Ը Հ Ո Ւ Մ Ն

Սահումն , ինչպէս անունէն կ'իմացուի , ձայնի այն սահուն շարժումն է , որով՝ բազդատարար նուազ կարեւոր մասունք խօսից կը գործուին նուազ ազդեցական ականջին , և ի շնորհս որոյ ազդ՝ ցիկ բառք և բանք առուել որոշ և զօրաւոր առողանութիւն կրնան ընդունիլ :

Պնդեալ կամ ազդու բառերն , կամ զլխաւոր խորհրդոց արտայայտիչ բառերն սովորաբար կը հնչուին աւելի բարձր և աւելի զօրաւոր ձայնիւ , և են յաճախ երկարեալ ևս , մինչդեռ սահող բառերն կ'արտասանուին նուազ բարձր ձայնիւ և նուազ ճգամբ , առուել արագութեամբ և բոլորն միօրինակ կերպիւ :

Սահումն կը գործածուի փակագծի մէջ առնուած մասանց համար , կրկնութեան համար , ի մի բան՝ ուր որ խօսքն բազդատական փոքրազոյն կարեւորութիւն մ'ունի , յաճախ ևս այն բառեր՝ որովք կ'որակեմք զտեղին , զկերպն , զժամանակն :

Սահումն հակադիր մասն է պնդման , և մին միւսոյն արդիւնքն ու օժանդակն :

Հետեւեալ օրինակաց մէջ ստորագծեալ բառերն աւելի ծանր և ազդու առողանութիւն կը պահանջեն , իսկ ոչ ստորագծեալներն սահուն , միօրինակ , արագ , ցած արտասանութիւն : —

Մ արդ կ ու լ թ իւ ն ն , ըսած է Փասքալ , կը բնայ ն կ ա ա ու ի լ ի բ բ և ն ո յ ն մ ար դ ն որ կ ը ա և է ց ա ն դ և որ կը ս ո վ բ ի շ ար ու ն ա կ :

— Անգղերա մասնակից է գործունէսւթեանն Հիւսիսային Ամերիկացւոց, որք իւր զաւակունք են, և իմացական զօրութեանըն Գերմանացւոց, որ խոր հայրերն են, առանց նոցա շափ իրաւաւ շալին ելու կամ սոցա շափ մէտ ի վերաց սւսման և ի դադարականութիւն:

— Յոյնք, զոր կրնանք սակայն նկատել քան զամենայն քաղաքակրթեալն հին աշխարհի ժողովրդոց, շղթրին երբէք զկրնն ի վեր քան զգերի: Ենդ ի պտոս միայն, ինչպէս պիտի տեսնեմք, ըրաւ զկրնն գրեթէ հաւասար առն:

— Եթէ կայ զօրութիւն ինչ ի վեր քան զմեզ — և կայ արդարեւ, համայն բնութիւն կ'ազազակէ իւր գործերով — պէտք է որ հաճի ընդ առաքինութիւն, և ընդ որ նայն կը հաճի՝ պարտի լինիլ երջանիկ:

— Ո՛չ, որքան և պատուական է ազատութիւնն, և յաշտ իմ անգին է անոր պատուականութիւն, աւելի պիտի սուղէի եմ Ինքն լինիլ Գերի և կրեկ կԱՊԱՆՔՆ, քան գնել զայնս ՆՈՐԱ վերայ:

ԳԵՍ Է

Չ Ա Յ Ն Ի Ա Ս Տ Ի Ճ Ա Ն Ք

Մին այն զանազան փոփոխութեանց որք ձայնին կուտան դիւթիչ իմն պէսպիսութիւն՝ է ձայնի աստիճանի ելեւէջն ըստ իմաստից և զգացմանց: Հազիւ ուրեք կը պատահի խօսք մի որոյ ամէն բառն միօրինակ բարձրութեամբ ձայնի ասոզանել պէտք լինի:

Յայտնի է թէ յերաժշտութեան որքան բազում են

ձայնի աստիճանք, որոց համապատասխանող աստիճաններն, ստորագունէն ցրարձրագոյնն, կը գործածուին յատենախօսութեան: Լաւ կը լինի սակայն շափ առնուլ մեզ այն աստիճանն զոր ի հասարակ խօսակցութեան կը գործածեմք սովորաբար, և զոր կրնամք անուանել ԽՕ-ՍԱԿՑԱԿԱՆ, աստիճան: Յայնի է թէ պոռոտախօս անհասաներ կան, ինչպէս նաև ժողովուրդներ: Քրդաց խօսակցական ձայնի աստիճանն յաւէտ բարձր է, ինչպէս նաև լեռնոտ տեղեր բնակող Հայոցն: Քաղաքակիրթք նուազ բարձր ձայնիւ կը խօսակցին քան բարբարոս ցեղեր:

Եթէ ձայնն ստորին է քան զխօսակցականն, կը կոչեմք ՑԱՄ. եթէ բարձր է քան զխօսակցականն, այսինքն՝ երբ մեծ բաղմութեան մի լսելի լինելու աստիճան ունի, կը կոչեմք ՃԱՌԱԽՕՍԱԿԱՆ, աստիճան. իսկ երբ աւելի բարձր աստիճանաց ելնէ, կը լինի ԲԱՐՁՐ կամ ԳՈՉՈՒՆ: Գոչուն աստիճանն այն է որ կը գործածուի հեռուն եզող զոմն կոչելու համար. այս աստիճանաւ ձայնի պարտ է առագանել վսեմ և խնդազին զգացումներ և բուն սրբաայու զութիւններ: Չայնի ՑԱՄ աստիճանն գործածելի է ի բացարեւ մեծարանք, վեհութիւն, ահ, փափուկ զգացումներ:

(Խօսակցական) Յայնժամ Դաւթի բարկութիւնն յայժբորբոքեցաւ այն մարդուն զէմ և ըսաւ ցնաթան. «(Ճառախօսական) Արէն կենդանի է որ այրն որ գործեց զայդ, մահապարտ է. և քանզի այդպէս ըրած է այրն և չէ խնայած յոչխարն, միայն փոխարէն (Գոչուն) շորս (Ճառախօսական) պիպի հատուցանէ:» (Խ) Յայնժամ Նաթան ըսաւ ցԴաւթիթ. «(Գ) Դու ես այրն այն:»

— (Խ) Բարետիրտ ոգիներ, ի՛նչ, կ'արասաւէք մինչդեռ մեր կեսարի վիրաւորեալ բաճկոնն միայն կը տեսնէք: Հոս նայեցէք: (Ճ) Ասա է ինքն իսկ, արիւնա-

թաթաւ կղած, որպէս կը տեսնէք, (Գ) ի ձեռն մատնը-
շաց :

— (Կարի ցած) Կէս գիշերի սուրբ ժամն է . այժմ էր-
առութիւնն, զողորիկ ոգւոյ մի հանդոյն, կը թխտէ հան-
դարաիկ և անարտի աշխարհին վերայ : Ունկն դիք, զան-
գակի խուլ ձայնն ի թևս հողմոյ կ'ընթանայ — շու-
տակալ ամին մահու զանգակահունչն է այն :

— (Յած) Կ'որոտա՛յ : Որդի՛ք փռչոյ, խոնարհեցէք
մեծարանօք : Ո՛հ չինաուուրց, Գու կը բարբառիս ի բար-
ձանց . Հգօ՛ր, իբրև մանուկ երկչոտ ևս դողաչար ուն-
կըն դնեմ ա՛հաւոր ձայնիդ : Խոտվեալ, պակուցեալ, դէտ
կամ քո զարհուրելի փայլատականց, և յանդուևդ գե-
րեզմանին իսկ կամէի թողուցանել զիմ գլուխ :

— (Այնքան ցած որքան հնար է) Յախտենականու-
թի՛ւն, խորհուրդ հաճոյական, ահաւոր :

— (Քաւական ցած) բարեկա՛մք, Հոսվմոյեցի՛ք, Հայ-
րենակի՛ցք :

— (Ճառախօսական) Նա բարեկամ էր ինձ արդար,
հաւտարիմ :

— (Գոչուն) Փառք ի բարձունս Աստուծոյ, և յեր-
կիր խաղաղութիւն, իմարդիկ հաճութիւն :

— (Այնքան բարձր որքան հնար է) Գնացէք, հնչեցէք
զանգակներն :

— (Խ) Եւ ահա ծովեզրէն դարձեալ կը լսուի պահա-
կին աղաղակն որ կը գոչէ «(Գ) Պէտք է մազլցես ժայռն
ի վեր, կեանքդ ազատելու միակ միջոցն է իսկոյն ելնել
ժայռին վերայ :»

ՃԱՌԱՅՈՍԱԿԱՆ աստիճանն այն է զոր երկար ըն-
թերցմամբք պարաի մշակել ատենախօսութեան վար-
ժուողն, այնպէս որ ձայնն, ճառին մեծագոյն մասին մէջ,
կարենայ լինիլ ողորկ, անոյշ, լեցուն և զօրաւոր :

Ահաւասիկ հատուած մի զոր պարտ է ընթեանուլ

ՃԱՌԱԽՈՍԱԿԱՆ ձայնիւ :

— Ի՞նչպէ՞ս ուրեմն դարմանանք եթէ Եգիպտական ճարտարապետութիւնն կ'ընծայէ զայն կայունութիւն, զայն հանդիսաւորութիւն, զայն վեհ միակերպութիւն զորքս այնպիսի շարժով շիք ուրեք դտանել մարդկային գործոց մէջ : Եգիպտոս կը ստակայր յանձանէ որ կը կորնչի և յայնմանէ որ կ'անցնի : Ուստի առաւել քան զամենայն ազգս և ազինս աշխատած է նա վասն յախանականութեան : Նորա յիշատակք քան զամենայն հնագոյնքն ևն աշխարհի, և թերեւս պիտի մնան նոքա երբայլ ամենայն անցնին : Յորժամ մերս երկրագունձ՝ ցըրտացեալ և խոզանացեալ՝ թաւալի ի միջնցի, յորժամ վերջին մարդն կորնչի, և հպարտագունիցն խկ մեր գործոց փոշին ցրուի, թերեւս այն մեծ բարոն որ իբր շիրիմ՝ ծառայեց Խէօպսի, տակաւին պիտի մնայ սո՛ժամանակ մի, գերագոյն նշխար՝ աշխարհի մի աւերակներէն. թերեւ՛ս, ի խորս անդ անրոնարարեալ մի շիրմի, զմասիկ մի պիտի շարունակէ անվրդով իւր դարաւոր քուն, ունենալով ցանգ իւր շուրջ այն առարկաներ որք զիւթեցին իւր կեանք, և որմոց վերայ՝ յաւերժական ժոյճին մէջ քանդակեալ՝ գնկարս իւր հինաւուրց հաճոյից : Թերեւ՛ս, մեր քաղաքակրթութեանց արչալուսոյն ծաղումբն զառաջինն տուած լինելէ յետոյ՝ Եգիպտոս պիտ' լինի վերջինն որ, մշանջենապէս անձայն ու անբնակիչ երկրին վերայ պիտի հռչակէ թէ՛ մարդն ապրած է :

ԳԵՍ Գ

Չ Ը Յ Ն Ի Զ Օ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն

Չայնի պէսպիսութիւնք ոչ միայն աստիճանի ելեւէջով այլ և քանակային փոփոխութեամբք կրնան գոր-

ծուիլ : Չայնն մի և նոյն աստիճանի բարձրութիւն պահելով հանդերձ կրնայ տարբեր զօրութիւն կամ ուժղնութիւն առնուլ ըստ քանակային տարբերութեան օգոյն զոր դուրս կուտամք բառերն հնչելու համար : Ի մասին ուժղնութեան՝ դանդակին ձայնն կրնայ յանհունս դանազանիլ, թէ և ձայնաստիճանն միևնոյն է թէ կարի մեղծ թէ կարի ուժով հարուածի ներքև :

Օրինակի համար առ « յառաջ » բառն, և ասոյցանէ ասան տարբեր զօրութեամբ, մեղմագունէն սկսեալ հասիւր դամ քան զզամ աւելի ուժղնին, հոգ տանելով որ ձայնագրական մի և նոյն աստիճանն (զոր օրինակ Ֆա) ցանգ պահպանես :

Ընդհանուր կերպիւ կարելի է, ըստ զօրութեան, բաժնել զձայն ի Մեղմ, ի ՉԱՓԱՒՈՐ և յՈՒՓԳԻՆ :

Մեղմն, կամ ձայնի ստորնագոյն աստիճանաց զօրութիւնն, կը գործածուի ի բացատրել զգուշութիւն, երկիւզ, գաղտնիք և փափկիկ զգացումներ :

(Մեղմ) Լսեցի՞ր զեփեփսին շշուշն, որ այնքան յուշիկ անցաւ մեր քովէն ընդ մէջ գովաստուեր ծառոց անաստին :

(Յոյժ մեղմ) կը քնանան : Ո՞վ են սա քնացողներն : Կանգ առ վայրիկ մի, յուշիկ քայլէ, հոգատար բարեկամք սիրալիր հսկողութիւն կ'ընեն քնացողին անկողնոյն : Լըքած այլ ամենայն յոյս, մի միայն կ'աւսածեն — դա խորին քունն : Մի՛ խօսիր, մի՛ գուցէ քնացողն զարթնու առնուշիկ փրկուէա քնէն :

Չայնի միջակ կամ շափաւոր զօրութիւնն կը գործածուի նկարագրութեան, պատմութեան, առանց կրից խորհուրդներու և շափաւոր սրտայուզութեան մէջ :

(Չափաւոր) Վասն է՞ր բնութեան գործերն այնքան կատարեալ են. վասն զի մէն մի գործ է մի ամբողջ, և

զի նա կ'աշխատի յուսելու ական ինչ յատակագծի վերայ յորմէ ո՛չ երբէք կը շեղի: Լոխկ մնչիկ կը պատրաստէ նա իւր արտադրութեանց ծիւերն, միակ զործողութեամբ մի կը նախագծէ ամենայն կենտուոր էակի նախնական ձևն, զոր և կը զարգացունէ շարունակ և կը կատարելագործէ յորոշեալ ժամանկին: Գործն կը զարմացունէ, սակայն աստուածայինն այն զորո՞՞մ՝ զոր նա կը կրէ՝ պարտի մանուանդ հիացունել զմեզ: Մարդկային միտքըն ոչ ինչ ստեղծել կը զօրէ՝ միայն փորձառութեան և խոհման՝ միջոցաւ սերմերնկալ լինելէ յետոյ՝ նա արտագրէ պիտի իւր ծանօթութիւնք և իւր արդասեաց ծիւերն: Սակայն եթէ նա նմանող լինի բնութեան իւր ընթացից և աշխատութեան մէջ, եթէ մտաց հայեցողութեամբ բարձրանայ ի վսեմագոյնան ճշմարտութեանց, եթէ զայնս յերկրէ, եթէ նոքօք կազմէ մի ամբողջ՝ մի զրութիւն՝ մտածութեամբ, հաստատած կը լինի անդրդուելի հիմանց վերայ անմահական յիշակերտներ:

Ուժգին, ձայնն իւր լիութեան այլ և այլ սատիճաններով՝ կը զործածուի զօրաւոր բայց զսպեալ կրից մէջ, ցաւի, վշտի, մեծարանաց, վեհութեան և սրտաբեկութեան մէջ: Ետքամ բուռն են կիրք և ահաւոր են յուզմունք, ձայնն կը լինի յոյժ ուժգին:

(Ուժգին) Եթէ երևոյթն առնու զիմ ազնիւ հօր կերպարան, խօսի՞մ պիտի նմա թէ և նոյն ինքն զժողք բացուին և ինձ լուել հրամայեն:

—(Կարի ուժգին) Կատաղիք թող անիծեն զքեզ յորժամ դուրս ելնես՝ թող բոցավառ արեզն հարուածէ զքեզ ժանտախախ: Թող անմեռ իժք կրծեն քո սիրտ թող մարդկութիւն խոյս տայ ի քէն, և դու քեզ խկլլնիս ատելի աղօթես ու մաղթես մահ, և սակայն անթիւ զարեբ անցունես ի տառապանս օրհասական:

Չ Ա Յ Ն Ի Ո Ր Ա Կ Ն Ե Ր Ն

Որակն կը նշանակէ արասանեալ ձայնին տեսակն, երկու ձայներ կրնան նոյն աստիճանն և նոյն ուժգնութիւնն ունենալ, և տակաւին տարբերիլ որակութեան կողմանէ: Զութակին և դաշնակին հնչումներն կրնան ի մասին աստիճանի և զօրութեան համաձայնիլ միմեանց, և և տակայն են և մնան աննման ըստ որակի: Որակային տարբերութեանց շնորհիւ է որ անհատից ձայներն կը զանազանին յիբերաց:

Ձայնի որակային պէսպիսութիւնք յառողանութեան են զլիսաւորապէս հետեւեալ հինգն, այսինքն ՅՍՏԱԿՆ, ԲՈՒՈՐԱԼԻՐՆ, ՀԱԳԱԳԱՅԻՆՆ, ԿՈԿՈՐԴԱՅԻՆՆ, և ԴՈՂԴՈՋՈՒՆՆ:

ՅՍՏԱԿ ձայնն է պարզ, սզորկ, հնչուն ձայն, որ ընդ հանրապէս ընկերացած կը լինի միջակ ձայնաստիճանի և կը գործածուի ի բացատրել ցնծութիւն, զուարթութիւն, հանգստութիւն և սէր: Հետեւեալ օրինակն Յստակ ձայնիւ ընթեռնելի է: -

Զուարթութիւն կայ անդ ի լերին. կայտառ և զջերուք, դարթուցեալ ի քնոյ, կը խայտան և կ'սաստան ժայռերուն վերայ իրրեւ ծնողական ծնգաց վերայ: Պայծառ է օդն, անրիծ է կամարն, և Արեգին ջեռուցիչ գոլուանաց ներքեւ ամէն ինչ գուարճանալ կը թուի:

ԲՈՒՈՐԱԼԻՐՆ է ստակ ձայնն՝ բայց խորացեալ, լայնացեալ, սասակացեալ: Այս ձայն մասնաւորապէս կը պատշաճի հաւթիւ և ահագին բացատրութեանց, մեծ և

վսեմ գգացմանց : Հեաեւեալն յարմար կտար մ' է այս ձայնիւ առողանելու :

— Տարբեր կարգեր կան մեծութեան : Ի միջի սոցա առաջին աստիճանն կը պատկանի անտարակոյս բարոյական մեծութեան, մ ե ծ ա չ ո գ ի ու թ ե ա ն, այն վսեմ գորութեան որով հոգին սիրահարեալ առաքինութեան՝ կը յարի մշանջենապէս ի ճշմարտութիւն և ի պարտիս իրբեւ իւր անձնական շահերն կ'սրղեզրէ մարդկութեան շահերն, կ'արհամարհէ ամենայն նաաստութիւն, կը քամահէ ամենայն վրասանգ . կը լսէ ի խղճի իւրում ձայն մի ուժղնագոյն և՛ ս քան զձայն սպառնալեաց և որոտմանց . կը դիմադրէ փեղեբաց բոլոր այն գորութիւններուն որք սլխաի ուղէին քակել զինքն առաքինութեան և արդարութեան դատէն, կը դնէ աներկմիտ վասահութիւն յԱստուած ի խաարչուտ ժամու, և միշտ պատրաստ է զոհուելու մարդկութեան . . սեղանոյն վերայ : Յեա բարոյականին կուզայ իմացական մեծութիւնն կամ հանճարն՝ բառին բարձրագոյն ասմամբ . և այսու բնել կ'ուզեմք խորհրդոյ այն վսեմ ընդունակութիւնն որով հոգին, սիրահար ճշմարտին և գեղեցկին, կը նկրտի հասու լինել փեղեբաց, կը ճախրէ յերկինս, կը թափանցէ յերկիր, կը թափանցէ ինքն իրեն, կը հարցաքննէ անցեալն, կը գուշակէ սպառացն, ի վեր կը հանէ բնութեան ընդհանուր օրէնքներն, իւր գիտութեան բոլոր աւարկաներն միմիանց կը կրպէ անհամար խնամութեամբք և յարաբերութեամբք . և, ո՛չ շատանալով այնու որ հունար է, կը յօրինէ իրեն համար գաղափարական գերագանցութիւն, սիրականութիւն և մեծութիւն : Ապա կուզայ զործողութեան մեծութիւնն . այսինքն վսեմ կարողութիւնն բմբունելու և ի դործ

դնելու համարձակ և ընդարձակ ծրագիրներ. կողմելու և գործածելու առ աւագ ինչ վախճան գրարդ մեքենայս միջոցաց, զօրութեանց և կարողագրութեանց, և ի գլուխ հանելու մեծամեծ արասքին արդիւնքներ :

ՀԱԳՎԳԱՅԻՆՆ Կը ասորերի յտակ և մաքուր ձայնէն այնու գի բուն և ուժղին արասքամար շնչոյն կ'արատրերի, որպէս աստիկ հեւալուսւ պահուն կը պատահի : Հեանեալ օրինակաց մէջ հաղագային կամ հեւուն ձայնի պարտ է առողանել ստորագծեալ բաներն : —

Ի՞նչ յոսի կը վասի սա ճրագ : —

Ա՛հ, ս՛վ է եկողն : — Յուրս քրտանք կը ծածկեն մարմինս գողահար, արիւնս կը սառի եւ ես յահէս կը սարսափիմ :

— Մինչ խուն բողմութիւն քողաքացոց՝ ահարեկ՝ կը շնչէ դալուկ շրթամբ — « Թ՛շնամին, կու գան, կու գան » :

— Վասն այսր և վասն համօրէն անզգամութեանցն զոր գործեցին, ս՛վ Ամենակալ, անիժեալ լիցին յաւիտեան :

Ինչպէս վերի օրինակներէն կ'երևի, հաղագային որակըն կը գործածուի ի բացատրել աղչութիւն, ստեղծ, վերէժ, սարճանք և ցտուտի :

ԿՈՒՍՈՐԴԱՅԻՆ, ձայնն խոր և ստոր է, և կը գործածուի գարչու մե, ատելութիւն և արհամարհանք բացատրելու :

Դու սարսուկ, դու հէք, դու զառիճո՞ւ կը կրես մորթ :

— Դու ս՛րդ, դու իժ, դարձիր ի քոյդ բնիկ հող : Ի բա՛ց : Չես արժանի որ մարդ կոխ է իսկ քս վերաց : Խի ս՛ւնջ, սսղո՛ւն գարչե լի :

ԳՈՂԳՈՋՈՒՆ ձայնն կը կազմուի յոյժ կարճատև, մղմամբք ձայնի սրք մի միում արագ կը յաջորդեն: Չայնի այս սրակն կը գործածուի ծայրագոյն վշտի, ազերսարկութեան, խանդազատանաց, յուզեալ գոհունակութեան մէջ, կամ եթէ ձայնն տկարացած է առ ձերութեան:

— Կեցի՛ր, բանասպետ, կեցի՛ր, և լսէ իմ վ ա յ ե ր: Այն որ ի գ ո ս ի ճ ո կ ի յնայ ք ո ա ո ջ ե լ չ է յ ի մ ա ր, զի որ ինչ ե մ ն յ ո յ ժ լ ա զ ի տ ե մ, զոր ինչ է ի, և զոր ինչ պ ա ր ա է ի լ ի ն ի լ:

ԳՆՍ ՅՆ

Ա Ր Ա Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԿԱՄ

ԸՆԹԱՅՔ

Խօսիլն շիրնար միշտ միեւնոյն բնթացքն ունենալ նիւթին, խմաստին և կրից համեմատ է նորա շարժումն: Ինչպէս քայլքն այնպէս խօսիլն ունի արագութեան անհամար և զանախաւորութիւններ: Հայոցս միասումն է ծանրը խօսիլ, ուստի և պէտք է Հայ ասանախօսին հոգ սանել արագ լինելու:

Ընթացքի անթիւ աստիճաններն կարելի է երեք բաժանմանց ներքև դնելով բուլթէ կայ ՅԱՄՐ, ՄԻՋԻՆ և ԱՐԱԳ բնթացք:

ՄԻՋԻՆ կամ ՉԱՓԱՅՈՐ ԸՆԹԱՅՔ կը յարմարի սովորական սրատուութեան և նկարագրութեան, զուարթութեան, և զգացմանց մեղմ ձևերուն:

(Չափաւոր բնթացք) Եւս առաւել զարմանալի իւր բարուց մնացելոյն մէջ, օձն գիտէ, որպէս զայր մարդասպան, ի բաց բնկենուլ զիւր սրատուձան ար-

եամբ արատաւոր, շիցէ թէ՛ զինքն ճանաչեն: . . . Կը քնանայ ամբողջ ամիսներ, կը յաճախէ ի գերեզմանս, կը բնակի յանձանօթ վայրս, կը բաղադրէ թոյնէր որք կը սառուցանեն, կ'այրեն զգոհն, կամ կ'արատեն այն զոյներով որովք ինքն իսկ նշանակեալ է: Աստ՝ վեր կը վերցունէ կրկին գլուխներ սպառնալից, անդ՝ զանգակ կը հնչէ. կը սուլէ իրբն զարծիւ լերին, կը մըռնչէ իրբն զցուլ: Առարկայ սոսկման կամ պաշտաման, մարդիկ կը կրեն դէպ ի նա անողոք տակուր թիւն կամ պաշտօն կը մատուցանեն նորա հանձարոյն: Պարէութիւնն զա՛յն կը կոչէ, խոհեմութիւնն զա՛յն կը խնդրէ յօգն, նախանձն զա՛յն կը կրէ ի ծոցի, և պերճախօտութիւնն զնորին ունի դաւաղան: Ի Դժոխս, նա կը զինէ զմարակ կատաղեաց. յերկինս, յախանականութիւնն զնա կ'ընէ իւր նշանակ:

ՅԱՄԲ ԸՆԹԱՑՔՆ Ի կիր արկանել պարս է մեծութեան, ընդարձակութեան, վսեմութեան, պաշտաման կամ երկրպագութեան և սոսկման մէջ:

(Յամբ) Անդր քան զկամարն աստեղադարդ ի՞նչ կայ արդեօք: Ա՛յլ աստեղադարդ երկինք: Բարսո՛ք՝ Եւ անդրագոյն քան զայն: Մարդ կային միտքն, անյաղթելի ինչ զօրութենէ մղեալ, ո՛չ երբէք պիտի դադարի ինքն իրեն հարցնելէ. ի՞նչ կայ արդեօք ե՛ւս անդր: Ան ոչ ինչ կը ծառայէ պատասխանել ե՛ւս անդր ևն անասճման միջոցք, ժամանակք, մեծութիւնք: Ո՛չ ոք կը հասկնայ այդ խօսքեր: Նա որ կը հռչակէ զգոյութիւն անհունին, և ոչ ոք կրնայ խուսափել անկէ, յայդմ իսկ կը դիզէ գերբնական առուել քան որչափ կը գանուի բոլոր կրօնից բոլոր հրաշքներուն մէջ, քանզի անհունի գաղափարն սա երկու հանգամանք ունի զի ինքզինքն ի հարկէ իմն ընդ ունիլ կուտայ և կը մնայ անհասկանալի: Յորժամ միտքն բռնուի այս գա-

զափարէն, ոչ այլ ինչ կը մնայ բնել բայց եթէ երկր-
պագէլ գեանամած : Աստուծոյ զաղափարն անհունի
զաղափարին մէկ ձևն է : Յորչափ անհունին զաղանիքն
ձնչէ մարդկային խորհրդոյն վերայ, տաճարք կառուց-
ութիւն պիտի :

(Կարի Համբ) Ո՞վ Յաւիտենականդ, որոյ վեհափառ
ներկայութիւն կը ընու գրնաս, կը վարէ ամենայն շար-
ժումն : Է՞ր գերազոյն քան զէս Համօրէն, Հոօ՞ր դոր ոչ
ոք կը բաւէ առնուլ ի միտ, դոր ոչ ոք կարէ արկանել
ի քնին :

ԱՐԱԳ ԱՆԹԱՅԲԻՆ գործածելի է ի բացատրել մոլե-
զին ցասումն, յանկարծական երկիւղ, ցնծութիւն, հրըճ-
ուանք, կամ երբ արագաշարժ գործողութիւն մի կամ ա-
րագ կատարուած զէպքերու, շարժումներու շարք մի
կը նկարագրուի :

(Արագ) Միշտ աէր իւր թոշանի ի ծայրագոյն իսկ ա-
րագութեան, ծիծեռնակն ամէն վայրկեան կը փոխէ ա-
նոր ուղղութիւնն : կը թափ նկարել յոգս բաւիղ շար-
ժուն և փախստական որոյ ճամբաներն կը կարեն զի-
րար, կը յերիւրին միմեանց հետ, կը փախչին յիրերաց,
կը մօտենան մի միում, կ'ընդհարին իրերաց, վեր կ'ել-
նեն, վար կ'իջնեն, կը կորսուին և նորէն կ'երևին իրար
կարելու և կնճռատելու համար հազար ու մէկ տար-
բեր կերպերով որոյ յատակագիծն՝ յանչափ բարդ ու-
թեանէն՝ անկարելի է թէ ներկայացուի աշաց ի ձեռն
նկարչական արուեստին, և զոչ հազիւ կրնայ բանին
գործինն ցուցնել երևակայութեան :

(Յոյժ Արագ) Լիճն պատառած է, լիճն պատառած
է, ճեղքերու մէջէն վայրագ կոհակք կը փախչին կ'ըն-
թանան կ'արաշուեն որոտալից երգով գիմելով զէպ
ի ծափն կարօտով սպասող :

Հ Լ Բ Յ Պ Ը Տ Ը Ս Խ Ը Ն Ի Ք

ԵՒ

Ճ Ը Բ Ք

Չայնի պէսպիսութեան այն զանազան տեսակներն աստիճանական, քանակային և որակական զորս բացատրեցինք, ինչպէս նաև ընթացքի եղանակներն, կրնան պատշաճիլ ամբողջ խօսքերու և հաստատաներու, սակայն իրողութիւնն այն է զի, ընդհանրապէս, ճառի մի այլ և այլ մասունքն, պարբերութեան մ'այլ և այլ նախադասութիւնքն, նախադասութեան մ'այլ և այլ բառերն, և մինչ իսկ բառի մ'այլ և այլ վանկերն կը պահանջեն ձայնի պէսպէս եղանակաւորութիւններ:

Հարց և պատասխաններու առողանութիւնն, օրինակի համար, կարեւոր և զգալի պէսպիսութիւն կը պահանջէ:

Երբ հաստատական խօսք մի կը յարուցանէ հարցում մի, հաստատականն աւելի ուժգին, բարձր և յամբառողանութիւն կը պահանջէ քան զհարցումն: Յորժամ հարցումն է որ կը յարուցանէ հաստատական խօսքն, հարցումն է որ պարտի աւելի ուժգին, բարձր և յամբառանիլ:

— Դիտեցէք այժմ միւսն. նախ և և առաջ իւր յանկարծակիսն մեկնուցն — ի՞նչ պատճառաւ: — Երևի ոչ ինչ — ի՞նչ հարկ կար: — Ուշ ժամանակ. ի՞նչ նպատակաւ, մանտանդ այն եղանակին: — Պօմպէի կայանն կ'այցելէ — ի՞նչ

դիտմամբ . զՊ ս մ պ է ս ո ս տ ե ս ն ե լ ս է . հ ա մ ա ր —
 դիտէր թէ նա յԱլիսոմ կը գտնուէր : — ն ս ր ա տ ս ու -
 ն ըն տ ե ս ն ե լ ս է . հ ա մ ա ր — ա ե ս ա ծ է ր զայն հազար
 անգամ : — Ի՞նչ կրնար ս է ր ե մ ն լի ն ի լ ա յ ն
 տ ե դ ե ր ի է ր մ ա ն զ ա լ ս է ն ն պ ա տ ա կ ն : —
 ՈՒԶԵՏ ԱՅՆ ՏԵՂ ԳՏՆՈՒԻԼ ՄԻԼՈՅԻ ԱՆԿԷ ԱՆՏՆԵԼՈՒ
 ՊԱՀՈՒՆ : (Այս վերջին պատասխանն , բոլոր խօսքերուն
 եզրակացութիւն , մասնաւոր ազդուութեամբ պարափ
 առողանիլ :

ՇԱՐԻՑ ընթերցման մէջ , ընդհանրապէս , անդամներ
 րըն հեազհեաէ աւելի բարձր և աւելի ուժգին ձայնիւ
 կ'առողանին , զոր օրինակ —

Աւելի երջանիկ և աւելի զգօն սերունդ մի զեռ
 ողջունէ պիտի մեր մեծ քաղաքաց վերև գնչանն կրօ
 նական և ընկերական փրկութեան : Բարձրացիր ուրեմն
 ի կապոյտ կամարի անդ , ս' իսաչ , ի վեր քան զչոզիս
 երկրի և զամպս երկնից , ի վեր քան զընազանցական
 աստուածսն որք ոչ այլ ինչ են բայց եթէ բնութեան
 զօրութիւնքն կամ մարդուն կիրքն , ի վեր քան զի-
 մաստասիրական աստուածսն , որք մտաց վերացուցում-
 ներն են միայն կամ նիւթոյ բազդականութիւնն : —

Եթէ շարքն բաղադրեալ է , այսինքն ելուն և իջուն
 շարքէ կը բաղկանայ , ձայնն պարափ աստիճանաբար
 բարձրանալ և ուժգնանալ ցվերջ ելուն շարին , և ապա՝
 իջուն շարին առաջին անդամէն սկսեալ՝ հեազհեաէ իջ-
 նել : Նաև , ելուն շարին անցնիւր անդամն պարափ կրել
 ելուն ոլորակ , իսկ իջուն շարին մէն մի անդամն՝ իջուն
 ոլորակ , բաց ի վերջընթեր անդամէն որ փոխանակ իջու-
 նի կ'առնու ելուն :

(Ելուն շար) Փոյթ չէ թէ ի՞նչ լեզուաւ իւր դասա-
 պարտութիւն արտասանեալ լինի . փոյթ չէ թէ ի՞նչ

արև, հնդկական թէ ամերիկեան, այրած լինի իւր ճակատ · փոյթ չէ թէ որ ազէտաւոր պատերազմի մէջ իւր ազատութիւն յափշտակուած լինի իրմէ · փոյթ չէ թէ ինչ հանդիսաւորութեամբք նա իրեալ լինի նա գերութեան սեղանոյն վերայ, (իջուն շար) այն վայրկեանին յորում նա սաք կը կոխէ բրիտանական սրբազան հողոյն վերայ, սեղանն ու Աստուածն ի միասին կ'ընկղմին փռչոյ մէջ · նորա հողին ազատօրէն կը ճեմէ իւր իսկ մարդկային վեհափառութեամբ · (վերջընթեր անգամ) նորա մարմին կը գոռողանայ մինչև խորտակել իւր շքեթաներ · և կը կենայ ինքն փրկանաւորեալ, վերածնեալ և արձակեալ ի շնորհս ամերիկեան ազատութեան անդիմադրելի գորութեան :

ԳՅԾ ԶԳ

ՃՆՅՆ

ՄԵՐ ՎԱՐՊԵՏԻ ՄԻ ՄԷԿ ԴԱՍՆ

Ահաւասիկ սքանչելի դաս մի Ֆրանսացի մեծանուն առողան Լըկուվէէն, որ ուսանողին զազափար մի կրրնայ տալ թէ որպէս պարտ է ուսումնասիրել ընթերցումածի մի մէն մի սաղն և բառն, և առողանել զայնս բոս պահանջմանց պէսպիսութեան :

Օր մ'իւր երկայն սրօնիւք կերթայր, շգիտեմ ուր, ճայն երկայն կտցաւ, պարանոցաւ ևւս երկայն :

(Յայտ է թէ երկայն բառին երիցս կրկնումն նկարագրական ազդուութիւն մ'ունի, զոր ընթերցողն պարտի զզացունել ունկնդրացն :))

Կ'երթար գետի մ'եղերքն ի վեր,

Ջուրն էր վճիտ որպէս յոյժ պայծառ աւուր :

(Պէտք է որ այս երկու տողեր միեւնոյն կերպիւ կարգացունին : Ոչ : Առաջինն պարզ պատմութիւն է, և պէտք

է առողանուի պարզութեամբ : Երկրորդն է սող նկար-
չական , պատկերն ականելի պարտի լինիլ ընթերցողին
բերանին մէջ , որպէս բանաստեղծին գրչին ներքեւ :

Մտածան ձուկն անդ հազար ու մէկ կ'ընէր պայտ
Ընկերութեամբ կանկաձկան :

(Օ՛, չէք ճանաչեր ձեր արուեստն ընթերցողի եթէ
կայտառ՝ դուարի՛ք և փոքր ինչ հեղնական ձայնիւ շքուց-
նէք այս արագաշարժ փոքրիկ ջութասակի երթեւեկն :

Ճայն դիւրաւ կրնար օգուտ քաղել ասկէ ,

Բաւ էր որ կացել ուղէր , դի մօտ էին եղերաց :

(Պարզ պատմական սողեր :

Բայց մտածեց թէ լաւ կ'ընէր սպասէր

Որ արտրժակ քիչ մ'աւելի ունենար :

(Ուշադրութի՛ւն . ահաւանիկ բնասորութիւնն կը նկար-
րի : Ճայն հեշտասէր է , սկրամոյ է մանաւանդ քան թէ
չաասակեր : Ախորժակն հաճոյք մ'է փափկակերներուն հա-
մար : Տուր ախորժակ բառին զայն պնդումն դոհու-
նակութեան զոր միշտ կը դարթացանէ խորհուրդն կամ
ներկայութիւնն այնր որ արտրժակի է : . . . Պիտի աւանէք
ընդ հուպ թէ այս ս'բքան օգտակար պիտի լինի ձեզ :

Կարգ կանոն ունէր կերոյ , կ'ուտէր որոշ ժամերուն :

(Դարձեալ բնասորութիւն կը նկարագրուի : Ճայն ին-
քն իրեն կարեւորութիւն առող մ'է , ինքզինք կը յարգէ :

Ժամանակ ինչ յետոյ արտրժակն եկաւ . . .

(Ճայն գոհ է :

Մօտենալով եղերաց թռչունն աեսաւ արնկաներ ,

Որք յատակէն կ'ելնէին ի կայանից դէպ ի վեր :

(Տողեր նկարչի , սողեր սխրալի՛ր : Կը բացատրեն այն
: գացողութիւն զոր կրած էք երբեմն ի ձկնորսութեան ,
յորժամ ջրոյ քօղոյն ներքեւ նշմարած էք նախ ընդ ա-
զօս , ապա որոշապէս նկարաւիլն և յետոյ երեւնալն մա-
կերեսին ձկանցն որք վեր կ'ելնեն դետոյն խորերէն : Նը
կարեցէք , նկարեցէք ձայնիւ :

Չհաւնեցաւ այս կերոյ , լաւագունին ակն ունէր :

Արհամարհոս ցոյց ճաշակ, որպէս զմուկն Հարստի :
(Բնաւորութիւնն կը շարունակուի :)

Ես արնկա՛յ ուտեմ, ևս, ճայս, արնկա՛յ,
Աս ո՞ւնին զիս, մեղա՛յ, մեղ՛այ :

(Նկատէ ինչպէս ճայ բառին ձ գիրն կը ճայթեցունէ ճայն արհամարհանօք :)

Յոտեալ զարնկայս, գտաւ խարակածուկն :

Յարակածու՛կն, իրա՛ւ, ի՛նչ ընտիր ճաշ ճայի մի
Համար

(Ասա, կը սկսի խնդալ :)

Կոտ՛ւց բանամ ոչնչի համար, քա՛ւ լիցի քա՛ւ :

Բացաւ զայն ե՛ւս ոչնչի համար : Այնպէս եղաւ

Որ այլ եւս ձուկ չտեսաւ :

Քաղցն զնա կալաւ :

(Քա՛ղցն - կը հասկնաք այժմ տարբերութիւնն արտօմակ բառէն : Կը կարծէք թէ Լաֆոնդէն պատահարաբար գրած է այդ կարծ տող յստակ և անարկու - «Քաղցն զնա կալաւ :» Այժմ խնդիրն հեշտասիրութեան վերայ չէ ինչպէս ի վեր անգր, բառն կարծ է, ստիպիչ՝ անողոք որպէս է պէտքն : Չայս ամենայն ցոյց սուր ճայնիդ մէջ, և նկարէ նայնպէս յանկարծական վերջաւորութիւնն արհամարհոս և հակիրճ իրրև զգատաւճիւն :)

Շատ գո՛հ եղաւ շատ երջանիկ

Հանդիպելով մի խխունջի :

(Լաֆոնդէնի գրեթէ բոլոր առակք կրնան տեղի տալ այսպիսի ուսումնասիրութեան, և բոլոր մեծ բանաստեղծք կրնան ուսումնասիրուիլ զերդ Լաֆոնդէն : Միայն թէ շմտունաք թէ այնքան սարբեր եղանակներ կան քերթուածներ ընթեանչաւ որքան եղանակներ կան զայնս յորինելու :)



Կ Ի Կ Ե Ր Ո Ն Ի Ը Տ Ե Ն Ը Խ Յ Ս Ո Ի Թ Ի Ի Ն Ն

ԸՆԴԴԷՄ ԿԱՏԻԼԻՆԱՅ

Այս դատով, իբր հրահանգ կը գնեմք առաջի բն-
թերցողին զմին յընտրելագոյն ասենախօտութեանց Կիկե-
րոնի, և յաջորդիւ կը փորձեմք ցուցնել թէ որպէս պարտ
է առողանել զայն:

(Ա) Կատիլիճնա, մինչև և երբ զմեր համբերու-
թիւն պիտի գործածես շարաշար: Դեռ որքան ծաղր
պիտի լինիմք կատաղի անզգամութեանդ: Ուր կանդ
պիտի աւնուս յընթացս անզուսպ ժպրհութեանդ: Պա-
լտաին գիշերապահք ո՛չ ինչ ունին գքեզ խոսվելու. քա-
ղաքին սասիկանք ո՛չ ինչ. ժողովրդեան տաղնասուն ո՛չ
ինչ. բոլոր բարի քաղաքացւոց միարանութիւնն ո՛չ ինչ.
այս ժողովոյ վեհափառութիւնն ո՛չ ինչ. և այն ամեն ա-
շեր որք յայտ մայրկենի սեւեռեալ են ի քոյոց, ո՛չ ինչ
ունին յայտարարելու կամ ահարեկելու գքեզ: Գո իսկ
գիտակցութիւն չ՝ ծանուցաներ քեզ թէ ի լոյս հանուած
են քո գաղանիք. քո գաւազրութեան լիուլի տեղեկու-
թիւնն չե՞ս գաներ այս ամենուն գիմաց վերայ: Զբա-
ղումդ անցեալ գիշեր, արարքդ վերջընթեր գիշերն, տե-
ղըն ուր հաւաքուեցաք, անձինքն որք հաւաքուեցան,
և դուն զոր դարբնեցիք ի ժողովին — այս ամենուն
նկատամբ շեմ հարցներ ո՛վ տեղեկութիւն ունի, կը
հարցնեմ կո՛յ աստ ո և իցէ որ անիրազեկ:

(Բ) Այլ աւա՛ղ ժամանակացս, կամ մանաւանդ
աւա՛ղ մարդկութեան որ այսպէս կը գեղձուցանէ գժա-
մանակս: Ծերակոյտն գիտէ այս ամենն, հիւսարատսն կը
տեսնէ այս ամենն, և տակաւին այրն որ կը նստի անդ,
կ'ապրի — Կ'Ա.Պ.Ի՛, ի՛նչ կ'ըսեմ, կուզայ ի պալատ ծե-
րակուտիս, և բազմելով աստ իբր անդամ, կը մասնակցի

Հանրապետութեան խորհրդակցութեանց, և կը դիտէ և կ'ընտրէ զայնս ի մէնջ զորս սրախողիտող բնել կը մտադրէ, մինչ մեք՝ մեզ և մեր հայրենեաց փառք բաւական կը համարիմք խոյս տալ իւր սրէն:

(Գ) Ի մահ նախատալից պարտէի ևս, հիւպատոս, վաղ իսկ դատապարտած լինիլ այդ անխիղճ պետ դաւաճանութեան. պարտէի խորասոյզ թաղած լինիլ զքեզ, Կատիլիան, քս իսկ մեքենայութեանց աւերակներուն ներքև: Ի՞նչ, միթէ այրն այն աւագ, Պիւրլիոս Սկիպիոն, թէ և պարզ քահանայապետ մի, շղո՛հց զՏիրերիոս Գրակիոս վանդի մտարերած էր սուղանակաւորել զհանրապետութիւն. և մեք որ հիւպատոսական իշխանութեան լիութիւնն զգեցեալ եմք, պիտի հանուրժեմք մեր ազգի ու մեր անուան այս թշնամույն. թո՛ղ պիտի տամք որ հրոյ և սրոյ զո՛հ նա զպետութիւնն Հռովմէական, քանդի այդ է իւր ահուելի հաճոյք: Չպիտի յիշեմ վաղնջուց նախընթացներ, որպէս զՍէրվիլիոս Ահալաի, որ սասկեցուց Սպիւրիոս Միլիոս վանդի վնասակար յեղափոխութիւն մի յարուցանել փորձած էր: Եղած է, այս՛, և ոչ բազում ժամանակ առաջ եղած է այս հանրապետութեան մէջ վրէժխնդիր առաքինութիւն որ ոչ կրէք վարանած է աւելի ուժղնապէս և արագօրէն պատահաս ամել ի վերայ մուրեցուցիչ քաղաքացւոյն քան օտար թշնամույն: Ընդ զէ՛մ քո, Կատիլիան, և անմիջական դատապարտութեանդ համար ի՞նչ կը պակտի սրբին: Ո՛չ ծերակուտին ծանր վճիռն — ոչ հայրենեաց ձայնն — ոչ հին նախընթացներ — ոչ կենդանի օրէնք: Մեք եմք որ պակաս կը դանուխմք, Մե՛ք հիւպատոսքս իսկ:

(Դ) Միթէ ազնուական Կաիոս Գրակիոսի, հիւպատոս փելվիոսի եւիւր դաւակաց և այլ զէպքերու մէջ արդարութիւնն ի դորձ շղրուեցա՞ւ, և փութանակի: Բայց այժմ՝ քան ցայդ և ցերեկ բթացուցած են մեր տապարաց բերանն և զմեր իշխանութիւն: Մեր հաստ վճռագիր կը ննջէ արձանագրութեան մէջ իրբև սուր ի պատենին, ա՛յն վճռագիր, որ հոչակմանէն մէկ վայրկեան յետոյ պարտէր շղանել զքեզ կենդանի: Կապրիս

դու, և կ'ԱՊՐԻՍ ո՛չ յանցաւորի նկուն խանարհութեամբ այլ ցնծութեամբ յաղթանակող ժպտութեան: Հա՛րք, գթութիւնն իմ մեծագոյն հաճոյքն է, ինչպէս և սահմանադրութեան վրէժխնդրութիւնն՝ իմ լաւագոյն փառասիրութիւն: Բայց աստ ևս կը կենամ անձամբ զանձն դատապարտեալ իրրեւ յանցաւորի գթութեան, և կը նկատեմ զայս իրրեւ անհաստատութիւն աէրութեան շահուց:

(Ե) Հա՛րք, բանակ մի կազմուած է բնդ դէմ Հոռովակեան պետութեան, Իսաւրական հողոյ վերայ, նոյն իսկ Էսրիւրիաի եզերաց վերայ. ամէն օր կ'աճի թշնամեաց թիւն. այդ թշնամեաց առաջնորդն, այդ բանակի հրամանատարն կը պարտի Հասիմայ պարիսպներուն ներսն կը բազմի աստ, այս ձերակուտի մէջ, Հոռովայ սրտին մէջ, և թունալից ժանտութեամբ կը խառնուի պետութեան կենսական խնդրոց: Կա՛տիլինա, եթէ իսկ և իսկ հրամայէի իմ նախակաց բռնել ասնել զքեզ բնդ քարշիցից, ոմանք պիտի կրնային դեռ պարտուել զիս զպատիժն յետաձգած լինելուս, սակայն ոչ ոք պիտի կրնար յանցապարտ համարել զիս իրրեւ անգութ: Գործադրութիւն պիտի օրէնքն. սակայն պատճառ ունիմ գործադրութիւնն յետաձգելու դեռ: Հաւ սոսա ինձ, ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ ՊԻՏԻՍՐԷՆՔԻՆ, բայց յայնժամ՝ յորժամ ոչ ոք զանուի սյնքան ապիրաս, այնքան Կատիլինա, զի բոկ թէ հասուն շէիր գործադրութեանն համար: Ապրիս պիտի, ցորչափ գրանուի ոք որ երես ունենայ բսելու թէ պարտիս ապրիլ. և պիտի ապրիս, որպէս այժմ կ'ապրիս, մեր լայն և արթուն հսկողութեան տակ, և սուրն արդարութեան պիտի շարունակ տատանի շուրջ զզլխովոյ: Ամէն արեք աչք և ականջք պիտի դիտեն և լսեն զքեզ որպէս ցարդ, և քեզ անհնար պիտի լինի լսել կամ իմանալ ինչ:

(Զ) Ի՛նչ բանի կրնաս արդ ակն ունել. եթէ գիշերն շիրնար թողուցանել զքեզ և ոչ զքս զարանամուտ բնկերներ. եթէ ձեր սանց սրմերն անգամ կը հնչեն ձեր գաղտնեօք և կը համբաւեն զայնս աշխարհի. եթէ արեւն կը փայլի և հողմն կը շնչէ անոնց վերայ: Հեռէ իրապիս, այլ իմն յատակադիժ բնդ ունէ, և՛ս

պատահադոյն առթի սպասէ գրագրութի ի հուր և գրնակիչան խուր մասնելու համար: Սակայն և այնպէս համոզելու համար գրեզ թէ ամենուստ բացն ևս մնացած, պիտի մանեմ պահիկ մի ի մանրամասնութիւնս քո յուսահատութեանց և իմ գիւտից:

(Է) Ձե՞ս յիշեր արդեօք, կամ միթէ կարելի՞ բան է որ մտնալ կարենաս իմ յայտարարութիւն անցեալ Հոկտեմբերի 21ին, ի ձերակուտի աստ, թէ կայրս Մանլիսս, քո մակրիմ արբանեակ, պիտի գէնք առնուր այս ինչ օր, և այդ օր պիտի լինէր յառաջ քան զ25րդն.—: Սխալած էի միթէ ի մասին այնպիսի ահագին, այնքան անհաստատելի ծրագրի: Ես ինքն շայտարարեցի՞ աստ ի տանս՝ թէ դուք գուակցած էիք տէրութեան աւագանին կոտորելու Հոկտ. 28 ին. օր, յորում բազում յաւազացն մեկնեցան մանաւանդ ձեր ծրագիր ի դերե հանելու մտք քան իրենց սպահովութեան համար: Կրնա՞ս յանդգնիլ ուրանալու թէ այն օր այնպէս պաշարուած էիր պահակներէն զորս հաստատած էի յայլ և այլ թագրս, այնպէս չփոխեալ էիր իմ արթնութենէ գի շօրեցիր մաս վերցունել տէրութեան գէմ, թէպէտե ապաքէն բուական յոխորդ էիք ըսելու թէ պարտէիք շատանալ զլիսովքն այնոցիկ որք մնացած էին աստ: Ի՞նչ, Հակոտակ ձեր այնքան փքոցուսոյց վստահութեան զՊրբէնէստ յարկարժ կոխելու գիշերայն, Նայեմբեր 1ին, շգտա՞ք գիս գինեալ, ի դրան անդ, շիմացա՞ք թէ ևս պահապան կայի պարսպին վերայ: Քո գլուխ շիրնար ըմբռնել, քո սիրտ շիրնար յղանալ շարութիւն որ անծանօթ մնայ ինձ. կը շափեմ ևս քո մասնութեանց լայնութիւնն ու երկայնութիւնն և կը թափանցեմ ի խորս հագւոյդ խաւարումս:

(Ը) Վերջընթեր գիշերն շէ՞ր, բուական ի համոզել գրեզ թէ կայ բարի սգի մի՞ պաշտպան այն Հանբապետութեան զոր գիւահարդ կը հնարի կործանել—այս՛, այն նայն գիշերն, դու և քո գուակիցք ժողովեցար ի տան Մ. Լէքքաի: Կրնա՞ս ուրանալ զայս: Եւ ասկաին գաղանի՞ք, խօսէ՛, ա՛յր դու, քանզի եթէ շիտսիս, նոքա որք շուրջս ևն պիտի փաստ ջախջախիչ գրա-

նեն ի յայտարարութեանս :

(Թ) Անմահակա՛ն դիք, ո՛ւր եմք . ի՞նչ քաղաքի մէջ կը բնակիմք . ի՞նչ օրինաց տակ կ'ապրիմք : Աստ, հա՛րք, ԱՄՍ մեր մէջ, այս յոյժ պատկառելի և մեծարոյ ժողովոյ ծոցոյն մէջ, մարդիկ նստած անվրդով կը թխսեն դաւ իմ կենաց դէմ, ձեր ամենուն կենաց դէմ, ամենայն առաքինի ձերակուտականի և քաղաքացւոյ կենաց դէմ, մինչդեռ ես՝ դաւադրաց այս բոյնն իմ աչաց առաջի՛ չունչ կը սպառեմ փափուկ վիճարանութեամբ և խօսքով խի վիրաւորել շեմ համարձակիր զայն որ վաղ խի պարտէր սրով պատառեալ լինել յօշ յօշ :

(Ժ) Ի տան լէքքափ ժողոված էիք դուք վերջընթեր գիշեր : Անդ բաժնեցիք զԻտալիա զինուորական կայանաց . հրամանատարներ կարգեցիք այն կայանաց . որոշեցիք զայնս որք պիտի հեռուէին ձեզ, և զայնս որք պիտի մնային աստ . նշանակեցիք մտադրեալ հրկիզութեան սահմաններն . վերահաստատեցիք ձեր որոշումն Հոովմէն անյապաղ մեկնելու, պահիկ մի յետաձգելով միայն, որպէս բսիք, մինչեւ որ կարենայիք ձեռք բերել զզլուին հիւպատոսիս : Երկու հեծելազօր — Հոովմայեցի հեծելազօր — խոստացան յանձնել ձեզ զզլուին յաջորդ առաւօտուն նախ քան զծաղումն Արեգական : Սակայն հաղիւ թէ ամեղարամետական այդ ժողով ցրրուեալ էր, հիւպատոսն ամբողջին իրազեկ եղաւ . Տանս պահապանն՝ ըն կրկնապատկեցի, և աչրութեան բաղում աւազ սրերոյն ծանուցանելէ յետոյ զվայրկեանն խի յորում ոճրազորձքն պիտի զային մատուցանել ինձ ձեր ողջոյններ, ճիշդ այն վայրկենին հասան նաքա, խնդրեցին ներս գալ, և մերժուեցա՛ն :

(ԺԱ) Յառաջ գնա, կասիլի՛նա, այդ պատուաւոր աստարիզիզ մէջ : Գնա՛ որ քո ճակատագիր և քո իղձք կը մղեն զքեզ : Թող զքաղաքն առ ժամանակ մի . դրունք լայնարաց են, մեկնէ՛ : Ամօթ չէ՞ որ Մանլիոսի բանակն այսչափ սպասէ իւր զօրազլխի : Ա՛ռ բնդ քեզ սիրելի բարեկամքդ համօրէն, կամ առ գէթ այնքան որքան կարես, և մաքրէ պահ մի զքաղաքն : Թող Հոով-

մայ պարխազք լինին միջնորդ քո և իմ միջև: Վասն զի այժմ կարի յոյժ մօտ ևս ինձ դու: Ո՛չ ևս պիտի հանդուրժեմ քեզ: ո՛չ ևս պիտի թոյլատրեմ քո ներկայութիւն:

(ԺԲ) Լո՛ւսիոս կատիլինա, ի բա՛ց: Շուտով սկսէ այս աժօթայի և անընական պատերազմ: Սկսէ՛ զայն, քո կողմանէ՛ ընդ ստուերօք ամենայն շարագուշակ նշանաց: իմ մասին՝ աներկբայ և անշուշտ յուսով ապահովութեան իմ հայրենեաց և փառաց անձինս և յորժամ զայս դու ընես, յայնժամ, Դո՛ւ, զորոյ սեզանն զառջինն հաստատեց հիմնարկուն մեր տէրութեան — Դո՛ւ, հաստիշդ քաղաքիս, թափէ վրէժխնդրութիւնդ այս մարդուն և իւր բոլոր հեանեողաց վերայ: Փրկէ զմեզ իւր կատաղութենէ, զհանրային բազինս, սուրբ գտածարբս, զսունս և զառանին աստուածս մեր, զազատութիւն մեր, և զմեր կեանս: Հալածէ՛, խնամակալդ Աստուած, հալածէ զիրենք — զթշնամիսդ աստուածոց և բարութեան — զկողոսպտիշոյ Իսաւրոյ — զսպանիշոյ Հոովմայ: Հանէ՛ զիրենք յաստեաց, և ի հանդերձելումս թող հալածէ զնոսա քոյդ վրէժխնդրութիւն անցող, անսղօք, անմահ:

ՉԵՍ ԵԵ

ԹԷ ՈՐՊԷՍ ՊԱՐՏ Է ԱՌՈԳԱՆԵԼ
ԶԱՏԵՆԱԽՍՍՈՒԹԻԻՆՆ ԿԻԿԵՐՈՒՄԻ

Կարդացիր Կիկերոնի Ատենախօսութիւնն: Եթէ լաւ առողանեցիր զայն, յոգնած ևս եթէ գէշ առողանեցիր զայն, և՛ս աւելի յոգնած ևս: Ապաքէն բազում ոյժ և ձայն կը պահանջէ այն, և ա՛լ աւելի կիրթ ձայն, բացատրուն դէմք և արխան սրտայուզումներ:

Սկիզբն ցասմնալիւր և հրացայտ լինելով՝ կը թուի ընթերցողին թէ՛ Կիկերոն, զթշնամին անմիջական անձնատրութեան բանադատելու դիտմամբ, իւր բոլոր զայ-

բոյժ կը թափէ ի նա՝ բազմակրկնակ փայլատակամբք խարազանելով զնա ահագնապէս. սակայն ասենախօսն շտպառիբ ամենեւին ի սկզբան անդ. փայլատականց կը յաջորդեն տարափ և կարկուտ, կը սաստկանայ ընթացքն, սահանքներ, պտոյտներ, ջրվէժներ կը յօրինէ և վերջապէս կ'երթայ խույ մոնչմամբ կը թափի ի ծոց անդրբ խնամակալ աստուածութեան :

Ընթերցողին մէկ մեծ վտանգն այն է որ կիկերոնի հետ ճանապարհն զայրազին սկսելէ յետոյ՝ հետզհետէ ակարանայ և թուլացեալ հասնի վերջաւորութեան : Այս պիտի լինէր մասնել զկիկերոն : Արեւմն նորա հաւատարիմ թարգմանն լինելու համար սկսէ՝ ուժգին, բայց ոչ ծայրագոյն ուժգնութեամբ, զործածէ՝ ոյժ, բայց ոչ բոլոր ոյժդ :

Ա՛յլ վտանգ : Համբակ ասենախօսք զօրութեան աղմկալից ցոյցերու սիրող լինելով՝ արամադիր են ուժգնութիւն զնել ուր պիտոյ շէ այն, և մանաւանդ այնպիսի ցասմնալիր ասենախօսութեան մէջ, որպիսի է կիկերոնին, անաս ընել մեղմութիւն պահանջող մասերն : Եթէ անգոր նոյնեղանակութիւնն անհրապոյր է, նոյնեղանակութիւնն յուժգնութեան անհանդուրժելի է : Պարտ է արեւմն ուշադրութեամբ ի խնդիր լինիլ այն մասանց որք շափաւորութիւն և այն մասանց որք մեղմութիւն կը պահանջեն : Այդ մասերն պիտի զործածուին ի հանգիստ ասենախօսին ինչպէս նաև ի հանգիստ ունկնդրաց, ի սէսպիսութիւն ձայնի և յազդուութիւն բացաւորութեանց :

Ձայնն կը շափաւորի, զանգատի և մեղադրութեան եղանակ կ'առնու ի սկզբան Բ. պարբերութեան : Խոնարհ և զղջական մեղմ եղանակ կ'առնու Գ. պարբերութեան վերջին մասին մէջ, յատկէն. «Հա՛րք, զըթութիւնն իմ մեծադոյն հաճոյքն է . . . » նոյնպէս

բաղդատական հանդիստ առնելու և տալու կարևոր առիթ մի կ'ընծայէ Ձ. պարբերութիւնն ամբողջ. յորում հեղնական եղանակ մ'եւս զգալի կը լինի: Բաղդատական շափաւորութեան տեղ մ'է նաև ժ. պարբերութիւնն:

Միւս կողմէն, ուժգին մասանց մէջ պարտ է գտնել ուժգնագոյն մասերն, և որոշիկ նոցա աստիճաններն: Եաստնախօսութեան անդ կան առաւել քան մի շարեր, զորս խնամով առողանել պէտք է: Որն է կամ ս'ջք են այն կետեր ուր կիկերոնի պերճախօսութիւնն իւր չորնդալից և ահարկու սլայթումներն կ'ընէ, պարտ է փնտռել և գտնել զայնս:

Արագութեան տեսակետով ևս մեծ պէտքսութիւն կը պահանջէ այս աստնարանութիւն: Ընդհանուր ընթացքն արագ է քան զսովորականն վասն զի խօսողն զայրացեալ է, սակայն ուրեք ուրեք կը յամբանայ ընթացքն, որպիսի են այն բոլոր տեղեր զորս ի վերոյ նշանակեցինք իբր մասունք շափաւոր ուժգնութեամբ կամ մեղմ ձայնիւ առողանելի: Կան տեղեր ուր յամբայց ուժգին է առողանութիւնն, ինչպէս անդ ուր կ'ըսէ. «Կը շափեմ ևս քո մասնութեանց լայնութիւնն և երկայնութիւնն, և կը թափանցեմ ի խորս հոգւոյդ խաւարամած»: Այդ խօսք ծայրագոյն ուժգնութիւն բայց յամբ ընթացք կ'ուզէ, պէտք է ձայնիւ շափել «լայնութիւնն և երկայնութիւնն»: Նոյպէս յամբ բայց ուժգին է վերջարանն: Ընդհակառակն տեղեր կան ուր ընթացքն ծայրագոյն արագութիւն պարտի առնուլ ուժգնութեամբ հանդերձ, ինչպէս Ե. պարբերութեան մէջ յասելն «Կատիլլի՛նա, եթէ իսկ և իսկ հրամայէի. . .»: Եւս մեծագոյն արագութիւն կայ թ. պարբերութեան մէջ. «Աստ, հա՛րք, . . .» էն սկսեալ աճեցուն արագու-

թեամբ պիտի ընթանայ և փոթորկի սաստկութիւն պիտի առնու ցվերջ պարբերութեանն :

Այս ատենախօսութեան դժուարագոյն մասն վերջին պարբերութիւնն է , որոյ մեծ մասն մաղթանք մ' է ուղղեալ առ խնամակալ աստուածն Հռովմայ : Ատենախօսն ըսելէ յետոյ ցկատիլինա « յորժամ զայս դու բնես » , կը դառնայ առ դիս և կ'ըսէ . « Դու , զորոյ սեղանըն . . . » , մէկ դ ու էն ի միւսն փոխանցումն բոլորական փոփոխութիւն մի կը պահանջէ եղանակի . առաջինն յանդիմանական , արհամարհական և զայրագին է , պոստեալ յօնիւք , ցասմնալիր աչօք , երկրորդն՝ վշտագին և մաղթական է : Բոլոր այդ աղօթք պիտի առողանուի ծայրագոյն ազդուութեամբ , բայց բաւական ցած ձայնիւ և յամբ ընթացիւք : Այս կամ այն պնդեալ բառն կրնայ զողորջուն ձայնիւ առողանուիլ : Շեշտերն տակաւ պիտի սաստկանան , հ ա լ ա ծ է . . . Հ Ա Լ Ա Մ Է . . . Հ Ա Լ Ա Մ Է ' . բայց ուժգնութիւնն որ պիտի դրուի ձայնին մէջ այնու մանաւանդ ազդու և ահաւոր պիտի լինի զի պիտի տայ գուշակել թէ ս'րքան զայրոյթ , ս'րքան կիրք զ ս ս լ ա ծ կը մնան խօսողին հոգւոյն մէջ : Կրկերոն , երբ կը հասնի ի վերջարանին առաջի գահոյիցն աստուծոյն , նման է արշաւող ձիոյ որ երկար ընթացքի մէջ ոչ թէ խոնջած այլ աւելի բորբոքած՝ կը հասնի ի կատարած ընթացիցն , ուր թէև հզօր բազուկներէ սանձահարեալ ստիպուած է ս'չ և ս վաղել , բայց տակաւին դէպ ի վեր օդին մէջ կը նետէ քայլերն և գլուխն փրփրալից և կատաղի :

ԻՆՉ ԻՆՉ ԸՆԳԻՆՆԵՐ ՍԿՁԻ ՈՒՆՔ

Թէև ի նախորդ դասին՝ կիկերոնի ճառին առթիւ յիշեցինք խրատներ որք դիւրաւ կը վերածին ի սկզբունքս, աւելորդ չէ յառաջ բերել մի քանի խորհրդածութիւններ եւս :

Ուսանողք առողանութեան կը փորձուին շարժանց ի խնդիր լինիլ բարձր ձայներու և բուն շարժմանց, կարծելով թէ զօրութիւնն գոչման մէջ է : Արդարեւ ահեղ գոչման մէջ կայ վնասութիւն, բայց բամբ և ստորին ձայնի մէջ ևս կայ այն : Կարելի է նաև կրթութեամբ այնպիսի ձայնական եղանակաւորութիւններ ստանալ զի կարող լինի ոք ձայնի ահագին քանակի փոխանակ դնել ահագին որակներ, և վսեմ տպաւորութիւն գործել ունկնդրաց բազմութեան վերայ առանց արտակարգ ճիգ կամ ազմուկ բնելու :

Բայց ուսանողին նկրտումն այն շարժի լինի որ ուժգին կամ ահաւոր տպաւորութիւններ գործէ ահագին բացաարութեամբք . նայնքան դժուար և նոյնքան կարևոր է դիտնալ մեզմ ձայնի տպաւորութիւններն գործել : Մաքուր, նուրբ և կարի մեզմ ձայնիւ, ըստ տեղւոյն, կարելի է խորին տպաւորութիւններ յառաջ բերել : Պէտք է ամեն տեսակ գրուածներու վերայ կրթութիւն բնել, զուարթ և տխուր, ուժգին և մեղմ, լուրջ և հեղնական, թատերական, պատմական, ևն .

Չայնի հանգամանքն պարտի խորապէս փոփոխիլ ըստ նիւթոյն և ըստ կրից . Սէ՛րն պիտի բացաարուի հարթ, նուազող, մեղմ ձայնիւ . ՏԱ՛նն՝ ցած, բնդ միջ-

ուող, ճապուկ ձայնիւ. ԵՐԿԻՒՂՆ՝ յանկարծական բրիւմամբ և դողդոջմամբ ձայնի. ՔԱՋՈՒԹԻՒՆՆ՝ լի, բարձր, և համարձակ ձայնիւ. ՉԱՅՐՈՅԹՆ՝ զօրաւոր, բարձր, ուժգին ձայնիւ. ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆՆ՝ քաղցր, արագասահ, մաքուր ձայնիւ: Յ ա ո ա ջ ա բ ա ն ի ն մէջ ձայնն ցած պարտի լինիլ. (Կիկերոնի կատիլինեանն բացատու թեանց կարգէն է) ի պ ա տ մ ու թ ե ա ն՝ որոշ. ի ա բ ա մ ա բ ա ն ու թ ե ա ն՝ յամբ. ի հ ա մ ո գ ե լ ն՝ զօրաւոր պարտի որոտալ բ ա բ կ ու թ ե ա ն տտեն, դողդոջալ ա հ ա բ ե կ ու թ ե ա ն մէջ, հալիլ ս ի բ ո յ մէջ, մեղմանալ ա խ բ ու թ ե ա ն և ս գ ո յ մէջ: Ի ն շ կը կարգաս. եթէ սովորական կտոր մի լրագրի մէջ, արագ կարգա, գիւնչքան դժուարըմբոնելի և հոժ իմաստներ շկան հոն. եթէ դաս կը սերտես, յամբ կարգա. եթէ բանաստեղծական վտեմ կտոր մի կը կարգաս, ծանրը և լուրջ և զգայուն եղանակաւ պարտիս առողանել:

Երբ գրուած մի առողանել կը բաղձամք, պարտիմք նախ հասկանալ զայն լիովին և թափանցել անոր ոգւոյն: Անհնար է քաջ առողանել ինչ որ քաջ բմբռնուած չէ: Երկրորդ աշխատութիւնն է ուսումնասիրել զգրուածն իրր շինուած, և հասկանալ անոր ճարտարապետական եղանակն, տեսնել հիմունքն, զաղաթունքն, զննել ամեն մէկ բացատրութիւնն, մէն մի բառն, և գտնել թէ ուր ինչ ճարտարութիւն կայ և թէ ուր կեդրոնացած է հեղինակին ոգին. գտնել զլիսաւոր և երկրորդական խորհուրդներն և անոնց շղթայումն իրերաց հետ:

Գրուածին իմաստն և ճարտարապետութիւնն ուսումնասիրելէ յետոյ պէտք է սկսիլ զայն առողանելու աշխատութեան. և յայտմ ևս սկսիլ պարզէն և դիւրինէն: Նախ պարզ ընթերցմամբ քննել բառերուն արտասանութիւնն, հոգ տանիլ ուղիղ, յստակ, փափուկ ար-

տասանութեան : Ապա շնչաութեան կէտերն որոշել : Յետոյ դանել անցնիւր նախադասութեան մէջ պնդեալ բառն կամ բառերն : Որոշել իւրաքանչիւր պարբերութեան ընթացքի, աստիճանի, քանակի և որակի պէսպիսութիւններն :

Մի՛ լիցի կարծել թէ այս ինչ տուեալ գրուած լաւ առողանելու մէկ կերպ միայն կրնայ լինիլ : Ինչպէս որ բառերուն բնականութեան վերայ իօսելու ատեն ըսինք թէ այս ինչ գաղափար բնական ձայնիւ բացատրելու համար հարկ չկայ որ անպատճառ ա յ ս ի ն շ տառերն մըտնեն բառին մէջ, այլ բաւական է որ ա յ ս ի ն շ կ ա ր դ ի տառերն մուտ գանեն, նոյնն կ'ըսեմք ձայնի զանազան եղանակաորութեանց համար : Ի բացատրել այս ինչ զգացում ունիմք այս ինչ կարգի եղանակաորութեանց մէջէն ընել ընտրութիւն : Ինչ որ մին բարձր աստիճանու ձայնի լաւ կը բացատրէ, միւսն կը յաջողի բացատրել խորին և ստուար ձայնիւ . մին կրնայ պընդեալ բառի մի բաղաձայնն ահագնապէս պայթեցունել, միւսն՝ ձայնաւորն երկարել : Լաւագոյն ընտրութիւնն ընելու համար պարտ է քաջ հասկանալ և քաջ զգալ : Զգացումն կը ներշնչէ լաւագոյն սխրակներն և եղանակներն : Շեշտի կամ պնդման սխալ մի կրնայ մատնել կեղծիքն և արուեստակութիւնն : Երբ որսորդութեամբ գրօնդէ տուն վերադառնայ ոք խոնջած, « ա ն օ թ ի ե մ » կ'ըսէ . սակայն աղքատն որ զթութիւն կը հայցէ, « անօթի ե մ » կ'ըսէ . եթէ սա « ա ն օ թ ի ե մ » ըսէ, խարերայ աղքատ մ'է : Կրնայ ասանախօսութեան արուեստագէտն պատահիլ նախադասութեան մ'այնպիսի, զոր հարիւր անգամ ընթեռնու այլ և այլ ժամանակ մինչև որ գանէ զայն առողանելու զբնական, զլուսագոյն եղանակն :

Ատենախօսին պարտ է նաև կատարեալ իշխանութիւն ունենալ իւր կրօն և շարժմանց վերայ, և երբէք, նոյն իսկ ծայրագոյն ուժգնութեան պահուն, չկորուսանել ինքզինք: Ունկնդիրք իսկոյն կ'իմանան երբ խօսողն այդ վայրենի վիճակին մէջ խցնայ:

Այդ վտանգէ ինչպէս և այլ բազում վտանգներէ ազատ մնալու համար սկզբունք ունեցիր շնկրտիլ իշտփազանցն: Գերազանց, անօրինակ լինելու նկրտումն բոլոր մարդ յաճախ կը մղէ յանհեղեղութիւն, և փոխանակ սքանչելի բնելու կ'ընէ տարօրինակ և ծաղրելի:

Պարզութիւնն կատարելութեան նշան է. արուեստակութիւնն ցուցիչ է համբակութեան: Երկար կրթութեան շնորհիւ կը հասնի սքի կատարելութիւն, որոյ հանգամանքն են անկեղծութիւն և պարզութիւն: Նկարչութեան, անդրիազործութեան և ամենայն արուեստի մէջ բնականն լինիլ է վարպետին միայն. և ոչ սք կրնայ իսկոյն վարպետ լինիլ: Թէև նորուսին դժուար է կատարելապէս պարզ լինիլ որքան և ջանայ կամ որքան և շջանայ, սակայն իւր նկրտումն պարտի լինիլ ի բնական պարզութիւն, որ այնքան հեռի է արուեստակութենէ որքան անշնորհութենէ և պարզութենէ:

Եւ ի՞նչ է բնականն ու պարզն: Դիւրին չէ սահմանել զայն, բայց կրնամք յիշել աստ անօր մէկ անտեսական պայմանն. — Գ ո Ր Ծ ա ծ ե լ ա յ ն ք ա ն մ ի ա յ ն ո յ ժ ո Ր ք ա ն պ ի ա ո յ է: Բառ մ'արտասանել, նախադասութիւն մ'առողանել, ճառ մ'ասել այնքան զօրութեամբ միայն որքան բուական է: Աւելորդ չունչ, աւելորդ ձայն, աւելորդ շարժում ամենեւին պիտի չգործածէ ասենախօսն: Աւելորդն ոչ թէ անօղուտ է այլ և վնասակար. ոչ թէ խօսողին միայն ոյժն կը չբռայլէ այլ և լսողաց. ոչ թէ իմաստն աւելի պարզ կ'ը-

նէ, այլ կը մթազնէ: Եթէ միջին ուժգնութեամբ առողջանելի խօսք մի բարձր ուժգնութեամբ առողջանես, ուժգնութեան աւելորդն բաժնուելով խօսքէն՝ կը լինի որպէս թէ առանձին գոյութիւն մի և ունկնդրաց ուշն կը գրաւէ, որով և բուն խօսքն նուազ ուշադրութեամբ կը լսուի և նուազ սրբող կը թուի: Այսպէսով, նաև, շոյլութիւն կը ստանձառի ունկնդրաց մտաւորական ուժին, վասնզի նոքա երկու բանի ուշ գնելու կը ստիպուին:

Ը Տ Ե Ն Ը Խ Յ Ս Ը Կ Ը Ն Շ Ը Ր Ժ Մ Ո Ւ Ն Ք

Ջգացումն ոչ միայն խօսիլ կուտայ այլ և շարժիլ և որքան սաստիկ է զգացումն, այնքան բուռն է նաև շարժումն: Յաւի զգացումն, օրինակի համար, թէ մարմնական լինի թէ բարոյական, շարժում յառաջ կը բերէ ի մարմնի: Յերկուս բաժնուած որդն ուր մուր կը դաւլարի: Վիրաւորեալ առիւծն արագապէս կը թափառի բարոյական վէրքով խոցուած մարդն ալ երկար և արագ ստոյտ կ'ընէ, ինչպէս նաև վշտահարն և սգաւոր կը բախէ զկուրծս, զձեռն յազդր կը հարկանէ, կը ստատուէ զգեստներն: Այս ամենայն շարժումներ բնազգական միջոցներ են ցաւն ամոքելու և վշտն սփոփելու, բայց միանգամայն կը ծառայեն անտեսանելի ցաւն արտաքուստ բացատրելու: Բարախող սիրան բան մի կը պատմէ արագապէս, և սարսափահար մարդուն զոզոջումն բան մի կը նկարագրէ: Ժպիտան թէև տկար և մեղձ շարժում մ'է, ունի իւր նշանակութիւններ ինչպէս բառ մի կրնայ ունենալ: Միծաղիլն ալ ժպիտ մ'է, բայց ձայնաւոր, այսինքն աւելի զօրաւոր ներքին շարժման մի պատասխանող արտաքին շարժում մ'է այն, յորում ժպիտի շարժումն աւելի տարածութիւն և ուժգնութիւն առած և ձայնի գործարաններն ալ օգնութեան կոչած է:

Բացատրութեան նախնական և պարզագոյն միջոցն է շարժումն: Շրջափոխական կարգին մէջ բացատրիչ շարժումն շատ առաջ է քան զձայն, քան զբառ և քան զբարբառ: Ստորին կենդանիք շարժմամբ կը բացատ-

րեն իրենք զիրենք: Խխունջներ, որդեր, եթէ երբէք
 կը բացատրեն ինչ իրերաց, խլրաումներու միջոցաւ կը
 բացատրեն: Սակայն էշն կը դռայ իւր սէր բացատրելու
 և սոխակն կը դայլայլէ: Բարձրագոյն կենդանիք, ինչպէս
 չուան, ձին, փիղն, կրթուելով կոնան հասկանալ շատ
 բաւեր, և կարող կը լինին պատասխանել և բազում ինչ
 բացատրել լսկ շարժումներու միջոցաւ: Մարդն ալ, իւր
 բարբարոս վիճակի մէջ, շատ աւելի շարժումներ կ'ընէ
 ինքզինք բացատրելու համար քան զքաղաքակրթեալն:
 Մանուկն ևս նախ ժպտելու, ապա ծիծաղելու և յետոյ
 խօսելու կարող կը լինի: Բնախօսօրէն ևս յայտնի է թէ
 յանշափս աւելի դիւրին է գլուխն կամ ձեռքն շարժել
 քան թէ յօդաւոր բառ մ'արտասանել կամ խօսք մի բար-
 բառիլ. ուստի և շարժումն, իբր պարզագոյն միջոց շատ
 աւելի առաջ գործածուիլ սկսած է քան զբարբառն որ
 յանհունս աւելի բարդ մեքենայութեանց գործածումն
 կը պահանջէ:

Ուրեմն լեզուն իբր լրացուցիչ միջոց աւելցած է
 շարժմանց վերայ. շարժում և լեզու բացատրութեան մի-
 ջոցներ են իրարու ընկեր, իրարու կարօտ: Երկուքին ևս
 հզօր են առանձին, իսկ իմիասին՝ ամենազօր: Հասարակ
 խօսակցութեան մէջ անգամ շարժումներն անհրա-
 ժեշտ են, և մեք, առանց գիտակցութեան, շարունակ
 շարժումներ կը գործածեմք բաւերուն հետ: Շարժմամբք
 կը խօսիմք երբ լեզուաւ չեմք բարբառիլ. և յաճախ, խօ-
 սակցին պատմութիւնն բառական արտասանութեամբ
 ընդ միջնէ չուղելով՝ զլիտոյ շարժումներ կ'ընեմք, որով կը
 ցուցնեմք թէ կը լսեմք, կը հասկանամք, կը հաստա-
 տեմք: Իսկ ատենախօսութեան մէջ անգին է շարժմանց
 օժանդակութիւնն: Որքան և ճարտար լինի ոք յառողա-
 նութեան, յոյժ թերի ատենախօս է եթէ մարմնոյն պատ-

չաճ շարժմամբ շարժելով պատկերացունքը հոգւոյն շարժումներն: Մինչ ձայնն ականջին կը խօսի, աչքն, յօնքն, գլուխն, գոյնն, բազուկներն, ամբողջ մարմինն կը խօսին ունկնդրաց աչացն, և սպասութիւնն կը կրկնապատկի, սրպէս թէ պերճախօսութիւնն զգայարանաց բոլոր դաներէն ներս խօսեցող կը գրաւէ ունկնդրաց հոգին: Միայն աչքն ի՞նչ զարմանալի գործի մ'է բացատրութեան: Իւր կողերուն շնորհիւ փակուելու կամ բացուելու, պզտիկնալու կամ ահագին կերպիւ մեծնալու ընդունակ, մեղմանալու կամ սաստկանալու, քաղցր կամ դաժան լինելու, հեռին կամ մօտն նայելու կարող գործարան. կրնայ նա բացատրել հարցում, զարմանք, զայրոյթ, սէր, գթութիւն, աղերս, արհամարհանք, վերջապէս ամեն կիրք որ կրնայ բացատրուիլ լեզուաւ: Գլուխն գէպ ի վար հակելով կը բացարէ վիշտ կամ ամօթ. ընդվզելով կը բացարէ հպարտութիւն, յամառութիւն, արութիւն. տեսակ մի ցնցմամբ կը ժխտէ, ուրիշ տեսակաւ մի՛ կը հաստատէ. գէպ յառաջ երկնալով ու շարժութիւն կը յայտնէ, մէկդի գտնալով՝ զարշանք կամ սոսկումն: Չեռքն դրուելով ի ճակատու՝ կը ցուցնէ խոկումն կամ վիշտ, ի սիրտ՝ կը նշանակէ խիզճ, ի շուրթն՝ կը հրաւիրէ լուսութիւն կամ կը նշանակէ գաղտնիք, յաշտ՝ կը յայտնէ ամօթ:

Շարժումներ կան զորս արտակարգ յուզմանց մէջ միայն բնութիւնն կատարել կուտայ, զայնս եւս սարսի առննախօսն ձանաչել, այնպէս որ իւր տրամադրութեան տակ ունենայ շարժմանց ճոխ պէսպիսութիւն որովք գիտնայ իւր բացատրութիւններն աւելի պարզել և աւելի ազդու գործել:

Կրից արտաքին բացատրութիւններն քաջ ձանաչելով՝ ասանախօսն միջոց մի կ'ունենայ իւր կիրքն զսպե-

լու երբ սպառնան կամքի սանձն խորտակել, և դրզը-
 սելու՝ երբ թոյլ կամ թմրած մնան: Հոգեբանութիւնն
 կ'ուսուցանէ թէ երբ կատարեմք այս ինչ կիրք բացատ-
 րող շարժումն, այդ կիրք կ'արթննայ ի մեզ: Կամայական,
 արուեստական ծիծաղն անգամ մինչեւ մէկ աստիճան
 կը զուարթացունէ զմեզ երբ տխուր եմք: Եթէ քաջ ճա-
 նաչեմք շարժումներն, կարող կը լինիմք, ըստ պիտոյից,
 զարթուցանել ի մեզ զայրոյթ, արհամարհանք, դարչանք,
 խանդաղատանք և այլն, կատարելով պաշանջուած շար-
 ժումներն: Այս ծանօթութեան և կրթութեան շնորհիւ
 է, ըստ մասին, որ ատենախօսութեան արուեստագէտն
 կը ջնուցանէ պաղ ժողով մ'անգամ, հետաքրքրական
 կը գործէ անտարբեր նիւթն իսկ: Նորա պերճախօսու-
 թիւն միշտ շտպասեր մեծ առիթներու և մեծ դէպքերու:

Մեք չունիմք նկարել աստ կրից պատկերներ, այլ՝
 դնել առաջի ուսանողին սկզբունք և ընդհանուր կանոն-
 ներ, ինչ ինչ մանրամասնութեամբ հանդերձ, որոց ա-
 ուջնորդութեամբ կարելի լինի մշակել շարժումներն:

ՆԱԽ, հոգ տանիլ ամբողջ մարմնոյն բարոյական
 պատշաճութեան: Ուղիղ կանգնիլ, բայց ստանց հպար-
 տութեան, առանց բրտութեան: Վեհանձն երեւիլ բայց
 ոչ խրոխտ: Քայլափոխն հաստատուն բնաւորութիւն նը-
 շանակէ բայց ոչ գոռոզութիւն: Կացքն վայելուչ, շնոր-
 հալի լինի: Զգեստուն կամ ո և իցէ բանի հետ շխաղալ,
 տեղն շուտ շուտ շփոխել, ձեռքն գրպանն շխտել, ծան-
 րութիւնն մէկ ոտքին վերայ ձգելով այն կողմին չհակիլ,
 անհոգ կամ շափաղանց համարձակ կամ ամշկոտ չլինիլ:
 —այդ ամենայն կարեւոր պայմանք են որոց պատկառ
 կալ պարտի ատենախօսն:

ԵՐԿՐՈՐԴ, հոգ տանիլ ընդհանուր կացից բնախօ-
 սական յարմարութեան, այսինքն զգուշանալ այն ամե-

նէ որ շնչառութեան և ձայնի գործարանաց ազատ գործածութեան աննպաստ է: Գլուխն ուղիղ կենայ, ուսերըն գէղ կտե, կուրծքն գէղ յառաջ, պարանոցն կաշկանդումէ ազատ լինի, իրանն ուղիղ, այնպէս որ թոքքի խորոց լեցուին և շնչոյութիւնն ըստ պիտոյից կառավարուի:

ԵՐՐՐՐԳԻ, ներդաշնակութիւն լինի բովանդակ մարմնոյն բացատրութեանց մէջ: Ձեռք, ոտք, աչք և գլուխ՝ լեզուին հետ պարտին մի և նոյն բանն բացատրել: Ինչ որ է տիրող գոացումն, պարտի տիրել բովանդակ մարմնոյն, և ողջոյն մարմնոյն այլ և այլ մասունք պարտին գնոյն բացատրել համարարբա: Յորժամ վրէժխնդրութեան խօսք կը լինի, խիստ պիտի լինի գէժքն, և բոլոր մարմնոյն մէջ գորութիւն պիտի երևի, սրունքն ծրուած կամ բազուկներն թոյլ կախուած շպիտի մնան: «Եթէ վշտանայ մի անդամ, վշտանան ընդ նմա ամենայն անդամք»: այս է բնութեան օրէնքն: Եթէ երեսն կը խնդայ, բոլոր անդամք ևս պարտին խնդալ իւրաքանչիւր իւր կերպիւն: Յորժամ քաղալ է բ ս ի կոչուած վիճակին մէջ է քնէսծեալն, բաւական է որ քնէսծուն տայ նորա մէկ ձեռքին բոնցի վիճակ, նորա բոլոր մարմինն կուգայ խկոյն ի ներդաշնակութիւն այդ մէկ ձեռքի հետ: միւս ձեռքն, գլուխն, սրունքն, ընդհանուր կացքն, ամենայն կ'առնուն յարձակողի կամ սպառնացողի դիրք:

ՉՐՐՐՐԳԻ, շարժումներն շափաւոր լինին և միշտ նշանակիչ: Ոչ երբէք շարժում ընել շարժում ըրած լինելու համար: Ամէն շարժում որ խօսքին իմաստն լրացունելու կամ գորացունելու կամ պարզելու շժառայեր, կը մասնէ համբակութիւն և արուեստակութիւն, և աւելորդ շփում յառաջ բերելով ունկնդրաց ուշադրութեան՝

կը վասնէ նոցա մտաւորական ոյժն : Էաւ կ'ընեն նորա-
վարժք եթէ յայանապէս կարեւոր և նշանակիչ շարժումնե-
րըն ընելով միայն շատանան , և տակաւ աւելի կատա-
րելագործուին : Նաև այնպէս քաջ ուսանիլ պարտին յա-
ռաջագոյն զի ի հրապարակի կարեւան կատարել շար-
ժումներն որպէս թէ բնազդամամբ , առանց մտածման ,
առանց պատրաստութեան : Յայտ է թէ ամեն ճառ նոյն-
քան շարժում չպահանջէր . կրքոտ ասեմախոսութիւն
մի շատ աւելի շարժում կը պատճառէ քան հանդարտ
տրամաբանութիւնն : Անհատական բնաւորութիւնն ու
ճիշդ նոյն ազդեցութիւնն ունի , կրքոտ մարդն աւելի
շարժում կ'ընէ քան հանդարտ տրամաբանողն :

ՀԻՆԳԵՐՈՐԳ , շարժումն վայրիկ մի յառաջ սի-
տի սկսի քան զարտասանութիւն բառին կամ բառերուն ,
որոց օժանդակելու կը ծառայէ : Այս է բնական կարգն :
Եթէ յանկարծ ահարկու առարկայի մ'առջև գտնեմ ինք-
զինքս , դէմքիս սյլասյլութիւնն և կայքիս փոփոխութիւ-
նըն աւելի շուտով աւելի կ'ունենան քան ձայնարկու-
թիւնս կամ լեզուական բացատրութիւնս : Եթէ ժխտել
կ'ուզեմ , զլխուս ժխտական ցնցումն աւելի յառաջ կը
սկսի քան ժխտական բառ'բուս արտասանութիւնն :
Շարժումն է որ , իբր պարզագոյն և արագագոյն միջոց,
կը սկսի բացատրութիւնն , և ապա բարբառն կուգայ կը
հասնի անոր օգնութեան :

Շարժումն թէպէտ յառաջ կը սկսի սակայն շաւար-
տիր յառաջ քան զխօսքն որում կ'օժանդակէ , այլ ա-
նոր հետ կ'աւարտի :

ՎԵՑԵՐՈՐԳ , շարժմունք պարտին լինիլ վայելուչ
և համարձակ : Ուժգնութիւն տալու ծառայող շարժումն
ուղիղ գծով և արագ կ'ընթանայ , բայց ուրիշ շարժ-
մունք ընդհանրապէս կոր գծեր , բոլորակի այլևայլ մա-

սերն կը յօրինեն, ոչ թէ ուղիղ գծեր: Շարժումն ինչ տեսակէ և լինի, սէտք է որ համարձակ և կատարեալ լինի. ոչ դաստակէն և կամ արմուկէն այլ միշտ ուսէն լինի, ամբողջ բազկին և ծղեաց մասնակցութեամբ: Ուսանողք, մանաւանդ ամշկոտներն, յաճախ կը թերանան յայտ ընելով կիսկատար վիրաւորեալ շարժումներ, որք հանդոյն ի մանկանց գծեալ յախուսն գծերուն, անհասկանալի և անիմաստ կը մնան:

ԳՆՍ ԵԷ

Շ Ա Ր Ժ Մ Ո Ւ Ն Ք Տ Ե Ղ Ի Ո Յ

Շարժումնք երեք տեսակ են. ՇԱՐՃՄՈՒՆՔ ՏԵՂԻՈՅ, ՇԱՐՃՄՈՒՆՔ ՆՄԱՆՈՂՈՒԹԵԱՆ և ՇԱՐՃՄՈՒՆՔ ՈՒԺԳՆՈՒԹԵԱՆ կամ ՊՆԴՄԱՆ:

Մկտինք Տեղւոյ Շարժումներէն:

Երբ կը նկարագրեմք ինչ, մեր երեւակայութեան առջև ներկայ է այն և մեք բնական միտում մ'ունիմք ունկնդրաց ցուցնելու կողմն և վայրն ուր զայն կը նկատեմք լինիլ: Դիցուք թէ խօսողն ունեցած է ըմբռնումն այս ինչ իրին, և երեւակայութեամբ զետեղած զայն. առաջին շարժումն է աշօք ակնարկել զէսլ յայն, երկրորդը՝ գլխոյն դարձն, երրորդն՝ իրանին կամ ամբողջ մարմնոյն դարձն, չորրորդն՝ ձեռին կամ բազկին տարածումն, հինգերորդն՝ այն իրին բառական արտարերութիւնն: Այս հինգ շարժումներն հետզհետէ կը կատարուին այնպիսի արագ յաջորդութեամբ մինչև ունկնդրաց թրւիլ թէ ամենն միահաղոյն կատարուեցան:

Եթէ փոքր առարկայ մ'է զոր կ'երեւակայեմք տեսութեան զաշտին վերայ, ցուցամատիւ կը նշանակեմք

զայն . մեծագոյնն առարկայ մի՝ ամբողջ ձեռամբ՝ բացած ,
և՛ս մեծագոյնն առարկայ մի՝ ձեռքի շարժմամբ շրջանակ
մի դժեւով , իսկ զայն որ կը ընու տեսութեանն ողջոյն
դաշանն , կը տեղաւորեմք երկուց բաղկաց լայնարձակ
շարժմամբ :

Առարկային մօտաւորութիւնն կը ցուցուի ձեռքին
ափի կողմն դէպ ի վեր դարձուցած , իսկ Հեռաւորու-
թիւնն կը նշանակուի ափն դէպ ի վար դարձած՝ փոքր
ինչ բարձր և հորիզոնական ուղղութեամբ ձեռին :

Ժամանակն ևս միջոցի ձեռն տակ կ'երեւակայեմք :
Ն ե ր կ ա յ ն առաջի կայ և մօտ : Բ ա ց ա կ ա յ ն Հե-
ռին է և մեկուսի : Ա ն ց ա լ ն ետեւն է , Հեռաւոր ան-
ցեալն՝ ետեւն , Հեռին և բարձրն կը կենայ . Հեռաւոր ա-
պագայն՝ առջևն , Հեռին և բարձրն կը գտնուի :

Ձեռաց շարժումն կրնայ լինիլ դէպ ի վեր , դէպ ի
վար կամ հորիզոնապէս : Ամեն ինչ որ բարոյական աշ-
խարհի մէջ վսեմ , գերազանց , ազնիւ , բարձր կամ մեծ է ,
այսինքն ամեն ազնիւ զգացում կամ վսեմ խորհուրդ կը
բարձրացունէ Հոգին , աշքն և ձեռքն , և կը պահանջէ
դէպ ի վեր շարժում : Ամեն ինչ որ , բնդհակառակն ,
դժուծ , ստորին , նուաստ , ցած , փոքր , խոտան , արհա-
մարհ , գոեհիկ , անկեալ , վատ , սողացող , շնթող , դի-
ւային , դժոխային է , ցած դիրք ունի , և դէպ ի վար
կ'ուղղէ Հոգին , աշքն , և կը բացատրուի դէպ ի վար
շարժմամբ : Ուրախութիւնն , հաւատքն , յոյսն , արիւ-
թիւնն և որ ի կարգին , կուտան ուղիղ կացք , դէպ ի
վեր կը դարձունեն Հոգին , աշքն , ձեռքն , և կ'արտա-
յայտուին դէպ ի վեր շարժմամբ : Այն ամենայն զգաց-
մունք և խորհուրդք , որք ախրութիւն , յուսահատու-
թիւն , սուգ , տկարութիւն և զնմանիսն կը ցուցնեն ,
զմարդ նկուն , բնկճեալ կ'ընեն , և կը յայտնուին դէպ

ի վար շարժմամբք : Այն գաղափարք որ զմիջակն , գտ-
վորականն , զչափաւորն կը ցուցնեն , կը բացատրուին մի-
ջին շարժմամբք , կամ բնաւ շարժում չեն սրահանջեր :

Հայերէնի մէջ բազում վերացեալ բառեր ունիմք ,
որոց նախնական նշանակութիւնն թանձրացեալ է : Այդ
կարգի բառեր արտասանելու պահուն կրնայ ստենախո-
սըն շարժումներ կատարել զէպ ի վեր , զէպ ի վար կամ
այլապէս՝ ըստ թանձրացեալ նշանակութեանցն : Օրինա-
կի համար , պ ա ռ ծ , հ ա ղ ա ղ ա կ պ ե ռ ճ բառերն
բարձր կամ բերձ կը նշանակեն նախնապէս և կը պա-
հանջեն զէպ ի վեր շարժում : Դ ի շ ը ի ն ն զ ի շ է ,
հորիզոնական շարժում : Խ ը թ ի ն ն խոր է , յար թ ա-
փանցելու համար խ ո ը հ ի լ պարա է : Վ և հ ն վերհ է ,
այսինքն յոյժ վեր : Յ ա ն ց ա ն ք ն անդր քան գ ս ա հ-
մ ա ն ա ն ց ն ի լ է : Մ ո լ ո ը ի լ ն ոլորիլ է :

Գ Ե Ս Զ Է

Շ Ը Ր Ժ Մ Ո Ւ Ն Ք Ն Մ Ը Ն Ո Ղ Ո Ւ Թ Ե Ը Ն

Ատենախօսն այնպիսի կենանի երեակայութեամբ
կ'իրացունէ յաշս իւր զայն զոր կը նկարագրէ զի բը-
նազգմամբ իմն կը կատարէ զնկարագրեալ գործողու-
թիւնն : Դաշտային տեսարան մի նկարագրելու պահուն
սերմանելու կամ հնձելու շարժումներն կ'ընէ , ծովային
տեսարան մի պատմելու պահուն կը նմանցունէ բազկօքն
զբարախումն ալեաց , գտատանումն նաւուն :

Բարոյական գործողութիւններ ևս կրնան նմանո-
ղութեամբ պատկերացուիլ ի շարժմունս : Յորժամ ա-
տենախօսն կը խնդրէ ունկնդրաց ուշադրութիւնն , իւր
ձեռք կը կարկատէ զէպ ի նոսա որպէս թէ ըսէր . «Շը-
նորհեցէք ինձ ձեր մտադրութիւնն :» Նոյն շարժմամբ կը-

Նայ նաև նշանակել «Ահա ձեզ կը մատուցանեմ սախոր-
հուրդն»։ Բազում վերացեալ բառեր կան Հայերէն, որք
մարմնական և բարոյական գործողութեանց միջև և զած
նմանութեան վերայ հիմնեալ են, օրինակի համար քմ-
բ ո ն ե լ կը նշանակէ ի միտ առնուլ, հասկանալ, մը-
տ օ ք բ ո ն ե լ գաղափար մի ինչպէս ձեռամբ կը բռ-
նուի իր մի։ Ուստի և երբ ատենախօսն կը գործածէ
քմ բ ո ն ե լ, ձ ե ո ն ա ս լ ի ն ի լ, ս ա ն հ ա ր լ ի -
ն ի լ և այլ այս կարգի բառեր, կրնայ պատշաճօրէն կա-
տարել թանձրացեալ առմանց շարժումներն։

Նմանողական շարժմանց մէջ պէտք է զգուշանալ
շափաղանցէն։ Դիւրին, պարզ նմանողութիւններն կրնան
աւելի յաճախ կատարուիլ քան բարդ և բազմամասնեայ
նմանողութիւններն։ Նաև, պէտք չկայ նմանողութիւնն
կատարեալ և ճիշդ կատարելու, եթէ ոչ ծաղրելի անգամ
կը լինի խօսողն։ Ա մ ա շ ե լ, կ ո բ ա ն ա լ և ք ն գ գ ե -
տ ի ն մ տ ա ն ե լ բառերն կրնան ծառայել ի բացատրու-
թիւն այս սկզբան։ Ա մ ա շ ե լ ու նմանութիւնն գիւ-
րին է կատարել պարզապէս աշքերն խոնարհեցունելով։
Կ ո բ ա ն ա լ աւելի սաստիկ ամօթ կը ցուցնէ, որ ևս
կրնայ նմանցուիլ գլուխն գէս ի վար հակելով և ձեռ-
քով աշքն ծածկելով — գործողութիւն որ արդէն բա-
ւական բարդ է, և միշտ չկրնար կատարուիլ այդքան
ճշգրտութեամբ։ Ը ն գ գ ե տ ի ն մ տ ա ն ե լ կը նշանակէ
ամօթոյ այն ծայրագոյն տոտիճանն յորում ամօթահարն
գոհ չլինիր իր աշքն ուրիշի աշքէն պահպանելով, այլ
կը բաղձայ գլխովին աներևոյթ լինիլ յաշաց՝ մանկով
գետնի տակ — գործողութիւն կարի բարդ, զոր նմանո-
ղութեամբ կատարելու փորձն պիտի լինէր խեղկատա-
կութիւն։

ՇԸՐԺ Մ ՈՒՆ Ք ՈՒԺ ԳՆ ՈՒԹ Ե ԸՆ

Հողւոյն յուզումն մարմնոյ յուզումն կը պատճառէ : Մարմնական շարժմանց ուժ գնութիւնն և արագութիւնըն համեմատական են զգացմանց զօրութեան և կրից ստատկութեան : Գլխոյ և անդամոց շարժումներէն կը շարժեմք ներքին պեծփութիւնն ինչպէս նաև ձայնին հանգամանքէն եթէ կը խօսի : Ամեն ուժ գին խորհուրդ և բուռն կիրք շարժում յառաջ կը բերէ բուռն և ուժ գին :

Ահա այս օրինաց շնորհիւ է որ առեմախօսն կրնայ ի ձեռն շարժմանց՝ բազմապատիկ զօրացունել արտասանեալ բառին իմաստն :

«Երէկ վարի թաղն գնացի՞ր» հարցման կը պատասխանեմ առանց շարժման՝ պարզապէս բսելով «Ոչ» : Եթէ հարցուի. «Դո՞ւ ևս այն անստորագիր նամակին հեղինակն» կը պատասխանեմ «Ո՛չ» և գլուխս ալ երկու անգամ ժխտողական շարժմամբ կը տատանեմ : Եթէ հարցում լինի. «Մեզ հետ կը միանա՞ն զՊ. սպաննելու» «Ոչ» կը պատասխանեմ ուժ գնութեամբ, և ոչ միայն գլուխս այլ և ձեռքս կը տատանեմ բազմիցս ժխտականօրէն, և այս շարժմամբք այնքան ոյժ կուտամ «ոչ» իս որքան դժուար կրնայի տալ եթէ զայն տասն անգամ կրկնած լինէի :

«Դո՞ւ ևս դձնապանն» կը հարցնեմ առանց շարժման. բայց եթէ բսեմ. «Դու ևս այս բոլոր շարեաց պատճառն» երկու ձեռքս ուժ գնութեամբ դէպ ի նա կ'ուղղեմ «Դու» բառին ահագին պնդում տալու համար :

Ուժ գնութեան շարժմունք անհուն պէսպիսու-

Թեան ընդունակ են և կրնան ըստ խառնուածոյ և ճաշակի ատենախօսին զանազանիլ : Ոմն սովոր է ասից մատերուն վերայ ելնել և ապա կրունկներուն վերայ հաստատիլ մեծ զօրութեամբ, որով ահագին պնդում կուտայ խօսքին : Այլ ոմն կը բարձրացունէ իւր երկու բազուկներ և ապա այնպիսի ճգամբ վար կ'իջեցունէ զայն ըստ որպէս թէ բովանդակ չէնքն վար պիտի բերէ, այս ալ ուժգնութեան մեծ շարժում մ'է : Բազումք սովոր են հարուած ասիով կամ բանցի տալ բեմին կամ մէկ բռամբ միւս ասին : Այսպիսի առաւել կամ նուազ ուժգին հարուածք պնդման յաճախագոյն ևս կը արուին օղին :

Շարժումն այնքան աւելի մեծ ուժգնութիւն կ'ընծայէ խօսքին որքան աւելի բազում անդամներ մասնակցին և որքան աւելի ստատկութիւն գրուի շարժման մէջ : Մէկ մասն շարժել, մէկ ձեռքն շարժել, երկու ձեռքն շարժել, ձեռքերն և դուրսն շարժել, ամբողջ մարմին շարժել՝ ըստ պիտոյից՝ կարելի է :

Հետեւեալն ելուն շար մ'է, յորում ուժգնութիւնըն պարտիլինիլ աճեցուն թէ ըստ առսզանութեան թէ ըստ շարժմանց :

«Կ'ըսեմ ձեզ, թէ և դ ու թ (ուժգնութիւն տուր դ ու թ բառին ձեռքդ դէպ յառաջ տարածելով) թէ և բ ու թ ա շ խ ա թ չ , (դէպ ի դուրս լայնատարած շարժում մ'ըրէ բազկօք որպէս զի պնդում տաս բ ու թ ա շ խ ա թ չ ին) թէ և հրեշտակ յ ե բ կ ն ի ց (դէպ ի վեր շարժում տեղոյ և ուժգնութեան վասն և բ կ ն ի ց բառին, աչքդ ևս ի վեր համբառնալով) յայտարարէ զայն, չպիտի հաստատմ (ժխտական շարժում գլխով) : »

ԳԵՍ ԴԵ

Տ Ը Ս Ն Ե Ի Վ Ե Յ Ճ Ը Բ Ժ Ո Ի Մ Ն Ե Բ Պ Ը Տ Կ Ե Բ Ը Յ Ե Ը Լ

Ինչ ինչ կարևոր շարժումներու վերայ ուսանողաց յատակ դադափար տալու նպատակաւ կը ներկայացունեմք այժմ տասն և վեց պատկերներ, մի մի պատկերի համար կը դնեմք այնպիսի խօսք, որում կը յարժարի ցուցուած շարժումն :



1



2

1 Պատկերի մէջ ասեմախօսն կը ներկայանայ ժողովրդեան վայելչապէս :

2 Պատկերն կը ցուցնէ թէ որպէս խոնարհութիւն կ'ընէ ասեմախօսն : Այս է տառջին շարժումն զոր կ'ընէ

նա, և որով կը սկսի իւր խօսք: Չկայ խօսք որ կարենայ դարձածուիլ այս շարժման անդն, շարժում լուսն և մունջ բայց կարի բացատրիչ: Հազիւ թէ գլուխն վեր առած՝ պարտի սկսիլ խօսքն:



3



4

3 Պատկերն կը ներկայացունէ զխօսողն իբր թէ հետևութիւն մի կը յայտարարէ կամ իրողութիւն մի կը հաստատէ, զոր օրինակ՝ «Այսպիսի են, բարեկամք, հետևանք անժուժկարութեան»:

4 Պատկերն կը ներկայացունէ զխօսողն դէպք մի նրկարագրելու կամ յայտարարութիւն մ'ընելու վայրկենին՝ «Իրցուք թէ հարցուէր այսպիսի նուաաս աղնուատոհմիկներու նախնեաց թէ արդեօք, եթէ էր նոցա ընտրութիւն ընել, պիտի բաղձային նոցա՞ թէ իմ բնաւորութեամբ գաւակներու»:



5



6

5 Պատկերին մէջ խօսողն բան մի դրականապէս կը
հաստատէ, զոր օրինակ՝ «Գործադրութիւն պիտի օրէնքն»:

6 Պատկերին մէջ ատենախօսն եռանդուն յորդոր մի
կը կարգայ:

«Ձձեզ, Տեարք իմ, կաղաչեմ և կ'երդուրնցունեմ
որ ձեր դատավճռոյն միջ իշխէք վարուիլ ճիշդ որպէս
կը խորհիք»:



7



8

7 Պատկերին մէջ խօսողն զայրացեալ կոչում մի կ'ընէ. «Թո՛ղ սիրտի տամք որ հրոյ և սրոյ զոհէ նա զՊետութիւնն Հոսովմայ վասն զի այդ է իւր ահուելի հանցոյք»:

8 Պատկերին մէջ խօսողն բանի մի տարածումն կամ ընդարձակութիւն կը ցուցնէ. «Թէ և բոլոր աշխարհ յայտարարէ զայն...»:



9



10

9 Պատկերին մէջ ասեմախօսն կ'ուզի խօսքն վսեմ և մեծ ինչ առարկայի. —

«Ո՛ր սրբազան ձեւեր, ի՛նչ հպարտ կ'երեւիք. յո՛ր բարձրութիւն կ'ամբառնաք զձեր գաղաթունս ի կամարին. ո՛րքան մեծ էք, ո՛րքան հզօր և ո՛րքան ազատ!»

10 Պատկերին մէջ խօսողն զմայլած է. — «Աքանջելի ես դու, ո՛ր ակն արեւու!»

«Ողջույն, ո՛ր սիրուն թագուհիդ գիշերոյ!»



11



12

11 Պատկերին մէջ խօսողն ցնձագին հրապուրանաց մէջ է. —

«նորէ՛ն կը շնչեմ լերին օդն, նորէ՛ն կը քաշեմ իմ բլրոց վերայ :»

12 Պատկերին մէջ խօսողն կը ներկայանայ ձեռքն խղճին վերայ դրած. — «Նղբայրներ, բարի խղճմտանքով ըրի ինչ որ ցարդ ըրի :»



13



14

13 Պատկերին մէջ խօսողն ուրախալի անակնկալ
մ'ունի .

«Աս դո՛ւն ես . եղբա՛յր իմ ։»

14 Պատկերն կը ներկայացունէ զխօսողն ի հիացման .

«Ո՛ր վեհապանձ ե լուռ լեան ։»



15



16

15 Պատկերն կը բացատրէ գորշանք .

«Դու ս՛րդ , դու ի՛ժ , դարձիր ի քոյդ բնիկ հող ։
Ի բա՛ց ։»

16 Պատկերն կը բացատրէ յանկարծական ահ .

«Հրեշտակք ե պաշտօնեայք շնորհաց , պաշտպա-
նեցէք զմեզ ։»

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Ա Տ Ք

Լաֆոնդէնի առակներուն սքանչելագոյններէն երկուքն կը դնեմք հոս, որոց ընթերցումն մեծ ճարտարութիւն կը պահանջէ : Զայնս թարգմանելու մէջ ջանացինք ընտանի սճ գործածել, որ միայն կը պատշաճի առակաց, և յաճախ խոտորելով բնագրէն փոփոխեցինք սողերուն երկայնութիւնն և բացատրութեանց կղանակըն այնպէս որ դայլին ու գառին, առիւծին, աղուխտուն և իչուն սողերն ունին իրենց մասնաւոր յարմարութիւններն իբրև առագանելի կտորներ :

ԺԱՆՏԱԽՏԷ ԲԹՆՈՒԱՅ

ԱՆԱՍՈՒՆՔ

Այն սոսկալի ահեղ ախտ,
Այն՝ զոր երկինք ցատուցեալ
Հնարեց երկրին ի պատիժ,
Ժանտախտն ասեմ յանուանէ,
Որ ընու մէկ շրն գԱխերսն,
Տայր պատերազմ կենդանեաց .
Զէին ամենն ալ մեռներ,
Սակայն ամենն ալ բռնուէին :
Ոչ ոք այլ ևս գհեա էր
Ոգեպահիկ պարենին,
Ախորժակ չէր ազգեր կերն,
Ո՛չ ևս արջ դայլ կամ աղուէս
Անմեղ որոց հայէին :
Տատրակէն խոյս տայր տատրակ,
Ոչ սէր մնացեր ոչ բերկրսնք :
Առիւծն ժողով կոչեց ըսաւ . Սիրելիք իմ,
Վասն անօրէն մեղաց մերոց կարծեմ երկին

Այս անձանք դժբաղդութիւն զրկած է մեզ .
 Թող ուրեմն այն ոք մեր մէջէն սո է գըլուխ
 Մեղաւորաց , ինք զինք զոհէ երկնից ցատման .
 Թերեւս այն՝ւ բժըշկութիւն զանեն բուրքք :
 Ձի կը սովորիմք պատմութենէ թէ անձնանուէր
 եղան անհատք ի փրկութիւն ընկերութեան :
 Չխարենք մենք մեզ , այլ անաշտ քննենք մեր խիղճ ,
 Աստտովանիմ ես իմ մասին թէ շատ անգամ
 Յազուրդ տալով ախորժակին իմ որկրամուլ՝
 Բազում անմեղ արջառ ոչխար եմ փարատած :
 Ինչ վնաս ըրած ունէին ինձ . — Ոչ ինչ , ոչ ինչ .
 Երբեմն մինչ իսկ պատահած է որ ուտեմ , ո՛հ ,
 Զհոգիւն :

Ուրեմն ես ինքն եմ սատ պատրաստ տալ զանձն իմզոհ ,
 Բայց կը թուի ինձ թէ է արժան որ անցնիր ոք
 Գատէ ինքզինք , ինչպէս ես զիս , այնպէս է՞ , Տեարք .
 Որպէս զի այն զոհութի ում պարտ է օրինօք :

Տէ՛ր Աբքայ , խօսք ունիմ ըստ ազուէն անդէն ,
 Դուք ի՛նչ բարի թագաւոր էք , ի՛նչ փափուկ խիղճ .
 Ոչխա՛ր ուտել , ցա՛ծ կենդանի , մե՞ղք է եղեր ,
 Արեւանց պատիւ բարեհաճած էք զայն ուտել :
 Գալով հովուին , կրնամք բսել թէ նա անշուշտ
 էր պատժապարտ՝ լինելով յայնց որք կը ժպրհին
 Տիրել ըլոր մեր կենդանեացըն աշխարհին :

Ազուէսըն այնպէս ըստ ծափ բուրքք զարկին .
 Համարձակ ո՛չ ոք զանուեցաւ վազրին , արջին
 կամ զայլ հզօրից քննել ոճիրքն աններելի .
 Կուտարարներն , մինչեւ իսկ շունն , հոշակեցին
 Իրենք զիրենք սուրբ , անմեղուկ բուրբովին :
 Էշն ալ՝ եկաւ իրեն կանգին և կը յիշեմ
 Թէ , կակազեց , օր մի վանքին մարգտղեանէն

Երբ կ'անցնէի, քաղցրն, առիթն և սատանան,
 Զիս մըղեցին և ևս խածի մի քանի թել:
 Իրաւունք չէր. ծուռ նստինք, Տեարք,
 շխտակ զբուցենք:

Խօսքըն բերանն էր դեռ իշուն երբ կենդանիք
 Միաձայն սօսայ սկսան. դատնք, դատնք: Գրագէտ
 մի գայլ

Փաստարանեց թէ զոհել սարա էր կենդանին,
 Այն անիծեալն, կունարն, քոստան, որոյ համար
 Սարսափելի ակտն այցելած էր մեր աշխարհ:
 Փռչեառեալ մեղքն մահացու հոշակեցին:
 Ուրիշներուն խտտէն ուտե՛լ, ի՛նչ մեծ ոճիր.
 Անոր պատիժ արժանաւոր էր միայն մահն.
 Ինչպէս ի դորժ ալ իսկոյն դրին դատավրճիւն:

Թէ շուտա ևս սեաւ քեզ դատաւորն տայ վճիռ,
 Թէ չզօր՝ ճերմակ դու երեսով տուն դարձիր:

ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌՆ

Հզօրագունին փաստըն է միշտ լաւագոյն.
 Պիտի ցուցնեմ զայն իսկոյն:

Աւուրը մէկը

Գառնուկ մի կեցեր

Յստակ վտակէ մի

Պաղուկ ջուր կը խմէր:

Եւ ահա գայլ մի անօթի

Այն կողմերը կուգայ որսի:

Ծօ՛ դու որսու ապաւինած ջուրս այսպէս

Կը սղատրես, գոչեց գաղանն կատաղի,

Յանդգնութեանդ զսպտուհա կրես սիւսի:

Ներեցէք Արքայ,

Գառն պատասխան տայ,

Խնդրեմ նկատեցէք
 Դուք ո՛ւր էք, ևս ո՛ւր .
 Հոս քսան քայլ վարով
 Ծառադ կը խմեմ ջուր,
 Եւ հետեւապէս
 Կարելի չէ որ
 Պղտորեմ Ձեր ջուր :

Անշո՛ւշտ, պօռաց, արիւննուշտ գայլըն՝ անգութ,
 Իմ խմելու ջուրն կը պղտորես դու, անշո՛ւշտ .
 Գիտեմ ալ որ հայհոյեր ևս ինձ հերու :

Ի՞նչպէս կրնայի
 Ձեզի հայհոյել
 Երբ ծնած իսկ չէի,
 Կաթ կուտեմ ևս դեռ :
 Դու չէի՞ր ան, ուրեմն եղբայրդ էր անշուշտ :
 Եղբայր շունիմ ևս :
 Ձեր անեցւոցմէ էր մէկ ուրիշն այն ուրեմն .

Ձի ամենքդ ալ, շուն և հովիւ, գառ, ոչխար,
 Ձգիտեմ չէ, այլ ևս դիս բնա՛ւ չէք հողար :
 Հողիս բերանս բերիք, իմ վրէժ ևս կ'առնում :
 Եւ սառւ զգառն
 Տարաւ զայն յանասան,
 Կուշտ ու կուռ կերաւ,
 Իրաւ անիրաւ :

Ի ՔԱՂԱՊՐԱ

Օր մի, կը ճամբորդէի ի Քաղապրա : Այդ երկրի
 մարդիկ շար ևն, և, կարծեմ, ոչ գօք կը սիրեն, մաս-
 նաւորապէս շեն ատորժիր Զոանասցիներէն : Ձվանէրն
 քացատրել երկար պիտի լինէր, բաւ է բսել թէ նորա
 զմեզ մահու շափ կ'ատեն : Ուղեկիցս էր երխասարդ մի

որոյ կերպարանն . . . որս՝ նմանցունեմ, էր նմանն Տիար . . . ին զոր տեսանք ի Ռէնսի: Զայս շեմ ըսեր ձեր հետաքրքրութիւն շարժելու համար. իրողութիւնն այսպէս է: Այն լերանց մէջ ձանապարհք դաճալէժ են, մեր ձիեր կը քայլափոխէին մեծ նեղութեամբ. ուղեկիցս առաջ անցած էր, և, այժուզի մի որ նմա աւելի դիւրին և աւելի կարճ թուեցաւ, մոլորեցոյց զմեզ: Յանձանքն իմքս էր, պէ՛տք էր որ վստահէի քսանամեայ գլխոյ մի: Անտառաց մէջէն մեր ուղին փնտռեցինք որքան որ ցերեկ էր, բայց որքան աւելի կը փնտռէինք այնքան աւելի կը կորսուէինք, և սե գիշեր էր երբ հասանք յոյժ սեւա տան մ՝ առջև: Ներս մտանք, ոչ առանց կասկածի. բայց ի՞նչ կրնայինք ընել: Անդ կը գանկնք ամխազորձներու ամբողջ ընտանիք մի ի սեղան նստած, ուր և զմեզ հրախրեցին: Իմ երիտասարդ ընկեր աղաշանքի շսպատեց. և ահա սկսանք ուտել ու խմել, գոնէ ինքն. քանզի ևս աւելի դրադած էի մանաւանդ մեր ասպնջականաց դէմքըն և զտեղին քննելու: Մեր ասպնջականք ունել ունէին ամխազորձներու երես, սակայն սուսն, աւելի զինարան պիտի կարծէիր քան սուսն. ամեն կողմ հրացան, տարձանակ, կացին, գանակ, գաշոյն: Ամեն ինչ դժպճի երեւցաւ ինձ, և լաւ կը տեսնէի թէ ևս ևս գժպճի կը թուէի: Իմ ուղեկից, ընդ հակառակն. որպէս թէ այն ընտանիքէն էր, կը խնդար, կը խօսէր իրենց հետ, և անխոհեմութեամբ մի, զոր պարտ էի ևս նախատեսած լինել, (բայց ի՞նչ օգուտ, եթէ գրեալ էր . . .) ըսաւ նախ թէ ուստի կուգայինք, ուր կերթայինք, ս՛վ էինք: Ֆոսնսացի՛, երևակայեցէք անգամ մի, մեր սխերիմ թշնամեայ մէջ, մինակ, մոլորեալ, հեռի յամենայն մարդկային օգնութենէ, և ապա, ոչ ինչ պակաս թողլու համար զմեզ կորուսանելու պարագաներէն, ինք զինք հարուստ ձեւ-

ցուց · խոստացու այս մարդոց տալ առաւօտուն լիւրի
 Հասուցում ծախուց և առաջնորդաց Համար : վերջապէս
 իւր պայուսակին վերայ ևս խօսեցաւ, շատ աղաչելով որ
 լաւ հոգ տանին անոր, և իւր անկողնոյն վերեւ զետեղեն,
 ուրիշ բարձի պէտք չունէր, կ'ըսէր : Ա՛, երխասար-
 գ ու թի՛ւն, երխասարգ ու թի՛ւն, ի՛նչ արգահասակի Հա-
 սակ : Հօրեղբորդի՛, կարծեցին թէ պայուսակն գոհա-
 բով լեցուն էր : Ի՛նչ կար սակայն մէջն իրեն այնքան հոգ
 պատճառելու, — նշանածին նամակներն :

Յաւարտ ընթրեացն զմեզ մինակ թողուցին · մեր
 ասպնջականք վարն կը պատկէին, մեք՝ վերնատունն, ուր
 ընթրած էինք : Ընկերս, զլուխն ի վերայ պատուական
 պայուսակին, ի քուն մտաւ խակոյն : Ես որոշած էի հըս-
 կել, կրակ շինեցի, և նստայ աօրնթեր : Գիշերն գրեթէ
 անցած էր հանգարտութեամբ, և կը թուէր ինձ թէ տի-
 ւրն հեռի շէր, յորժամ տեսայ վարն մեր ասպնջականն
 ու իւր կին որ կը խօսէին ու կը վիճէին · և ականջ դը-
 նելով ծիւնելոյզէն որ վարինին հետ կը հաղորդակցէր, ո-
 բոշ կերպիւ լսեցի էրկանն սա խօսքերն · « Ի՛նչ կ'ըսես »,
 վերջապէս, պէ՛տք է երկուքն ալ մորթել : Արում կինն
 պատասխանեց · « Այո » և ալ բան չլսեցի :

Ի՛նչպէս պատմեմ : Հազիւ թէ կը շնչէի, բոլոր մար-
 մինս պաղեցաւ մարմարի պէս · եթէ զիս տեսնէիր,
 չպիտի գիտնայիր թէ կենդանի՞ էի կամ մեռեալ : Աս-
 տուած իմ, երբ կը մտածեմ զայն տակաւին . . . : Անք
 երկուք, գրեթէ առանց գինու, բնդ գէմ նոցա տաաներ-
 կու կամ տաանու հինգին, սրք այնքան զէք ունէին · և
 իմ ուղեկից քնոյ մէջ բնկողմած : Կանշել զինքն, աղաղակ
 բառնալ, շէի համարձակիր, խոյս տալ մէն միայնակ,
 շէի կրնար · պատուհանն շատ բարձր շէր, բայց վարն
 երկու ահագին շուն կը մրմնային զերդ գայլ . . . : Ի՛նչ

անձուկ վիճակի մէջ էի, երևակայէ եթէ կրնաս: Քառորդ ժամ յետոյ՝ որ երկար եղաւ, ստնածայն մի լսեցի սանդղոյն վերայ, և դրան ճեղքերուն մէջտեղէն նշմարեցի հայրն, մէկ ձեռքին մէջ ճրագ, ի միւսումն՝ մեծ դանակ մի: Ինքն կ'ելնէր, կրնն ալ գհեա իւր, ես ալ դրանն ետեւ: Բացաւ դուռն, բայց չմաննէէ առաջ, վար դրաւ ճրագն, զոր կրնն եկաւ առնուլ: յետոյ այրն մտաւ բոկոտն, և կրնն, դրսէն կ'ըսէր ցած ձայն, ձեռքովն պահպանելով ճրագին շափագանց լոյսն. «Յուշիկ, յուշիկ գնա»: Երբ մօտեցաւ անկողնոյն, ուր խեղճ երիտասարդն կը թուէր իւր բաց որկորն ընծայել, մէկ ձեռքով բռնեց դանակն, և միւս ձեռքով... ա՛հ, մօրեղբորդի՛ ... բռնեց կախուած ապուխտներէն մին, կտրեց կտոր մի, և քաշուեցաւ գնաց յուշիկ, դուռն փակեցաւ, ճրագն գնաց, և ես մնացի միայնակ իմ մտածութեանց:

Երբ ախ եղաւ, բոլոր ընտանիքն մեծ ազմկաւ եկաւ մեզ զարթուցանել, որպէս իրիկու ընէ յանձնարարած էինք: Նախաճաշ բերին, յոյժ պատուական: Երկու հոս կային պատրաստուած որոց մին, կ'ըսէր մեր աստղջական, պարտ էինք ուտել, և զմիւսն իմխօսին առնուլ պաշար: Երբ զայնս տեսայ, իսկոյն հասկցայ թէ ինչ կը նշանակէր այն սոսկալի խօսքն. «Պէ՛տք է երկուքն ալ մ'ուրթել»: և զքեզ բաւական ուշիմ կը կարծեմ, մօրեղբորդի, գուշակելու այժմ թէ ինչ կը նշանակէր այն:

Մօրեղբորդ ուհիգ իմ, շնորհք ըրէ, մի՛ երբէք պատմեր այս պատմութիւնն: Նախ որ, ինչպէս կը տեսնես, յայնմ լաւ դեր շեմ կատարեր ես, և ապա, բոլորովին կ'աւրես զայն: Նայէ, բնաւ կեղծաւորութիւն չէ ըրածս, քո դէմքդ է որ այս պատմութեան ազդեցութեանն բոլորովին կը վնասէ: Ես, առանց անձնագովու-

թեան, ունիմ այսպիսի սոսկալի բաներ պատմելու յարմար կերպարան: Բայց դու, կուզե՞ս պատմուի թիւն ընել, այնպիսի նիւթեր ընարէ որ դէմքիդ պատշաճին, Պրսիքէ(1), օրինակի համար:

ՓՈՒ ԼՈՒԻ ՔՈՒՌԻԷ:

ԿՈՅՐ ՊԱՏԱՆԻՈՅՆ ՎԻՇՏՆ

Կ'բսն թէ քաղցր է տեսնել առաւօտն երբ կը ծագի, այն շառագոյն պայծառութիւնն որով արեւէք կը փայլին վառ ի վառ, արեգական նախարձակ ճառագոյթներն որք կ'սկեզօծեն լեռանց գագաթներն և տաճարաց գմբէթքն, ու ցօղն որ մարգագետնին խտերուն վերայ կը շողայ մարգարտասիւզ. — բայց զայսոսիկ շտեմնելու չէ՛ որ կը վշտացնէ զիս ա՛յնքան:

Կ'բսն թէ գեղեցիկ է բնութիւնը գարնան մէջ, և թէ զմայլելի է տեսնել վարդն որ կը բացուի իւր ծղօտին վերայ, տեսնել ծառերն տերեւագարդ պճնուած, գալարագեղ դաշան որոյ վերայ բազմագունեան ծաղիկք սփռուած են իրրեւ: Կանաչ պատմուճան մը զարդարող գոհարներ, ու գոյնզգոյն թիթեռնիկներն որք՝ թեաւ որ եղբարք ծաղկանց՝ կը թռչին օդոյ մէջ կամ հանգիստ կ'անուան իւրեանց անթե հարազատաց գրկին մէջ. — բայց զայսոսիկ շտեմնելու չէ՛ որ կը վշտացնէ զիս ա՛յնքան:

Կ'բսն թէ սիրալի է տեսարան ծովուն: — Թէ թէ՛ երբ ջրանցք մ'է նա հանգոյն վաստորին ու իւր ալեաց բիւրեղին մէջ կը ցոլացնէ իւր եղերաց վերայ շար ի շար ապարաններն ու բուրաստաններն, և թէ՛ երբ բնագարձակ է նման Մարմարային ու կը տարածուի անասճման և կ'երթայ հեռուն գրկախառնիլ երկնից հետ. թէ՛

(1) Պսիքէ, ի դիցարանութեան, անունն է հրաշագեղ երիտասարդ ուհւոյ որուն հետ ամուսնացաւ Սէրն:

ցերեկ ատեն ուր արեւուն ճառագայթից տակ կը փալ-
փըլի լուսափայլ իբր հալած սակի, և թէ գիշեր ժամա-
մանակ ուր իւր մեղմածուփ ծոցոյն մէջ կը նիրհէ շողն
սատեղց ու լուսնեկին. թէ՛ իւր հանդարտութեան մէջ՝
երբ նման է միապողպող հայելոյ, և թէ՛ երբ մրրկայոյց
կը խռովի, կը մռնչէ զայրագին ու կոհակք լեռնակու-
տակ կը փրփրին իբրև երկայնաբաշ ամեհի երկվարներ,
և ծովեզեր սպառաժներուն վերայ կը յարձակին մրմը-
ռագին. — բայց զայստօրիկ շտեմնելու չէ՛ որ կը վշտացնէ
գիւ անքան:

Կ'ըսեն թէ յափշտակիչ է տեսիլ երկնից, կը վե-
րացնէ զմարդ և վսեմ խորհրդոց մէջ կ'ընկղմէ մարդ-
կային միտքն. — թէ երբ արեւն՝ իբրև արքայ մը փա-
ռաշուք իւր պետութեան մէջ՝ կը պտտի անդ լուսահեղ
ճառագայթարձակ, թէ՛ երբ կը մթաղնի ամպոց քողի
մը ներքև զոր փայլատակունք և շանթք կը պատառն
ահաւոր կերպիւ, և թէ՛ երբ յետ արեգական ի մայրն
մտանելոյ, աստեղք կը փթթին անդ իբրև երկնային ծա-
ղիկներ, կամ կը կախուին անախ իբր մէկ մէկ կանթեղ-
ներ, և կամ իբրև նաժիշտներն լուսնին կը փութան
չուք դնել գիշերաց թագուհւոյն որ, այն սրահուն արե-
ւելքէն ելնելով, կուգայ նազելափայլ ճեմել եթերի գաշ-
տաց մէջ՝ ամպերու բարակ շղարշ մը ձգած ճակարին եւ
աշերէն արձակելով մեղմիկ նշոյլն. — բայց զայստօրիկ չը
տեսնելու չէ՛ որ կը վշտացնէ գիւ անքան:

Ինչ որ առաւել քան զամենայն վիշտ կուտայ սր-
տիս և կը զգացնէ ինձ կոյր ծնած լինելու գժրազգու-
թեանս մեծութիւնն, այն ո՛չ առաւօտն, ո՛չ գարունն,
ո՛չ ծովն և ո՛չ երկինքն գիտելու հաճոյքէն զբիւսմս է,
այլ այն է գի, ա՛հ, շեմ կարող տեսնել անոյշ մօրկանս
երեսը . . .

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Թէ՛ ինչպէ՛ս պարտ է առողանել վերի Հասուածն ։

Այս Հասուածի նկարագիրն է տխրութիւն , հետե-
ապէս ձայնն պիտի լինի տխուր ։ Պարտ է նաև Հաս-
ուածին զրագիտական ճարտարագետութիւնն ուսումնա-
սիրել արտասանելէ առաջ ։ Առաւօտն նկարագրելէ յե-
տոյ՝ կ'անցնի զարնան ընդ արձակ տեսարանին , ապա ծո-
վուն աւելի վսեմ տեսարանին , և վերջապէս երկնից վե-
հազոյն տեսարանին . քաղաքի սովորական երևոյթէն
կանցնի դաշտի բնական տեսլեան և թիթեռնիկներու
թռչանելէն՝ ի մոնչիւն պիտայ և կոհակայ , և վերջա-
պէ՛ս կը ճախրէ ի բարձունս երկնից ։ Ուրեմն ձայնի
զօրութիւնն , առտիճանն , սգեւորութիւնն պիտի տա-
կաւ բարձրանան նիւթին հետ ։ Այս ընդհանուր վերել-
քըն արգելք պիտի շլինի սակայն հակազրութիւններն
կատարելապէս ցուցնելու , «միապագայ Հայելոյ» կամ
«Հանդարտութեան» հակազրութիւնն , օրինակի համար ,
«մրրկայոյզ» խոսովման հետ ։ Պէտք է նաև տխրութեան
առտիճանն անեցունել ամէն անգամ որ կ'ըսէ՝ բայց զայ-
սոսիկ Հանանելու շէ՛ որ կը վշտացնէ զիս այնքան . . . և
երբ կ'աւարտէ խօսքն ըսելով . . . ա՛հ , շեմ կարող
տեսնել անոյշ մօրկանս երեսը . . . պէտք է որ ունկնդ-
րաց զժուար լինի զսպել իրենց արատաւք ։

ԲՐՈՒՏՈՍԻ ՎՐԱՆԻՆ ՄԷՁ

ՔԱՍԻՈՍ .— Ինձ անիրաւեցիր դու դատապարտելով
զլուսիսս Բէլլա իբրև կաշառակուրծ , առանց կարևո-
րութիւն տալու իմ նամակաց որովք կը պաշտպանէի ըզ-
նա , ըստ որում կը ճանաչէի զինքն ։

ԲՐՈՒՏՈՍՅ .— Այլ պիտի դէպքի մի մէջ գրելով՝ անձի-
նըդ անիրաւած եզար ։

ՔԱՍ .— Ամէն մանր յանցանքի մեկնութիւն տալու

Ժամանակն չէ այժմ :

ԲՐ. — Պարտիմ ըսել քեզ, Քասիոս, թէ դու ինքնին դատապարտուած լինելով՝ պատճառ չունիս այդ քան զիւրազգայ լինելու :

ՔԱՍ. — Ե՞մ արդարեւ ես զիւրազգայ : Գիտե՞ս թէ դու, որ կ'ըսես զայդ, ես նոյն ինքն Բրուտոս եթէ ոչ, այդ պիտի լինէր քո վերջին խօսք :

ԲՐ. — Այս կաշառակերութիւն պատուեալ է անուամբ Քասեայ, անո՛ր համար պատուհասն անհամարձակ կը մնայ :

ՔԱՍ. — Պատուհասն :

ԲՐ. — Յուշ լիցի քեզ Մարտն : Յուշ լիցի քեզ Մեծին կեսարու բողոքն յերեսաց արդարութեան : Կրնամք այժմ աղտոտել մեր մատունքն դաշնելով զձու՞ծ կրժօնի : Կը նախընտրեմ ես լինիլ շուն և հաշել լուսնոյն քան այդ պիտի Հռովմայեցի :

ՔԱՍ. — Բրուտոս, մի՛ ինձ հաշեր. շարտի հանդուրժեմ այդմ. դու զքեզ կը մոռանաս յարկանելի. զիս յանձուկ. ես զինուոր եմ, է՛ս, և առաւել հնացեալ, և պայմաններ առաջարկելու առաւել կարող քան զքեզ :

ԲՐ. — Օ՛, ո՛չ, Քասիոս, ո՛չ :

ՔԱՍ. — Մի՛ ստիպեր զիս այլ ևս, կրնամ մոռնալ ես զիս, մտածէ առողջութիւնդ. մի՛ փորձեր զիս աւելի :

ԲՐ. — Կորի՛ր, ա՛յր ապիկար :

ՔԱՍ. — Հնա՛ր է :

ԲՐ. — Լուր ինձ. կամիմ խօսել : Կրնամ սեղի տալ խօս բարկութենէդ. կրնամ զարհուրիլ յահնարկէդ յիմարական :

ՔԱՍ. — Ո՛ր դիք, ո՛ր դիք, պարտ իցէ ինձ տանել տակալ այս ամենուն :

ԲՐ — Այս ամենուն՞, այո՞, և աւելիին ևս: Յասիր մինչև որ պատուի սիրտդ հպարտ: Գնա՛ ցո՛յց քո գերեաց զսասակութիւն ցասմանդ, և զանո՛նք սարսափեցուր:

ՔԱՍ — Այդպէ՞ս:

ԲՐ — Կ'ըսես թէ դու լուսազոյն գինուոր մ'ես, տուր ապացոյցն: Տշմարակ՛ պարծանքդ, զո՛հ պիտի լինիմ ևս ազնիւ մարդէ մի դաս առնելով:

ՔԱՍ — Դու կ'անիրաւես ինձ: դու յամենայնի կ'անիրաւես ինձ: Հնազոյն գինուոր մ'ըսի, ոչ թէ լուսազոյն:

ԲՐ — Եթէ ըսիր, փոյթ չէ ինձ:

ՔԱՍ — Մինչ կենդանի էր կեսար, շէր իշխեր նա շարժել գիտ այսպէս:

ԲՐ — Լռէ՛, լռէ՛, դու շէր իշխեր փորձել զնա այսպէս:

ՔԱՍ — Չէի իշխեր:

ԲՐ — Ո՞՞:

ՔԱՍ — Ի՞նչ, չէ՞ի իշխեր զնա փորձել:

ԲՐ — Արեո՛ւդ համար, շէր իշխեր:

ՔԱՍ — Մի՛ այդքան վատահիր սիրոյս, դուցէ բնեմ զայն որոյ համար պիտի ցաւիմ:

ԲՐ — Ըրած ևս զայն որոյ համար պարտէիր ցաւիլ: Քս սպառնալիք չեն ինձ ահաւոր, Քասիոս, քանզի ևս այնպէս սպառազինեալ եմ պարկեշտութեամբ որ նաքա կ'անցնին քովէս զերթ սին հովիկն զոր առ ոչինչ կը համարիմ: Խնդրեցի քենէ դու մար մի սակոյ զոր զլացար ինձ — դի ևս չեմ կարող դրամ հայթայթել անարդ միջոցօք: օ՛ն և օ՛ն, աւելի կ'ընտրէի զսիրտ իմ հասանել սակի և թափել արիւնս իրբն դրամ քան զխղացոյ կոչաացած ձեռքէն խլել նոցա գծուծ ապրուստ: Խնդրեցէ քենէ սակի առ ի վճարել իմ լէզէոնից, և դու զլացար ինձ: Է՛ր այդ վայելուչ Քասեայ: Ա՛յնպէս պիտի

գարուէի ևս Քասեայ հետ: Յորժամ Բրուտոս մինչև այն սասիճան ազահանայ, պատրաստ եղէք, ո՛ր սասուածք, բոլոր ձեր ցասմամբ պատասեւլ զայն յօշ յօշ:

ՔԱՍ. — Չզլացայ քեզ:

ԲՐ. — Չլացար:

ՔԱՍ. — Չզլացայ. — Նա որ բերաս քեզ իմ պատասխան, յիմար էր: Բրուտոս խոցեց իմ սիրտ. բարեկամն պարտի հանդուրժել տկարութեանց բարեկամին. սակայն Բրուտոս կը դործէ զիման մեծագոյն քան զոր ենն իրօք:

ԲՐ. — Չեմ գործեր զայնս մեծագոյն ցորչափ ինծի շեռ ցուցներ զայնս:

ՔԱՍ. — Դու շեռ սիրեր զիս:

ԲՐ. — Չեմ սիրեր քս թերութիւններ:

ՔԱՍ. — Բարեկամի աշքն շպիտի երբէք տեսներ այսպիսի թերութիւններ:

ԲՐ. Շողոքորթի աշքն շպիտի տեսներ, թէև թերութիւնքն լինէին Ողիմպեայ շափ ահագին:

ՔԱՍ. — Եկէ՛ք, Անտոնիո՛ս, և երիտասարդ Ոքթալիոս, եկէ՛ք, լուծեցէք զձեր վրէժ միայն Քասեայ վերայ՝ յափրացելոյ յաշխարհէս, Քասեայ՝ զոր կ'ատէ իւր սիրելին և որում կը գոռայ իւր եղբայր: Ահաւանիկ իմ սակր և ահաւասիկ իմ կուրծք. ի ներքոյ, սիրա թանկ քան զԲլութեայ հանքն, ճոխ քան զոսկի. եթէ դու չբոսովմայեցի ևս, խլէ հանէ զայն արտաքս. ևս որ զլացայ քեզ զոսկի, տամ պիտի զիմ սիրտ. զա՛րկ, որպէս զարկիր Կեսարու, քանդի, գիտեմ, ի պահուն յորում զնա զառնագոյն սանցիր, սիրեցիր զնա որպէս ոչ երբէք սիրած ևս զՔասիոս:

ԲՐ. — Վաղբոյ զիր ի պատեան: Ըրէ ինչ որ կամիս: Ո՛ր Քասիոս, դու լծեալ ևս բնդ գառին որ կը կրէ

ցառումն ինչպէս դայախազն զկրակ. երբ սաստիկ ճընչուի, կայծ մի կ'արձակէ, և նայն հետայն կը պազի:

ՇԷՅՔՍՓԻՐ

ՓՈԹՈՐԻԿՆ ԵՒ ՕՉԻՑ ՔԱՐԱՅՐՆ
Ի ԲԵՐՈՒ

Ասրին մրմունջ մի նշան կուտայ պատերազմին զոր հոգմունք ընդ հույ պիտի յայտարարեն միմեանց: Եւ ահա յանկարծուտ կը լսուինոցա կատաղութիւն սոսկալի սուլմամբք: Թանձր աժպեր կը մթազնեն զերկին և կ'ընդխտանեն զայն երկրին. շանթն, պատուելով այս խաւարչաին քող, կը կրկնապատկէ անոր սեւութիւն. բիրտ սրտամունք, որք կը թաւալին և կը թուին սաստաեւ լեւրանց շղթայի մի վերայ, իրարու յաճորդելով կը յորինեն մի միայն և անընդհատ մունչիւն, որ եւ և էջ կ'ընէ հանդոյն զոչման կոհակաց: Արտամանց և հոգմոց ցրնցումներով կը սարսի լեառն, կը բացուի և ի կողիցն հեղեղք կը ճայթքեն ահագին սղմկաւ: Ահարեկեալ կենդանիք կը սլանան յանտառաց ի դաշան, և ի լոյս կայծականց, երեք ուղեւորքն գժգունեալ՝ կը տեսնէին իրենց քովէն փախչող զնացող ախիւծներ, վագրեր, քաւթարներ և բնձաախիւծներ ճիւղ իրենց պէս դողահար. բնութեան այս ախեղերական վտանգին մէջ՝ ոչ ևս է վայրագութիւն, երկիւղն ի համբոյր աճած է զամենայն:

Յեա շարաշար մրցմանց ընդդէմ հեղեղներուն և խաւարին՝ Մողինա կը հասնի վերջապէս սեպացեալ ժայռի մի ստորտան, և ի նոյլ փայլատականց կը տեսնէ քարայր ինչ որոյ խորին և խաւարամած արհաւիրքն սառեցունէր պիտի զինքն այլ ու և իցէ ժամանակ: Առշտանգեալ և ուժասպառ ի խոնջանացն՝ կը նետուի ի խորսայրին. և անդ, փառք տալով երկնից, կ'իյնայ զերդ զիակ:

Յուսկ ուրեմն փոթորիկն կը խաղաղի . որոտմունք ,
 հողմունք կը դադարին զլեառն սարսելէ , հեղեղաց ջուրք՝
 նուազ արագասա՛հ՝ ոչ ես կը մոնչեն շուրջանակի , եւ
 Մուխնա կը դգայ քնոյ հեշտալի հասումն յերակս իւր :
 Սակայն շրշիւն ինչ ե՛ս ստակալի քան զփոթորկացն կը
 հասնի նմա ճիշդ ի պահուն յորում կը մտանէր ի նիրհ :

Այս շրշիւն գայլախազներու շփումէն ելած ձայ-
 նին նման , կուգայ օձերու բազմութենէ մի որոց ապաս-
 տանարան է քարայրն : Կամարն ծածկուած է աննոց-
 մով . իրարու ընդխառնեալ , կը յարուցանեն այս սոսա-
 լիւն իրենց շարժմամբք : Գիտէ թէ այս օձից թոյնն է
 ահաւորագոյնն քան զամենայն : Կը շականջէ , կը կարծէ
 տեսնել զնոսա ի սող իւր շորս կողմ , կամ ի կախ իւր գլ-
 խուն վերն , կամ ի գալարման ընդ միմեանս եւ պատրաստ
 իւր վերայ նետուելու : Իւր արութիւն առկայծեալ կը շի-
 ջանի . արիւնն կը սառի յահէն , հազիւ կը համարձակի
 շնջել : Եթէ ուղէ յուշիկ քաշուիլ երթալ քարայրէն , կը
 ստակայ իւր ստից կամ ձեռաց ներքեւ ճնշելու այս վտան-
 գաւոր սողնոց մին : Զարհուրանաց մէջ , հազար մահէ
 շրջապատեալ , կ'անցունէ գիշերն :

Ի ծագել լուսոյն՝ իւր ստակում կ'արդարանայ : Կը
 տեսնէ զվտանգն իւր բոլոր ահաւորութեամբ : Պէտք
 էր մեռնիլ կամ խոյս տալ : Վերայ կը ժողվէ փոքր ինչ
 ոյժն զոր ունէր դեռ , յամբապէս վեր կ'ելնէ , կը կքի , եւ
 գձեռսն յեց ի ծունկսն զողորմուն , զուրս կուգայ քա-
 րայրէն՝ այնպէս խորտակեալ , ա՛յնպէս դժգունեալ որ-
 պէս դերեզմանէն զուրս եկող գիտիկ մի : Փոթորիկն իսկ
 որ գիւնքն ձգած էր այն վտանգին մէջ , փրկեց եւ անկէ .
 վտանգի օձերն այնքան սարսափահար էին որքան ինքն :
 Եւ այն է բնագոյմն ամենայն կենդանեաց . երբ եւ վտան-
 գըն տիրէ նոցա , կը դադարին վնաս ընելէ :

ՄԱՐՄՈՆԴԷԼ

ՅԱՌԱՋԱԴԷՄՆ ԳՈՒՐԳԷՆ

ԳՐԻԳՈՐ ՊԷԿ. — Այս՛, Պարսն Ռշտունի, իմ ջերմ
 իղձ է որ որդիս շարունակէ իւր ուսմունք մինչև որ եփի :

ՊԱՐՈՆ ՌՇՏՈՒՆԻ. — Ուրախ եղէք, էֆէնաի, իդ-
 ձերնիդ պիտի պսակուի. Պ. Գուրգէն մեծ յառաջադի-
 մութիւն կը ցուցունէ :

ԳՐ. Պ. — Յուսամ թէ որդիս պիտի շխնայ այն
 վտանգին մէջ որ յաճախուցէս է հարուստ ծնողաց զա-
 ւակներուն : Ձեր վարժարանի ձրիավարժ գիշերօթիկնե-
 րէն կը ճանաչեմ զԲարիկ, զոր պարագուրդի ատեն Գուր
 գէն բերած էր ատն. սքանչելի ազայ մ'է. նորս մէկ
 մատին մէջ աւելի տաղանդ կայ քան իր ուսուցչաց ո-
 մանց ամբողջ մարմնոյն մէջ :

Պ. Ռ. — Վստահ եղէք, Գրիգոր պէյ, թէ որդի-
 նիդ ամենէն յառաջադէմն է մեր վարժարանին մէջ. եւ
 պիտի անմահացնէ ձեր անունն ինչպէս շանթն կ'անմա-
 հացնէ այն ամպին անունն որմէ կ'արձակուի :

ԳՐ. Պ. — Ի՞նչ գեղեցիկ նմանութիւն : Տղուս ալ
 յուսամ կը սորվեցունէք այսպիսի զմայլելի նմանութիւն-
 ներ : Ի՞նչ ուսման մասնաւոր սէր ունի Գուրգէն :

Պ. Ռ. — Շատ կը սիրէ բնական գիտութիւններն,
 եւ, ինչպէս գիտէք, գրարարի ալ մոլի է :

ԳՐ. Պ. — Այդ ցաւալի շէ : Ճաւալին այն է որ ե-
 թէ մեր վարժապետաց ոմանց ընթացքին հետեին ամե-
 նրն ալ, 10-20 տարիէն Ազգին մէջ այնքան հազուագիւս
 պիտի լինին գրարարի հմուտ ուսուցիտականեր ինչպէս
 եղջերաւ որ մարդիկ :

Պ. Ռ. — Մեր հին կամ մեռելի հայերէնին վրայ
 անեցած սէրերնիդ արդէն ծանօթ է :

ԳՔ. Պ. — Պարսն Ռչաունի, կը տեսնէք մասենա-
դարանս, և շէք կրնար բսել թէ անդ և արագական լե-
զուօք բնաիր մասեաններու պակասութիւն կայ. և սա-
կայն յաճախ կ'ընթեանում ևս մեր սակեղինիկ լեզուի
հին և նոր հրաշակերաներն, և, այս հասակիս մէջ, իբրև
թէ գպրացական պատանի, ամօթ չեմ համարիր հաստած-
ներ արատանել բերնուց: Զբօսցունեմ գձեղ վայրիկ մի:

Բայց ոչ չունչ առաօտին մինչ գեւ ծագեալ ելանիցէ
Ուրախարար նրազօք առաօտեայ հասուց չպարուն,
Ոչ արև ի սրփուելն ի փափկութեան դարաստանիս,
Ոչ գալարիք, ոչ պրատիչք և ոչ ծաղիկքն ցգափայլք,
Ոչ բարումն յեա անձրեաց, ոչ շնորհաչափ հանդարտ
Երեկ,

Ոչ գիշեր լրոսակը հոշակաւ որ ի բով թոճնափն,

Ոչ հեմելիք ի լուսնակի կամ ի գողղօջ փայլս ստեղծաց,
Չունին ամենեկն ինչ քաղցրութիւն . . . առանց քս:

Եթէ շէք ձանձրանար, բսեմ այլ հաստած ուրիշ
մասենէ, բայց միևնոյն գրչէն. —

«Երկնից շանթք ի գագաթունս գիմեն լերանց
բարձրագունից,

Ամենայն գոգք և որոտք ամպրոպիդ այդ՝ գիմ գլուխ
խնդրեն,

Աւասիկ ձեր առաջի անգէն կառափն այս մեղապարտ:
Այլ թէ ոչ դուք վայրապար տանիք գուք գլուխ ի յու-

սրս ձեր,

Եւ ոչ ընդ վայր արկանէք յերեսս երկրի զբառուեր-
սրդ մեծ,

Միտ գիք և խելամուտ բարբառելոյ լեզուիս լերուք:

Թէ իցէ՞ միում մարմնոյ լիցին երբէք կրկին սգիք,

կամ միոյ նաւի երկու թէ լինիցին գոյզ նաւապեսք,

Ո՛չ գացէ նաւահանգիստս, այլ կամ ի խոթիս բեկանի,

Կամ ալեաց եղիցի կուր, և կամ ի տար զանդաշեալ
կոյս :

Ի նշտէս կը հնչէ յունկն ձեր այս լեզու :

Պ. Ռ. — Շիտակը ես գրաբար գիրք կարդալու ոչ
ժամանակ ունիմ և ոչ պէտք : Թող մեռեալք թաղեն ի-
րենց մեռելներն : Թող ստտեղարաշխք ուղածնուն շափ
ուսու մնասիրեն մեռած լուսինն, և լեզուարանք՝ մեռած
լեզուներ : Ես ապրող երկրագնդին վրայ կը շնչեմ, և
գործս ալ կենդանեաց հետ է : Գուրգէն ձեր բաղձանաց
համաձայն որն 25 ժամ պիտի գրադէր գրաբար կարդա-
լու և գրելու, եթէ հնար ըլլար իմ մասին ևս կը ցաւիմ,
վասն զի ինքն տաղանդաւոր տղայ մ'է, բայց գերեզման-
ներն մտնող ելլող մարդու մը պէս կը հոտին իր ա-
մենէն շնորհալի գրուածներն : Կուզէք տեսնել իր վեր-
ջին գործն, որպէս թէ աշխարհարար գրուած, որուն վը-
րայ դասատուք և աշակերտք այնքան սքանչացան երէկ
չէ անջի որ :

ԳՐ. Պ. — Կը բաղձամ տեսնել զայն :

Պ. Ռ. — Ահա տալի :

ԳՐ. Պ. — Շնորհակալ եմ :

ՈՒՅՏ

Գնացի ի դաշտ ևս միայնակ, որպէս յաճախ սովոր եմ,
Դիտել բնութեան զըսքանչեւիս, լսել նորին դաս վսեմ :
Ունկըն գրի, շուրջ հայեցայ, տեսի լուսին թաղուհին,
Կամարն երկնից, դաստեղաց բոյլս, և արբեցաւ հողի իմ,
Խորհք և իղձք իմ հըրաշխք իմն բարձրացան վեր ի նորայ :
Ցոյց ինձ շաւիղ, է՛ր Գերագոյն, զճշմարտին և բարուայ,
Դո՛ւ, զՍորայ կամս լսին բարբառք համազոյցից քարոզեն,
Բաց բզմիտս իմ, աուր ինձ լըսել միայ միայ ձայն սասէն, —
Այսպէս սրտիս ի խորայ ևս հառաշեցի առ Որէն :

Եւ խօսեցաւ ինձ լուսին. —

«Գիտցիր, որդեակ, յօգուտ այլոց, յօգուտ գործոցն,
 Ի հարկին
 Ըզդէս միայն քո ցուցընել, կամ գթասորդ, լսի ճրկոյթ՝
 Գիտցիր նաև յօժարամիտ մինչև անգամ զլխովին
 Աներևոյթ լինել երբեմն եթէ գէտք այնպէս կամին :»
 Թագուհի, շնորհ ունիմ քեզ,
 Եւ խոստանամ որ եւ ես
 ՀԱՄԵՍՍ լինիմ քեզի սէս :
 Եւ խօսեցաւ ինձ Հովիկ . —

«Գիտցիր քայել յուշիկ, մանրիկ, գիտցիր սլանալ զերթ
 փայլակ,
 Շնչել մեղմով, մնչել հեղիկ, գոռալ մոնչել զերթ ա-
 ուրծ .
 Փայփայել առնկ նորափրթիթ, որորել թուփ, գգուել
 վարդ,
 Իսկ քայքայել զամբարտակ խօլ, կաղնին ջախել ըզհը-
 պարս :»

Ո՛ր, Հովիկ շնորհ ունիմ քեզ,
 Առաջագրեմ նաև ես
 ԵՂԱՆԱԿԵԼ քեզի սէս :
 Եւ խօսեցաւ ինձ Վասակ . —

«Բանի՛ գարք են յորմէ հետէ հեզում, հեզում ես անդուլ,
 Մերթ գալարիք ինձ պատասխին, մերթ առապար, մերթ
 գաշա գիր .
 Գնամ ուղղակի կամ խոտորիմ ես ի հարկին՝ անձանձիր,
 Ճեղքեմ ըզժայռ, թաւալեմ վէմ, կրծեմ մարմար
 և բորֆիր :»

Ո՛ր Վասակ, շնորհ ունիմ քեզ
 Եւ ուխտելով ուխտեմ ես
 ՅԱՐԱՏԵԻՆԵԼ քեզի սէս :

Ասկէ բանաստեղծութեան անուշ հոտ կու գայ :
 Գ. Ռ. — Բայց չէ՞ք առներ նաև քիչ մ'առաջ յի-

շած հոսս մեռելական :

ԳՐ. Պ. Այս լեզուէն հոս մեռելական, ո՛չ, Պարոն Ռչաուենի, շեմ աւնուր : Այս քերթուածի լեզուն աշխարհարար կամ գրարար չէ, հայերէն է : Տաճկերէն չէ այն, ինչպէս այն լեզուն զոր դուք ինձ կը խօսիք այժմ, և զոր այլ ոչ սահաւ վարժապետներ կը խօսին, ձեր տեսակէն հայ վարժապետներ որոց այնքան անարբեր է սոսկեղինիկ հայերէնն որքան լուսնոյ լեզուն :

Պ. Ռ. — Ինչպէ՞ս, այս ձեր հե՛տ խօսած լեզուս տաճկերէ՞ն է :

ԳՐ. Պ. — Այո՛, Պարոն, հայերէն բառերով Տաճկերէն : Կը կարծէ՞ք թէ հայերէն կը խօսիք երբ կ'ըսէք «ունեցած սէրերնիդ,» «ուզածնուն շափ,» «որդ ինիդ» կամ երբ կ'ըսէք «ձեր հետ խօսած լեզուս,» կը կարծէ՞ք թէ «ամենայնառաջագէժ» կամ «ամենէն յառաջագէժ» հայերէն է ինչպէ՞ս «ամենակալ» կամ «ամենակուլ» : կարծէ՞ք թէ «յառաջագիմութիւն ց ու ց ու ն եւ» «քննութիւններն անցնելու» հայերէն են կամ գոնէ աշխարհարար են : մի՛, Պարոն, աշխարհարարի երեսկայական իրաւանց ապաւինած, մի՛ խօսիք լեզու մի որ հայերէնի երեւոյթն միայն ունի : դուք որ այնքան սիրահար էք զազգիներէնին, գոնէ անկէ ազդուած հաճեցէք ըսել «ձեր որդի,» «լեզուն որով կը խօսիմ ձեզ,» ինչպէ՞ս այնքան ախորժով պիտի ըսէիք «votre fils» «la langue dans laquelle je vous parle» : զիտցէք սակայն թէ գրարարն աւելի անհրաժեշտ առաջնորդ մ'է հայերէնի քան դուք կը կարծէք : գրարարին նայելով է որ պիտի կրնաք ըզգալ թէ «ըլլալ» ն որպիսի գարշելի ազաւազումն է «լիւնիլ» ի, կամ ի՞նչ սիրա խառնող և լեզու կոտրող ազաւազում՝ «ճանչցայ» Պարոն, կո՛չենք գրարարն մեռեալ լեզու՝ եթէ կուզէք, բայց ընդունինք թէ առանց այդ

մեռելոյ սգին կրելու յանձին՝ ոչ վարժապետան կրնայ ճշմարիտ հասարակ հայերէնն ուսուցանել, ոչ բանաստեղծն կը զօրէ ճախրել իրարձունս վսեմին կամ թեթեաքայլ սարել յերկրի։ Գալով Գուրգէնին, ևս սխալ ներեմ վարժարանին տեսչութեան եթէ նա խակ մնայ և բուսկեան լեզուաց մէջ, բայց շտխալ ներեմ եթէ, հակառակ այնքան բազմանացն, խակ մնայ հայերէնին մէջ։

(Պարոն Ռչասունի մեկնեցաւ վշտացած, և Գրիգոր Պէկ միտանդամ կարդալով Գուրգէնի նոր քերթուածն, բոս, «Փառք Քեզ, Տէր, իմ'ոք Քեզ»։)



Հայոց Պատմութեան քան զամենայն սխրալի երեսներէն մին կը դնեմ այժմ առաջի ընթերցողին, երես՝ զոր առողանելու համար ոչ բարձր ձայն այլ բարձր հոգի պիտոյ է: Անդ խորհրդակցութիւն, խոսովութիւն, պաշարում, դիւանագիտական բանակցութիւն, հաշտութիւն, խրախճանութիւն կուգան հետ զհետէ: Թագաւոր և զօրավար, պաշարող և պաշարեալ, հայր և որդի, այր և հարսն կը խօսին: Յառողանելը զայս գերընտիր հատուած՝ պիտի յայտնես թէ առողանելու արուեստին ո՛րքան տեղեակ ես, և պիտի յայտնես նաև քո բնաւորութիւն. — թէ յոխորտ, ամբարտաւան, վա՛ս ոք ես, կամ ընդհակառակն՝ ազնիւ, վեհանձն և արի ես: Եղանակն որով պիտի առողանես Հայ Թագաւորին, նորա որդւոյն և Կիւրոսի խօսքերն, պիտի մատնէ զքեզ իրբև վատողի կամ ցուցնէ բարձրախոհ: Ունիս նաև առողանել ամուսնական խորին սիրոյ և բուրբական անձնութիւնէն այնպիսի խօսքեր, քան զորս աւելի սրտառուչն և փափուկն շիք գտանել:

Ահաւասիկ հատուածն:

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԿԻՒՐՈՍ

Քաննօրոն յայտնի կը ցուցնէ Հայոց բարեկամական կամ դաշնակցական յարաբերութիւնն ընդ Մարս հետեւեալ պատմութեամբ, որ եթէ ոչ ըստ ձևոյն գէթ ըստ էութեան պատմական է: Կիւրոս, որ սպարապետ կարգեալ էր ի Կիւքսարայ ի պատերազմին ընդդէմ Բարեւրնի, յետ տեղեկանալոյ Մարաց զօրութեան, կը հարցունէ ցԿիւքսար. «Ասէիր թէ թագաւորն Հայոց արհամարհեց զքեզ. և այժմ լսելով զգալ թշնամեաց ի վերայ մեր, ոչ զօրք կուտայ և ոչ ստակ:»

«Այնպէս է,» ասէ Կիւքսար, «ուստի վարանեալ եմ. չեմ գիտեր թէ երթամ Հայոց վրայ ի պատերազմ, թէ լաւ է առ այժմ թողուլ, դուցէ ուրիշ թշնամեաց վրայ յաւելունք նաև զՀայս:» Կիւրոս ասէ. «Հայոց քաղաք-

ներն ամուր տեղեր են թէ ի դիւրի»։ «Ամուր տեղեր չեն», ասէ Կիւրոսը, «ունին սակայն լեռներ յորս կարեն ամրանալ վազվազակի, և դիւրին չէ առնուլ զնոսա բայց եթէ երկար պաշարմամբ որպէս արար Հայր իմ»։ «Եթէ զրկես զիս բաւական հեծելովք», ասէ Կիւրոս, «աստուծոց օգնութեամբ կարեմ առնել այնպէս, զի թէ՛ զօրք տան Հայք թէ ստակ. և յուսամ թէ աւելի բարեկամ լինին մեզ քան զոր էին երբեմն»։ Ուրախ եղաւ Կիւրոսը, և կը յուսար թէ Կիւրոս կարող էր առանց պատերազմի վճարել այս գործը, մանաւանդ զիտէր թէ Կիւրոս ծանօթ էր արքայորդւոյն Հայոց իրրեւ որսակից նմա ի մանկութեան։ Կիւրոս հեծեալ և հետեւակ զօրօք անկաւ յուզի։

Երբ Կիւրոսեանք մօտեցան Հայոց սահմանը, ազդեղն թագաւորին Հայոց թէ Կիւրոս պարտիկ ելած է յորս. և արդարեւ Կիւրոս և որ ընդ նմայն էին՝ կ'որսային կինճ, եղջերու, այծեամ և ցիւռ որ շատ էին այն կողմերը։ Այս միջոցին երէց որդի թագաւորին՝ Տիգրան՝ բացակայ էր, և թագաւորը լսելով Կիւրոսի գալը՝ խռովեցաւ, քանզի ամրոցներ կը շինէր հակառակ դաշանց։ Իսկոյն պատգամաւոր եկաւ թագաւորին թէ Կիւրոս կուգայ զօրօք, և ոչ այլ ինչ կը խնդրէ ի քէն, բայց ըստ նախկին դաշանց տալ զօրս և արծաթ։ Հասկցաւ թագաւորը Կիւրոսի գալստեան նպատակը, և իսկ և իսկ կրտսեր որդին Շաւասպ հանդերձ կանամբք և մանկաւով և գանձուն զրկեց լեռները, և ինք կ'աճապարէր զօրքը կանչել, մինչ գուժկան հասաւ թէ կանայք և մանկտին անկան զերի, քանզի Քրիստոսանտոս զօրսպեա Կիւրոսի գաղտնի ճամբով բռնած էր լեռանց ճամբան։ Վարանեցաւ թագաւորը, եւ խոյս տալով հազիւ կարաց ամրանալ բլուր մի, զոր Կիւրոս վաղ հասնելով պաշարեց, և պատգամ զրկեց թագաւորին. «Ի՞նչ է» ասէ, «միտքդ, մնալով անդ մեռնի՞լ ի սովոյ թէ իջնել և կուրիլ ընդ մեզ ի դիւրի»։ «Միտքըս կուրիլ չէ», ասէ թագաւորն։ «Նորէն եկաւ պատգամաւորը թէ, «Ընդ է՞ր ուրեմն չես իջներ»։ «Կ'իջնեմ», ասէ թագաւորն, «բայց ո՞վ լիցի գատաւոր մեր»։ «Զով որ գիք տան», պատասխանեց Կիւրոս։ Իջաւ թագաւորը

մինչ Կիւրոս կը կենար բակ առեալ ի զօրաց: Այն միջոցին դարձաւ յուզեղնացութենէ երէց որդի թագաւորին Տիգրան որ, որպէս ասացաք, որսակից լեալ էր ժամանակաւ Կիւրոսի, և տեսնելով հայրը մայրը և զկին իւր բըռնուած՝ լացաւ:

«Ի դէպ ժամու հասար,» ասէ ցնա Կիւրոս, «լուր ուրեմն հօրդ դատը:» Կիւրոս կոչեց Պարսից և Մարաց զօրավարներն որ առ իւր էին, և Հայոց մեծամեծներէն զորս մօտ գտնուեցան, նաև կանանոյն թոյլ տուաւ լինել ունկնդիր:

Կիւրոս հարցուց նախ թագաւորին թէ ինչ պատճառաւ դրժեց ուխտին ընդ Մարաց, նաև պատերազմի պատրաստութիւն կը տեսնէր: «Դու խոստացար,» ասէ, «հաւուն իմում Աժդահակայ լինել նմա օգնական նիզակակից զօրօք և արծաթով ի հարկի և ամբուխներ շէնել: Բայց սոցա հակառակը դարձեցիր:» «Այո,» ասէ թագաւորն, «քանզի ազատութեան ցանկացայ, և լու համարիմ ազատութիւն թողուլ որդւոցս:» «Բարեօք է,» ասէ Կիւրոս, «ազատութեան համար կոուիլ բայց աղէ, սոսա, եթէ դաշնակիցներէդ մին դրժէր ուխտին եւ ձեռք իցնար, զինչ ասնէիր նմա:» «Ձճմարիտն ասելով կը հանէի զնա իշխանութենէն,» ասէ թագաւորն, «ինչ որ ունէր կ'առնուի, և եթէ ընդդէմ դառնար՝ կը սպաննէի:» Երբ զայս լսեց Տիգրան, հանեց խոյրը զլիտէն, եւ փողփողեալ վերջաւորները քակեց նեակեց, և կանայք կուլային, կը ճչէին, որպէս թէ կորեաւ թագաւորը, կորեան և ինքեանք: Կիւրոս հրաջմայեց լուել, և գառնայով առ թագաւորն ասէ. «որովհետեւ այս են իրաւունք քո, կը հարցունեմ, ի՞նչպէս արժան է մեզ վարիլ ընդ քեզ:» Թագաւորը լսեց և որդին Տիգրան աճապարելով խօսեցաւ երկար: «Որովհետեւ զարժանն խնդրես,» ասէ «ո՛վ Կիւրէ,» ևս խրատ տամ քեզ ներել հօրս որ արգահաստելի է, զի առ սէր ազատութեան արար. բայց փոխանակ մեծ ևս ազատութեան, գրաւ ինչ որ շէր յուսար. ահա կայ ի ձեռս քո. ուստի եթէ կրկին թողուս նմա զազատութիւն, ո՞չ ապաքէն երկիցս բարեկամ արտոցես զնա քեզ:» Կիւրոս որ խնդայր ի միտս իւր, զի կատարեցաւ

ինչ որ խոստացած էր Կիւքսարայ, կրկին քան զառաջինն բարեկամ առնել զՀայս, ասէ. «Յարուք է, միւսանգամ հաստատենք բարեկամութիւնը, բայց ի՛նչ օգնութիւն պիտի տաք մեզ զօրաց և արծաթոյ:» «Յուցընեմ քեզ,» ասէ թագաւորն, «բոլոր զօրութիւնս և գանձս, և առ՝ որչափ ինչ պատշաճ կը դատես առնուլ:» Կիւրոս ասէ. «Ո՛րչափ զօրք ունիք և որչափ արծաթ:» «Ութ հազար հեծեալ և շորս բիւր հետեալ,» ասէ թագաւորն. «Իսկ արծաթ, հանդերձ այնու զոր եթող հայրըն իմ, աւելի է քան երեք հազար տաղանդ:» Կիւրոս առաջիկայ պատերազմին համար բաւական համարեցաւ կէսն առնուլ, «Քանզի միւս կէսն,» ասէ, «պիտոյ է ձեզ Կորդուաց համար ընդ որս միշտ ի կուռի էք:» Իսկ արծաթոյ հարիւր տաղանդ միայն խնդրեց. հարիւր տաղանդ ևս փոխ վասն իւր հասուցանելոյ պայմանաւ: «Մի այդպէս խօսիր, ս'վ կիրէ,» ասէ թագաւորն, «ապա թէ ոչ շտաս ինձ համարձակութիւն. գլացիր որ բոլորը քո են:» Իսկ որպէս զի կինդ առնուս, ի՛նչ կուտաս,» ասէ Կիւրոս ընդ խաղ: «Որչափ տալ կարող եմ,» ասէ թագաւորն: «Հապա մանկուս'յդ համար,» կրկնեց Կիւրոս: «Գարձեալ որչափ կարող եմ,» ասէ թագաւորն: «Ուրեմն,» ասէ Կիւրոս, «բոլոր ստացուածոցդ կրկինը տալու ես:» Յետոյ զառնալով առ Տիգրան, «Եւ դու,» ասէ «ով Տիգրան, ի՛նչ փրկանք կուտաս կնոջդ համար:» Տիգրան որ նորոգ ամուսնացեալ էր և մեծ գութ ունէր առ կինն, ասէ. «Չանձն իմ զլխովին տամ, եթէ հարկ լիցի, առ աղատել կինս յազախնութենէ:» «Դու, Տիգրան,» ասէ Կիւրոս, «առ կինդ, ևս չեմ համարիր զնա զերի, զի դու մենէ ես. դու ևս, ս'վ թագաւոր, առ կինդ ևս մանկախդ, փրկանք չեմ պահանջեր վասն նոցա:» Կիւրոս հրախրեց զամենեսին յընթրիս, և յետ ընթրեացն ասէ. «Գնացէք իւրաքանչիւր յիւր տեղի:» և մեկնեցան թագաւորը և բոլոր ընտանիքը դեպակագօք: «Մինչ կ'երթային,» ասէ Քսենոփոն, «ոմն կը գովէր Կիւրոսի խնաստութիւնը, այլ ոմն՝ ժուժկալութիւնը, և այլ ոմն՝ հեղութիւնը. ոմանք ևս դեղեցկութիւնը և հասակին վայելչութիւնը: Տիգրան հարցուց կնոջը. «Քեզ ևս զեղե-

ցիկ թուեցա՞ւ կիւրոս:» «Ես չնայեցայ ընդ նա,» ասէ կինն: «Հապա ընդ ո՞նայեցար,» ասէ Տիգրան: «Ընդ այն,» ասէ կինն, «որ ասաց թէ զանձն իմ զլլսովին տամ, եթէ չարկ է, զի մի լինիցի կինս իմ աղախին:»

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Հ Ա Յ Ա Պ Ր Ի Ն Ք

Հայ ապրինք, եղբարք, մարդկութեան մէջը,

Հայ կընքեր է մեզ Պատմութեան էջը.

Հայ անուամբ զմեզ կ'ողջունեն Երկիրնք. —

Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք:

Հա՛յ ապրինք... Մեր Հայրն է այն Դիւցազուն

Որ զԱզատութիւն սովբեցոյց մարդուն

Ու մեզ վեհ Անուն մը տուաւ բաժինք —

Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք:

Մեր աշխարհն է սո՛ւրբ: ... Մեր հողուն վըրան,

Աստուած է քալեր, հանելով զԱղամ

Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ Ինք. —

Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք:

Հայն ու մարդկութիւն՝ նո՛յն ունին օրրան.

Երկիր փրկութեա՛ն է մերս Հայաստան,

Կըրօնից նախկին սեղան է Մասիք. —

Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք:

Ո՞վ կրնայ համբել Սրբոց մեր զանուանք,

Մեր պատմութիւնն է նահատակա՛ց ցանկ.

Մեր եկեղեցին յերկրի է Երկի՛նք. —

Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք:

Քրիստոսի ունինք անգրանիկ օրհնենք,

Հաւատոց եղանք միշտ ախոյեան մե՛նք.

Հայը զարմացոյց զերկիր և զերկինք. —

Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք:

Մեր ազգ հեաեւող է ճիշդ Յիսուսի,
Որ Խաչն ա՛յսչափ դար առած է յուսի .

Ո՛չ, չը՛ խոնարհիր չը՛լլար դասալիք .

Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք :

Մեր քաղցր Հայրենիք, մեր թագ, գաւազան՝
Ամպեր են ծածկեր Արեւի նրման .

Յուսացէ՛ք, արեւ կուտայ մեզ Երկինք . —

Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք :

Ո՛չ, ճակատագիր մեր չէ՛ միշտ տխուր՝
Ըզթչուառութեան ուտել հացն ու ջուր .

Նոր երջանկութեան ապագա՛յ մ՛ունինք

Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք :

Հա՛յ ապրինք, որ մեր որդիք ալ, ե՛ղբարք,
Կարենան պարծիլ որ զմեզ ունին հարք .

Չըլլա՛նք Հայ անուան չըլլանք նախատինք . —

Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք :

Հա՛յ ապրինք . — Օր մը յաղթական մահուն
Պիտի բարձրանայ անմա՛հ Հայութիւն

Ո՛հ, ա՛յն օր մեզի շո՛ւտ ծագէ, Ե՛րկինք

Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք :

ԽՈՐԷՆ ԵՊՍԿՊՍ . ՆԱՐ-ՊԷՅ

Ո Ղ Ջ Ո Յ Ն

Ա Ռ

Ի Բ Գ Մ Ե Ը Ն

Թէ ի հրացան, դրօշ մահարեր
Այլք ողջունեն իւրեանց տէրեր,
Կամ ի գոռիւն թնդանօթաց
Ահեղ ողջոյն տան իշխանաց,
Մեք մեր սրտից ի բարախիւն

Խոնարհ այլ ջերմ տամք քեզ ողջոյն,
 Եւ թէ չունիմք դրօշս արեան՝
 Հեղ ձիթենիք են մեր նշան :

Օ՛ն , Հայրիկին ընդ առաջ
 Երթամք , Հա՛յեր , աջ ի յաջ .
 Հերի՛ք կոհակք անջատեն
 Չափըն որդւոց հօր լաստէն .
 Պատուեմք Վասփորն քաղցր ի ձայն՝
 «Ողջո՛յն քեզ , ո՛ր Խըրիմեան :»

Հրեշտա՛կդ յուսոյ , թըռիւր առ մեզ ,
 Շա՛տ թառեցար , բո՛ւ սրտակէզ ,
 Համբ ի նոճիս աւերակաց . . .
 Թէ բարեկամ ես ամայեաց՝
 Մեր սիրտք ալ են աւեր , թափուր .
 Լից զնոսս հոգւոյդ ի հուր .
 Բոցովդ աչաց սա՛ռն արձարծես ,
 Չանըզդայ սիրտըս իսկ վառե՛ս :

Օ՛ն , Հայրիկին ընդ առաջ
 Դիմեմք , Հա՛յեր , են .

Մեղմ՝ Աստուծոյն հե՛զ փաստարան ,
 Դո՛ւ , խաշակիր խաղաղութեան ,
 Շանթից փոխան մեղքը հոսէ ,
 Չմեզ վերացու յայս թուխ փոսէ .
 Եւ , մութի մէջ , Հայաստանցին
 Թէ կորնչի հեծեծագին՝
 Հասցո՛ւ նըմա ջահ լուսաւոր .
 Չե՞ս դու Լուսոյ ուխտեալ զինուոր :

Օ՛ն , Հայրիկին ընդ առաջ
 Վազեմք , Հայեր են .

Բախդն այս անգամ բանայ զաշեր ,
 Նըսեմ արժէքն հանէ ի վեր .

Եւ թէ թաւչէ տայ քեզ գահոյս՝
 Լօռուտ զաւերս ածէ ի յուշ .
 Եւ գաւազան թէ տայ ոսկի՝
 Դու նոյն հովիւն ես պարզ, արի,
 Որ ջաղխեցիր ի ցուպդ անփուտ
 Գայլըս վայրի, Քուրզըս անդութ :

Օ՛ն, Հայրիկին ընդ առաջ
 Թռչիմք, Հայեր ևն .

Մարդ, որ հըզօր է ի պատժել,
 Զի՛ անզօր է ի վարձատրել .
 Երկու տերև, մինչ արք կեան,
 Մի քար՝ երբ չեն . — ա՛յս իւր վարձան . . .
 Հա՛յրիկ, քո վարձն է վեհագոյն .
 Դէմ սըլաքաց վատ նախանձուն,
 Դէմ գընանակաց կոյր խաւարի՝
 Մեր լանջ ասպար քեզ կանգնեսցի :

Օ՛ն, Հայրիկին ընդ առաջ
 Սըփռեմք մեր իղձ և հառաջ .
 Մեր երակաց գիտէ թի՛նդ,
 Ըզգայ սրտից խոց և խի՛նդ .
 Պատռեմք վոսփորն քաղցր ի ձայն՝
 «Ողջո՛ւն քեզ, ո՛ր խըրիմեան :»

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

Ե Ր Գ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատն Աստուած այն օրից,
 Երբ հաճեցաւ շունչ փչել,
 Իմ հողանիւթ շինուածքին
 Կենդանութիւն պարգևել :

Ես անբարբառ մի մանուկ,
Երկու ձեռքս պարզեցի .
Կը իմ անզօր թեւերով,
Ազատութիւն գրկեցի :

Մինչ գիշերը անհանգիտս,
Օրօրոցում կապկապած .
Լալիս էի անդադար,
Մօրբն քունը խանգարած :

Խնդրում էի նորանից,
Բազուկներս արձակել .
Ես այն օրից ուխտեցի,
Ազատութիւնը սիրել :

Թոթով լեզուիս մինչ կապերը,
Արձակուեցան բացուեցան
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան :

Նախկին խօսքն որ ասացի,
Չէր հայր կամ մայր, կամ այլ ինչ .
Ազատութիւն դուրս թռաւ
Իմ մանկական բերանից :

«Ազատութիւն», ինձ կրկնեց,
Ճակատագիրը վերեւից .
Ազատութեա՛ն դու գինուոր
Կամի՞ս գրուիլ այս օրից :

Ո՛հ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կը սպասէ .
Ազատութիւն սիրողին
Այս աշխարհս խիստ նեղ է :»

— Ազատութիւն, — գոչեցի, —

Թող որոտայ իմ գլխին .
 Փայլակ , կայծակ , հուր , երկաթ ,
 Թող դաւ գնէ թշնամին :

Ես մինչ ի մահ , կախաղան ,
 Մինչեւ անարգ մահու սիւն ,
 Պիտի գոռամ պիտ' կրկնեմ
 Անդադար ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Մ . ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

Ե Ր Գ

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԷԻ

Հիմի՞ էլ լռենք , եղբարք , հիմի՞ էլ ,
 Երբ մեր թշնամին իւր սուրն է դրել .
 Իր օրհասական սուրբ , մեր կրծին ,
 Ականջ չի գնում մեր լաց ու կոծին .
 Ասացէ՛ք , եղբա՛րք Հայե՛ր , ի՞նչ անենք ,
 Հիմի՞ էլ լըռենք

Հիմի՞ էլ լըռենք , երբ մեր թշնամին ,
 Դաւով , հրապուրքով արեց մեր երկրին .
 Ջընջեց աշխարհքից Հայկայ անունը ,
 Հիմքից կործանեց Թորգոմայ տունը .
 Խլեց մեղանից թագ , և խօսք , և գէնք ,
 Հիմի՞ էլ լռենք :

Հիմի՞ էլ լռենք , երբ մեր թշնամին ,
 Խլեց մեր սուրբ — պաշտպան մեր անձին .
 Մշակի ձեռքիցն էլ խօփը խըլեց ,
 Այդ սուր ու խօփից մեր շղթան կռեց .
 Վա՛յ մեզ , շղթայով կապած գերի ենք ,
 Հիմի՞ էլ լռենք :

Հիմի՞ էլ լռենք , երբ մեր թշնամին ,

Սոսկալի զէնքը բռնած մեր գըլխին .
 Կուլ տալ է տալին արտասուք առատ ,
 Ազէխարչ բողոք վարուց ապիրատ .
 Մեր գըլուխ լուալու Եփրատ ուր բնառենք ,
 Հիմի՞ էլ լռենք :

Հիմի՞ էլ լռենք , երբ մեր թշնամին ,
 Լիրբ գոռոզութեամբ լցրած էր հոգին .
 Արդարութեան ձայնն հանած իր սրտից ,
 Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից .
 Պանդո՛ւխտ , հալածեա՛լ , եղբարք , ուր դիմենք ,
 Հիմի՞ էլ լռենք :

Հիմի՞ էլ լռենք , երբ մեր թշնամին ,
 Անգոհ մեր բերած ծանր զոհերին .
 Իւր լիրբ , նզոված ձեռքը կարկառեց ,
 Ազգութեանս վերջին կապը սպտառեց .
 Հայի կորուստը մօտ է , ի՞նչ անենք ,
 Հիմի՞ էլ լռենք :

Հիմի՞ էլ լռենք , երբ մեր թշնամին
 Արհամարհելով մեր փառքն ազգային
 Մեր Եկեղեցուն ձեռնամերձ եղաւ ,
 Գառնազգեստ գայլին մեզ գըլուխ դրաւ .
 Սուրբ խորան չունինք , արդ ո՞ւր աղօթենք ,
 Հիմի՞ էլ լռենք :

Հիմի՞ էլ լռենք , մարդիկ ի՞նչ կ'ասեն ,
 Երբ մեր տեղ քարինք , ապառաժք խօսեն .
 Չե՞ն ասիլ որ Հայք արժանի էին
 Այդ ստրկական անարգ վիճակին .
 Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք ,
 Մինչև ե՞րբ լռենք :

Թո՛ղ լռէ մուկը , անդամալոյծը .

Կամ՝ որոյ քաղցր է թշնամու լուծը .
 Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
 Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ,
 Գոնէ մեր փառքը մաՀով հետ խլենք,

Ու այնպէս լռենք :

Ռ . Տ . Գ . ՊԱՏԿԱՆԵԱՆ

Ե Ր Փ

ՊԵՏԳՈՐԻՔ ՊԵՏԱԵԵՎԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
 Դու գարնան սիրուն թռչնակ,
 Դէպ ի ո՞ւր, ինձ ասա,
 Թռչում ես, այդպէս արագ :

Ա՛խ, թըռիւր, ծիծեռնակ,
 Ծընած տեղս Աշտարակ,
 Անդ շինիր քո բոյնը,
 Հայրենի կըսուրի տակ :

Անդ հեռուն ալեւոր
 Հայր մ'ունիմ սըգաւոր,
 Որ միակ իւր որդուն
 Սպասում է օրէ օր :

Երբ տեսնես դու նորա,
 Ինձնից շատ բարեւ արա,
 Ասա, թող նստի լայ
 Իւր անբաղդ որդու վըրայ :

Դու պատմէ թէ ինչպէս
 Աստ անսէր ու խեղճ եմ ես,
 Միշտ լալով, ողբալով՝
 Կեանքս մաշուել, եղել կէս :

Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը .
Գիշերը թաց աչքիս՝
Քուներ մօտ չէ գալիս :

Ասի՛ր , որ չբացուած
Թառամեցայ մնացած
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զրկած :

Դէ՛հ , սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր , թըռիր արագ
Դէպ Հայոց երկիրը
Ծընած տեղս — Աշտարակ :

ԱՇՏԱՐԱԿԵՑԻՆ

(Գ . Ա . ԴՈՂՈՒՆԵԱՆՑ (°))

Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ

ՁԷՅԹՈՒՆՑԻ ՊԱՏԱՆԻՈՅ

Դու զո՞վ խնդրես , մայր իմ անուշ ,
Ե՛կ , մի՛ դողար , մօտեցիր հոս .
Անլաց աչօք գիտէ զորդիդ ,
Ու իւր վէրքերն արիւնահոս :

Թրքաց մայրեր թող լան ու դուն
Ուրախ լուրեր տար ի Ձէյթուն :

Ինչպէս երբեմն օրրանիս մէջ
Կակուղ ձեռամբ փայփայելով
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր
Իբրեւ հրեշտակ նուագելով :

Ձիս հանգչեցուր ի հող , ու դուն
Ուրախ լուրեր տար ի Ձէյթուն :

«Նորեկ որդւոյս կենաց արեւ
Ձեզի համար փայլի , Հայե՛ր .»

Այսպէս յայնժամ դու երգէիր

Օրօրոցիս նստեալ քովեր :

Անոնց համար շիջաւ և դուն

Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Կարմիր կայլակք ցայտեն վէրքէս ,

Սահայն , մա'յր իմ , նայէ չորս դիս .

Ձարիւնը ուշտ Քիւրտերըն տես

Հազարներով փռուած գետին :

Կերաւ զանոնք սուր մեր , ու դուն

Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Ինչպէս վիշապ մօրն չեղով

Յանկարծ մեր վրայ յարձակեցան .

Յընցեց Զէյթուն գլուխն ժայռոտ ,

Իւր վհից մէջ թօթափեցան :

Կարմիր ներկաւ քորք մեր , ու դուն

Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Ու ծափ զարկին մեր հարց ստուերք ,

Ձի չէ մեռած Հայոցըս կրակ .

Ու ցնծացին այնչափ զոհեր

Ձի լուծաւ վրէժ յարեան վտակ :

Խնդաց Մասիս , մայր իմ , և դուն

Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Վերջին համբոյր տամ քեզ , մայրիկ ,

Հատուցանես զայն սիրուհւոյս .

Վերջին անգամ գրկեմ մեր հող ,

Ոյր արդ կ'իջնեմ ի ծոցն անլոյս :

Խաչ մը տնկէ վրաս ու դո՛ւն

Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Մ . ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Յ Ե Ն Կ

ԵՐԵՍ

Յառաջարան.....	5
Մուտք.....	7
Արտասանութիւն.....	25
Ձայն.....	27
Շնչառութիւն.....	29
Պնդումն.....	34
Ոլորումն.....	37
Ելուն և Իջուն Ոլորումնք ի միասին.....	40
Սահումն.....	42
Ձայնի Աստիճանք.....	43
Ձայնի Զօրութիւնն.....	46
Ձայնի Որակներն.....	49
Արագութիւն կամ Ընթացք.....	52
Հարց պատասխանիք և Շարք.....	55
Ճայն.....	57
Կիկերոնի ատենախօսութիւնն ընդդէմ կատրլինայ.....	60
Թէ որպէս պարտ է առողանել զատենախօսութիւնն Կիկերոնի.....	65
Ինչ ինչ ընդհանուր սկզբունք.....	69
Ատենախօսական Շարժումնք.....	74
Շարժումնք Տեղւոյ.....	80
Շարժումնք Նմանողութեան.....	82
Շարժումնք Ուժգնութեան.....	84
Տասն և վեց շարժումներ պատկերացեալ.....	86
ԶԱՆԱԶԱՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ	
Ժանտախտէ բռնուած Անասունք.....	92
Գայլն և Գառն.....	94
Ի Քալապրա.....	95

Կոյր պատանւոյն վիշան	99
Բրուտոսի վրանին մէջ	101
Փոթորիկն և օձից քարայրն ի Բերու	105
Յառաջադէմն Գուրգէն	107

ԱԶԿԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒԱՅԻՔ

Տիգրան և Կիւրոս	113
Հայ ապրինք	117
Ողջոյն առ Խրիմեան	118
Երգ Աղատու թեան	120
Երգ Վարդան Մամիկոնէի	122
Երգ պանդուխտ պատանեկի	124
Ի սգալի մահ Չէյթունցի պատանւոյ	125

